

ԳՈՏԱՐ ՌՇՏՈՒՆԻ



ՀՈՈՄԻ ՓՐԿՎԱԾԸ.
ԿԱՐԴԻՆԱԼ
ԳՐԻԳՈՐ ԱՂԱԶԱՆՅԱՆ

ՀՏԴ 821.19-31 Ռշտունի
ԳՄԴ 84(52)-44
Ռ 588

Ռշտունի Գոհար
Ռ 588 Հոռմի փրկվածը. Կարդինալ Գրիգոր Աղաջանյան /
Գ. Ռշտունի.- Եր.: Լուսակն, 2022.- 236էջ:

«Յուրաքանչյուր հայ իր ժողովրդի մի մասն է», – իր լուսանկարի վրա այսպես է գրել Գրիգոր Աղաջանյանը Վիեննայի վանահայր Մեսրոպ Ապոզյակին:

Եզրաս արքեպիսկոպոս. *«Մենք ապրում ենք որպես մեկ ազգ նույն քրիստոնեական հավատով, բայց մի փոքր տարբեր ճակատագրերով»:*

Գիրքը ստեղծվել է Ախալցխայի և Ախալքալաքի հայերի բարոյական աջակցությամբ: Մի շարք հարցերի շուրջ որպես խորհրդատու, կամավոր մասնակցությամբ ընդգրկված է եղել «Նորավանք» հիմնադրամի գիտակրթական հայագիտական կենտրոնի ղեկավար, փորձագետ Արիստակես Սիմավորյանը:

Հեղինակը երախտագիտությունն է հայտնում իր դատերը՝ Անուշիկ Հասրաթյանին, գրքի հրատարակմանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր ինչ-որ կերպ նպաստել են գրքի ստեղծմանը՝ սկսած գաղափարից և վերջացրած իտալերենից թարգմանություններով, բոլոր հարազատներին, ընկերներին ու բոլորովին անծանոթ ջավախքցիներին, որոնք, իմանալով, որ գիրքը հայ նշանավոր տոհմիկ ջավախքցու մասին է, նյութեր են տրամադրել:

ՀՏԴ 821.19-31 Ռշտունի

ԳՄԴ 84(52)-44

ISBN 978-9939-899-61-9

© Գոհար Ռշտունի, 2022
© Լուսակն, 2022

ԱՌՍԶԱԲԱՆ

Հայ ժողովրդի կյանքում, ինչպես հայտնի է, հոգևոր-ազգայահայան կենտրոնական դերակատարում ունի Հայ Առաքելական եկեղեցին, որի կողքին, անբարենպաստ և ողբերգական քաղաքական հանգամանքների բերումով առաջացել են քրիստոնեական այլ դավանանքների հետևորդներ: Այս առումով Գոհար Ռշտունու «Հոռմի փրկվածը. կարդինալ Գրիգոր Աղաջանյան» գիրքը, որը հեղինակի տքնաջան աշխատանքի և մանրակրկիտ ուսումնասիրության արդյունք է, ներկայացնում է Հայ Կաթողիկե եկեղեցու և Վատիկանի ազդեցիկ քաղաքական ղեկներից մեկի՝ ծնունդով Զավախքից Ղազարոս Աղաջանյանի կյանքն ու գործունեությունը: Ժամանակագրական կարգով գրքի հեղինակը հիշատակում է նաև պատմական իրադարձություններ և դեպքեր, որոնք առնչվում են ջավախահայությանը, հատկապես հայ կաթողիկեների հոգևոր-եկեղեցական և սոցիալ-տնտեսական կյանքին:

Հայտնի իրողություն է, որ Մխիթարյան միաբանությունում, Կ.Պոլսում, Վատիկանում, Զմմառում, հետագայում՝ Հոռմի Լեռնյան վարժարանում և այլ երկրների կրոնական հաստատություններում հոգևորականներ պատրաստելու նպատակով Զավախքի հայ կաթողիկե գյուղերից ընտրվում էին ընդունակ պատանիներ, ովքեր հետագայում որպես եկեղեցականներ իրենց անջնջելի հետքն են թողել հայագիտության, գրականության, աստվածաբանության և այլ ասպարեզներում:

Այս համատեքստում արժե հիշատակել Հոռմում ուսանած, հետագայում Մխիթարյան միաբանության կողմից հրատարակվող հայագիտական, բանասիրական նշանակության «Բազմավեպ» գրական հանդեսի գլխավոր խմբագիրներ դարձած Վահան Հովհաննիսյանին (ծնունդով Ախալցխայի Նորշեն գյուղից) և Եղյա Փեչկյանին (ծնունդով Ախալքալաքի Ա-

լաստան գյուղից), ախալցխացի, Վիեննայի Միխայրյան վան-
քի սան, աստվածաբանության դոկտոր, Գերպայծառ Հ. Սա-
հակ Կոզյան եպիսկոպոսին, ալաստանցիներ՝ Հոռմի Լևոնյան
Քահանայապետական Հայկական վարժարանի սան, աստ-
վածաբանության մագիստրոս, ստալինյան հալածանքների
գոհ դարձած վրդ. Ստեփան Երոյանին և վերջինիս համագյու-
ղացի Լիբանանի Զմմառ գյուղի համանուն վանքի մեծավոր
Տ. Հովսեփ ծ. վրդ. Սարուխանյանին: Շարքը կարելի է թվար-
կել անվերջ, և բոլոր անունները կլինեն հարազատ և սիրված:

Արտերկրում կրթություն ստացած և հետագայում եկե-
ղեցական բարձր դիրքի հասած անձերից էր նաև Ղազարոս
Աղաջանյանը՝ Հոռմի կաթոլիկ եկեղեցու անկյունաքարային
դեմքերից մեկը, ում հաճախ կոչել են «պապ կարդինալ»: Օն-
վել է 1985թ. Ախալցխայում՝ սուխիսեցի Հարություն Աղա-
ջանյանի և ալաստանցի Յանդյան Իսկուհու ընտանիքում: Կր-
թություն էր ստացել Հոռմում, ուսանել էր փիլիսոփայություն,
աստվածաբանություն և իրավագիտություն: Քահանա ձեռ-
նադրվելուց հետո կարճատև առաքելություն է ունեցել Թիֆ-
լիսում, այնուհետ վերադարձել է Հոռմ, ուր դասավանդել է
Ուրբանյան Համալսարանում, զբաղեցրել է Լևոնյան վարժա-
րանի ռեկտորի պաշտոնը:

1937թ. Հ. Կ. Եպիսկոպոսաց Մինողը նրան ընտրում է
Տանն Կիլիկիոյ Կաթողիկե Հայոց Կաթողիկոս Պատրիարք
օժվել է Գրիգոր-Պետրոս XV անունով: 1946-ին ստացել է
կարդինալ բարձրագույն տիտղոսը, 1955-ին գլխավորել է
Վատիկանի Հավատի տարածման միաբանությունը: Լինելով
տասնյակ լեզուների փայլուն գիտակ և ազդեցիկ հոգևորա-
կան՝ նրան համարում էին մահացած Հովնան XXIII-րդ պա-
պի առավել հավանական փոխարինող: Թե ինչպես նա
չընտրվեց Հոռմի պապ, հանգամանալից լուսաբանել է Գոհար
Ռշտունին՝ մատուցելով այն յուրատեսակ գեղարվեստական
նշով:

Մեզ մնում է ավելացնել, որ որպես հոգևորական կարդի-
նալ Աղաջանյանը և՛ Ավետարանի քարոզիչ էր, և՛ եկեղեցու
պաշտոնյա, և՛ ուսուցիչ, և՛ շինարար: Հոգևորականի և հայրե-
նասեր հայի այս տարերքով օժտված՝ նա իր մահկանացուն է
կնքում 1971թ. մայիսի 16-ին՝ փակելով իր աչքերը հայրենի-
քից հեռու, յուր ծննդավայրի՝ պատմականորեն հայապատ-
կան Ջավախքի կարոտը սրտում:

Պատահական չէ, որ հաշվի առնելով նրա բազմամյա
վաստակն ու բարձրագագաթ մեծությունը՝ Պողոս VI-րդ
պապն այսպիսի գնահատական է տվել նրա մարդկային տե-
սակի մասին. «Անոր ազնուությունը, անոր զարգացումը, գե-
րագանց բազմալեզուարանի ձիրքերը, ընդարձակ հմտությու-
նը, անոր մտքի եւ սրտի յատկությունները, մանաւանդ անոր
հովուական առաքինությունները, զինքը ըրած էին՝ մեզի հա-
մար օրինակելի աշխատակից մը, որ չէր խնայէր ո՛չ իր ժա-
մանակը եւ ո՛չ ալ իր յոգնությունը, լաւագույն կերպով ծառա-
յելու համար Եկեղեցոյ: Պատմությունը պիտի ըսէ, թէ ի՛նչ կը
պարտին իրեն Քրիստոնէայ Հայաստանը, Կաթողիկէ Առա-
քելությունները, Ս. Աթոռը եւ ամբողջ Եկեղեցին»:

*Արեստակես Միմավորյան
Արևելագետ, թուրքագետ*

Առաջին ընթերցողի նախաբանը

Խորհուրդ եմ տալիս կարդալ տաղանդավոր գրող Գոհար Ռշտունու նոր գիրքը:

Այս գիրքը հայ ժողովրդի ճակատագրի մասին է, այն տարածքների, որոնք այժմ կոչվում են Ջավախք, Ջավախեստի: Նաև Ջավախքի հայերից մեկի ճակատագրի մասին, որն իր կյանքը նվիրել է Հայ կաթողիկե եկեղեցուն ծառայելուն, ով այս ոլորտում Հոռմի կաթողիկե եկեղեցու հիերարխիայում հասել է ամենաբարձր կոչմանը՝ հռոմեական կուրիալ կարդինալ կոչմանը:

Հեղինակի նախնիները գաղթականներ են Արևելյան Հայաստանից (Բգդիք, Ալաշկերտ): Նա մանրամասն նկարագրում է Ախալցխայում և Ախալքալաքում էրզրումից վերաբնակված հայերի գաղթի պատմությունը և կարդինալ Գրիգոր Աղաջանյանի կյանքի ուղին:

Աղաջանյանը դարձավ Հոռմի հերթական Պապ ընտրվելու թեկնածուներից մեկը և այս պաշտոնում ուներ ընտրվելու մեծ շանսեր: Սակայն, ինչպես գիտենք, չընտրվեց, այդ թվում՝ կարդինալի ազգությամբ ոչ իտալացի լինելու պատճառով:

Նույն մանրամասնությամբ Գոհար Ռշտունին նկարագրում է ԽՍՀՄ-ում կոմունիստական ղեկավարության կողմից ազգային խնդիրները լուծելու մտայն պրակտիկան, որն, ի վերջո, հանգեցրեց ազգամիջյան հարաբերությունների սրացմանը և միաժամանակ Վրաստանում հայերի վիճակի վատթարացմանը: Գրքում նա խոսում է ԽՍՀՄ ռեպրեսիվ մեքենայի մասին, որը ոչնչացրեց երկրի հսկայական թվով ականավոր դեմքերի, այդ թվում՝ եկեղեցու սպասավորների և մշակույթի այլ ներկայացուցիչների: Վառ փաստերն ի հայտ են բերում հռոմեական եկեղեցու կտրուկ բացասական (և փոխադարձ) վերաբերմունքը կոմունիստական ռեժիմի նկատմամբ և

ԽՍՀՄ-ին՝ հիմնական գործոններից մեկը, որը կանխեց կարդինալ Գրիգոր Աղաջանյանի՝ Հոռմի պապ ընտրվելուն:

Գիրքը կառուցված է բազմաթիվ իրական փաստերի վերլուծության վրա, բացահայտված է մշակույթի համար կործանարար ռեպրեսիվ գործելակերպը՝ կոմունիստական ղեկավարության կողմից: Այս առումով դա նշանակալի ներդրում է Ռուսաստանի և աշխարհի ոչ վաղ անցյալի պատմագրության մեջ և շահեկանորեն տարբերվում է բազմաթիվ այլ նմանատիպ պատմական շարադրություններից՝ ներկայացնելով պետության նորագույն պատմությունը այնտեղ բնակվող մեծ թվով մարդկանց համար, իշխանությունների չմտածված և ժողովրդի համար վնասակար որոշումների հետևանքները:

Այս ամենը Գոհար Ռշտունին մանրամասն և հուսալիորեն արտացոլել է հայության պատմությանը նվիրված իր նախորդ աշխատություններում, և այստեղ նա տպավորիչ կերպով ցուցադրել է իր տաղանդի փայլուն կողմերը՝ երևույթները նկարագրելով իրեն բնորոշ պատմելաձևով և հումորով:

Գիրքը հուզիչ է և հետաքրքիր: Ինչպես նշված է վերում, դրա փաստական հիմքը և հեղինակի պատմական վերլուծությունը թույլ են տալիս պնդելու, որ գիրքը կարող է առաջարկվել ընթերցողներին ոչ միայն որպես կարևոր պատմական փաստերի աղբյուր, այլ նաև ներկայացման պայծառ ձևով: Շատ հետաքրքիր է գրված. կոնկրետ պատմական իրադարձությունների փայլուն ներկայացումն ու զուտ մարդկային հատկանիշների նկարագրումն այնպիսին են, որ երբ սկսում ես կարդալ այն, անհնար է կանգ առնել:

Այս պատմության կարևոր կողմը նշանակալից պատմական փաստերի ներկայացումն է հռոմեական քրիստոնեական եկեղեցու պրակտիկայից և աշխարհի շատ էթնիկ խմբերի ներգրավվածությունը կաթողիկե հավատքի գրկում: Շատ դեպքերում դա արվում է հատուկ մեթոդներով. նրանց էմի-

սարներն ընտրում են մանուկներին, դասավանդում իրենց ուսումնական հաստատություններում, իսկ ամենատաղանդավորներին ու խոստումնալիցներին տանում են Հոռոմ, որտեղ եկեղեցական կրթական կազմակերպությունների համակարգում տալիս են նրանց ընդհանուր և կրոնական բարձր կրթություն պատրաստելով նոր էմիսարներ և սպասավորների նոր սերունդներ, որոնք իրականացնում են նոր մարդկային և տարածքային զանգվածներ Հոռոմի կաթոլիկ եկեղեցի մուտք գործելու գործընթացը:

Գարդինալ Գրիգոր Աղաջանյանը եղել է հենց այն երեխաներից, ովքեր անցել են կադրերի պատրաստման այս «տեխնոլոգիան»: Իր տաղանդի և հոգևոր ուժի շնորհիվ նա այնքան հեռուն գնաց՝ ստանալով հաջող և հիմնարար ուսուցում, որ դարձավ պապականության հիմնական հավակնորդներից մեկը: Եթե նա ընտրվեր Հոռոմի պապ, գուցե հայության ապագան դառնար նշանակալից տարբեր (գուցե նաև ողջ քրիստոնեական աշխարհի ապագան):

Գիրքը շատ տեղեկատվական է, հայ ժողովրդի պատմության էական հարցեր է շոշափում: Կրկնում եմ շատ գրավիչ և հետաքրքիր է:

Մասնվել Գրիգորյան

*Ռուսաստանի, Հայաստանի, Չինաստանի
գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս,
Լոմոնոսովի անվան Մոսկվայի
պետական համալսարանի
վաստակավոր պրոֆեսոր*

Գլուխ առաջին

Ո՞վ ենք մենք: Խաչը մեզ հետ, մենք միայն հավատ գիտենք: Օրը՝ հոգսով համակված, փոքրիկներով, վազք ու լաց... Չեն հասկանում, թե ինչու (կարծես ուսման պատրվակ) Կրաստանի գյուղերից ուղարկում են կրթվելու հարևան մայրաքաղաք...

Լեոնային թափանցիկ օդը կախարդորեն այնպես մոտեցրեց լեռնաշղթաների կատարյալ գծերը, որ քեզ կթվա, թե լեռներն ահա այստեղ են, ոչ հեռու, և մեկ ժամից կհասնես գլուխ պտտեցնող գմբուխտե լանջերին: Թեթևակի սպիտակեցված գագաթները վերջապես պատրաստվեցին լիակատար հալոցքին, առունները շուտվանից արագորեն հոսում էին գեղատեսիլ ձորերով: Գետի վրա որոտն էր պտտվում, շոգ ամառվա շեմին մայիսյան անձրևները առատորեն ջրում էին կարտոֆիլի քարքարոտ լեռնամարգերը:

Ծերունի Ստեփանը հենվել էր պարիսպին ու լսում էր որոտի դղիրող փորձելով անձրևի աղմուկից գուշակել, թե դեռ որքան է այն թափվելու գյուղի վրա: Եթե բերքն այս տարի հաջող լինի, հավանաբար, նա կկարողանա վճարել Ծուռ Արմենակին դեռ անցյալ տարվանից մնացած պարտքի մնացորդը:

Հարսանիքը հարսանիքով, բայց նույնիսկ խնամիները պետք է իրենց պարտքերը փակեն:

Երեխաները հավաքվել էին գյուղից ոչ հեռու մի քարե տնակի շուրջ և իրար հետ ոսկորներով խաղ էին անում՝ դրանք զցելով խոտերի մեջ, հաշվում գառան կոկիկ հղկված հողերը, իսկ մի քիչ ավելի մեծ տղաները սարսափելի պատմություններ էին պատմում միմյանց:

Հանկարծ գրո Գևորգի որդի Գալուստը վախից բղավեց...

Գրո Գևորգը գյուղից քիչ հեռու դարբնի գործ էր անում, իր դարբնոցը մի քանի գյուղ էր ապահովում, որոնցից ամե-

նամե՞ծը Ալաստանն էր, իսկ այնտեղի տղաները վախկոտներից չեն: Բնակիչներն իրենց Ալաստանը քաղաք են համարում, իսկ գրոն... ինչ ասեմ, սա քեզ խառն ֆրանկ չէ:

Եվ այժմ Գալուն, անմիտ հայացքը հառած Աստված գիտի, թե ինչին, ոտքը դրեց ջրի տակ թաքնված սուգածառի եզրին, որն անմիջապես շփոթեց սողունի հետ և վախենալի պատմություններ լսելուց հետո սարսափով լցված բղավեց: Նրա եղբայրը (իսկ նրանք ամբողջ ժամանակ միասին էին, որովհետև ալաստանցիները հայտնի էին իրենց բնավորությամբ և ծանր բռունցքներով) ցատկեց վտիտ Միմոնի վրա և սկսեց նրան դնգստել՝ մտածելով, որ Միմոնը հարվածել է Գալուստին: Ալաստանցիներն էլ հարձակվեցին Գևորգի որդիների վրա: Մի քանի րոպե հնչում էին թուրքական հայիտյանքներ խառնված հայկականի հետ:

Հանկարծ Գալուն բարձրացրեց խճողակը և հաղթական բղավեց.

–Ահա՛, նայե՛ք՝ ոչ մի օձ էլ չի, տեսե՛ք, թե ինչ է...

Տղաները զարմացած լուռ նայում էին նրան և ոչինչ չէին հասկանում:

Փոքրիկ Նապոլը, որն իր մոր հետ վերջերս էր եկել Ալաստան, ասաց.

–Տեսե՛ք, խաչ է...

Եվ իսկապես, հաստ ծայրով խճողակը իսկական խաչ էր, և բոլոր երեխաները ապշած նայում էին տեղի բնության զարմանալի ստեղծագործությանը: Նապոլը, շատ գոհ իր հնարամտությունից և բոլորի ուշադրությունից՝ մոտեցավ Գալուստին և հարցրեց.

–Գալո, որտե՞ղ է ձեր եկեղեցին: Որտե՞ղ եք գնում ձեր պաղրեին տեսնելու:

–Մեր պաղրենն ինքն է գալիս մեզ մոտ: Հայրս ինձ եկեղեցի է տանում միայն տոն օրերին:

Թեման փոխվեց: Ալաստանցիները բոլոր իրավունքներն ունեին պարծենալու. նրանց եկեղեցին մեծ է, և պաղրեն իսկական է, նա խոսում է մեր լեզվով, երբեմն նույնիսկ պարզ է խոսում: Իսկ հայերը՝ Տուրքխի գրո ֆրանկները, տոներին սպասում էին իրենց հորը կամ հանդիպում էին միանգամից մի քանի կնունքի ժամանակ: Տղաներից ավագը՝ Մեթոն, մտախոհ հարցրեց.

–Ա՛յ դուք խոսում եք մեր լեզվով, իսկ ձերոնք՝ թուրքերեն: Իսկ ինչու՞ է այդ դեպքում պաղրեն այցելում ձեզ: Դուք թուրք չե՞ք:

Գալուստն ու Գևորգը տարակուսած նայեցին միմյանց: Թուրքերեն խոսում է ամբողջ նրանց գյուղը, մամիկը այլ լեզու չի էլ հասկանում: Բայց մի թե նրանք թուրքեր են:

–Տե՛ս, խաչ ունեմ, ոնց թե թուրք եմ:

–Այդ դեպքում ինչու՞ ձեր աղջկան չտվեցին չեչոտ Կարապետին, – լրիվ անտեղի բղավեց մերժված Կարապետի վիրավորված եղբորորդին:

Տուրքխից երեխաները մեղավոր լուռ էին: Նրանք անտեղյակ էին, որ ոչ ոք աղջիկ չէր տա չեչոտ Կարապետին, հենց իրենք՝ ալաստանցիներն էլ չէին տա: Չէ՞ որ նա, չնայած մականվանը, ոչ միայն չեչոտ էր, այլև անհավատալի մեծ քթի տեր: Ասում էին՝ մանուկ հասակում ծառից ընկել է հենց քթի վրա, որն ուտել ու այդպես էլ մնացել է: Եվ նա ոտքը դեռ մի քիչ էլ քարշ էր տալիս... Բայց երկու գյուղ՝ երկու ամրոց, ինչպես երկու վիճող թագավորություններ: Եվ այդքան արատի տեր՝ Տուրքխում հակառակ գյուղից հարսնացու է գնացել ուզելու, և պարզ է՝ անհաջող:

Սկսեց մթնել: Ալաստանցիները տան ճամփեն բռնեցին, նրանք ստիպված էին ավելի երկար վազել: Եղբայրներն իրենց հետ քարշ տվեցին խաչածևը, որպեսզի ցույց տան մեծերին: Հենց այդ խաչով նրանք զարդարեցին ցածր մի «ոչ ոքի» տուն՝ արոտավայրում կորած, և գյուղացիները շտապեցին

այնտեղ մումեր վառել, հետո գառ մորթել: Աստիճանաբար տունը դարձավ գրավիչ վայր, և մոտակայքում նույնիսկ սառնորակ աղբյուր հայտնաբերվեց: Այսպիսով՝ այս վայրը կոչվեց Խաչի տուն, սկսեցին համապատասխան ձևով վերաբերվել, քանի որ Խաչի տուն է, հետևաբար սուրբ վայր է:

Նապոլը գնաց գրո Գևորգի մոտ՝ դարբնություն սովորելու և դարձավ դարբին շրջակա բոլոր գյուղերի համար: Իսկ նրա ավագ որդի Հակոբը մնացել էր առանց արհեստի, քանի որ ոչ մի արհեստ չէր ցանկացել սովորել:

–Ուզում եմ *սովորել*, – մի օր վճռական հայտարարեց նա, ինչը նշանակում էր՝ միայն համալսարան:

Իսկ սովորելու համար գնում էին քաղաք, որը բավականին հեռու էր: Այնտեղ միայն հայեր էին ապրում ու կառավարում, և այստեղից շատերն էին ուզում ապրել այն քաղաքում. պատճառներ կային... Տարածաշրջանը սահմանամերձ գոտի էր, և բոլոր բնակիչները, որոնք ուսման կամ աշխատանքի համար մեկնում էին Ջավախքից, եթե գրանցված էին սահմանամերձ գոտուց դուրս, ինքնըստինքյան գրկվում էին հայրական տուն ազատորեն վերադառնալու իրավունքից: Շատերը հետ չէին վերադառնում, մնում էին Հայաստանում:

Իսկ կողքի գյուղերում, օրինակ, Վալեում, իշխանություններն ամեն ինչ անում էին, որ հայը դառնա ուղղափառ վրացի ու հաճախի իրենց եկեղեցին: Իսկ եթե չէիր ուզում խաչը փոխել ուրիշի խաչով, առաջարկում էին միայն ազգանունը մի փոքր երկարացնել՝ ձևափոխել իրենց ձևով: Օրինակ Ուդայում մեծ խմբով գնացին ստորագրելու. Թումանյանը դարձավ Թումանիշվիլի, Իվանյանը՝ Իվանիշվիլի, որ վրացուն նմանվի, իբր շատ բան հեշտացնում էր: Անձնագրում «վրացի» գրելը մի քիչ ավելի հեղինակավոր էր թվում, գուցե պաշտոն տան... Բայց մի թե միայն Ուդայում:

Ասել, թե հարևանությամբ ապրող վրացիներն ավելի լավ են ապրել, սուտ կլինի: Բայց որոշ արտոնություններ ունեն:

Տարեցները, որոնց սրտով չէր այդ խաչափոխությունը, շշուկով իրար հարցնում էին, թե մի թե թուրքերն իրենցից նույնը չէին պահանջում:

Հետո սովորելու նպատակով մեկնածները այնտեղ էլ մնում էին, զալխս էին այցելում հայրենի սարերն ու հարագատներին, որոնք բոլորն ուրախ էին:

Ամբողջ ամառ տատիկները համեղ կերակուրներ, կարկանդակներ, լեռնային բուրավետ խոտաբույսերով թեյ էին պատրաստում:

–Մամիկ, ինչո՞ւ են Տուրխցի ապրողներին «գրո» անվանում:

–Որովհետև մենք խաս ֆրանկ ենք, – անտրամաբանական, բայց համոզիչ պատասխանում էին մամիկները և ավելացնում.

–Թուրքերը բոլորին առաջարկեցին՝ կա՛մ հավատը փոխեն, կա՛մ լեզուն: Նրանք լեզուն փոխեցին: Մենք էջմիածնեցիների նման չենք: Նրանց բարքերը ուրիշ են. աղջիկները հարսանիքից առաջ կարող են մի քանի ուզող փոխել, – այստեղ մամիկները շուրթերը սեղմում էին. նրանց ի նչը սիրես: Եթե անցնես նրանց եկեղեցու մոտով, ու մի փուշ ոտիդ կաչի, չհամարձակվես կռանալ, կմտածեն, որ դու խոնարհվում ես իրենց եկեղեցու առաջ...

Այստեղ էլ կային էջմիածնեցիք, շրջակա գյուղերում քիչ չէին, բայց այնտեղ՝ Երևանում, կարծես թե բոլորը էջմիածնեցի էին: Վրացիներն ուղղափառ են, դե, սա հասկանալի է. իշխանությունները ուժով փորձել են իրենց հավատին բերել: Էջմիածնեցիներն ավելի հանգիստ էին, թեև վրացիները նրանց էլ էին համոզում, պաշտոններ առաջարկում, չհամաձայնողները գնում էին Հայաստան: Եվ արդեն ամբողջ գյուղով այլևս չէին հիշում, որ իրենք հայ են...

Գլուխ երկրորդ

*Խաղազինվոր ենք ընդմիջտ օտարների խաղերում,
խայտառակ խաչ ենք կրում...*

*Փրկություն ենք որոնում, մի իշխանից մյուսն ընտրում և
դարավոր ճանկերից ոչ մի կերպ չենք ազատվում...*

Կարապետ Բագրատունի

Փոքրիկ ցածր տնակը, որը կարծես ձուլվել էր հողի հետ, ցնցվում էր համազարկային հարվածներից: Գլուխը սեղմած ձեռքերի մեջ՝ ընտանիքի հայրը նստած էր անկյունում և շրթունքներն էր շարժում. թվում էր՝ անվերջ աղոթք է ասում: Մնացածը պառկել էին հատակին, ծածկվել բարակ վերմակներով: Բայց աղմուկը կարծես թե մարում էր: Ծոված դռան հետևից հայտնվեց տեղացի աղյուսագործ Թորգոմի գանգուր գլուխը:

– Գևորգ, բոլորդ գնացեք եկեղեցի, սուրբ հայրը կանչեց հավաքվելու, սպասում է:

Ծերունիները դուրս եկան իրենց տներից, վախեցած կանայք շորորալով իսկույն բռնեցին եկեղեցու ճամփան: Մեծավորը կանչում է:

Թուրքերը տղամարդկանց քշել էին խրամատներ փորելու, որպեսզի ուժեղացնեն բերդը, որի անկման համար քրիստոնյաներն այդքան աղոթում էին: Խրամատի գործով թուրքերը միշտ քրիստոնյաներին էին քշում: Բայց ռուսները առաջ էին գալիս, և գյուղերով փրկարար լուր թևանցեց՝ Կարսը գրավեցի ն:

– Դեռ ինչքա՞ն պիտի տանջվենք, տե՛ր Կարապետ, – գրեթե անձայն հարցնում էին գյուղացիները:

– Այս երկրում, որը նրանք պղծեցին, տառապանքը չի դադարի, լսու՛մ էք: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են և իրենց մեջ ուժ են գտնում Ռուսաստանում տուն և հող ունենալ,

թող գրանցվեն հիմա. ռուս զինվորականները ցուցակներ են կազմում օգնության համար:

– Տուն ու հող, – զարմացած ու հույսով ձայնակցեցին շուրջը:

– Հանգի՛ստ, լռե՛ք, այնտեղ վերջում չի լավում: Հարգելիներ՛ս, ռուս ցարը խոստացել է հող տալ, թույլ է տալիս այնտեղ տուն կառուցել, ոչ ոք էլ մեզ չի մորթի, կողոպտի, սպանի ու սկզբում՝ մի քանի տարի, ոչ մի հարկ չի ուզի:

Ուրիշ ոչ մի թագավոր ոչ կանչեց, ոչ խոստացավ...

Հյուծված, խիստ ու մռայլ դեմքերով մարդիկ հույսով ու հավատով նայում էին իրենց միակ առաջնորդ արքիեպիսկոպոս Կարապետ Բագրատունուն: Նա շարունակեց ասելով.

– Մյուս բոլոր գյուղերում էլ տարածեք՝ խոստացել են նույնիսկ մեզ ձեր ու սայլեր տալ մինչև Ախալցխա: Հնուց այնտեղ շատ հայեր են ապրում իրենց համար, ու ոչ մեկին ոչ ոք ձեռք չի տալիս: Ե՛վ հայերը, և՛ վրացիները ռուսական ցարի պաշտպանության տակ են: Լսե՛լ էք, թե ռուս գեներալները քանի հայ ընտանիք են վերաբնակեցրել: Բոլորը տեղավորվել են, և թագավորը սկզբնական շրջանում նույնիսկ փող է տալիս: Շուտով առաջին բերքը կհավաքեն: Ամեն ինչ տալիս են: Միայն թե հողը Աստու կամքով պտղաբեր լինի, ամեն ինչ կաճեցնենք նրանց լայնարձակ տարածքներում:

Սրբազանը նկատի ուներ գաղթականների այն քարավանը, որ վերահսկվում էր գեներալ Լազարևի կողմից՝ չնայած «պարսկական կառավարության կողմից Ղարաբաղ տեղափոխվել ցանկացող հայերի նկատմամբ ոտնձգություններին» (Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Ա.Ս. Գրիբոյեդովի գրությունից կոմս Ի.Ֆ. Պասկևիչին):

Թուրքմենչայի պայմանագրից հետո այն բոլոր հողերից, որոնք մնացին Պարսկաստանին, դեպի Արևելյան Հայաստան, այսինքն՝ Ռուսաստան, երկար ճանապարհ ընկան հյուծված ու հիվանդ հայերով լի սայլերը՝ Թավրիզի, Մարա-

ղայի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի և Մակուի հայերի մոտ 40.000 ընտանիքները: Վերաբնակիչների մեծ մասը բնակություն հաստատեց Էրիվանի, Ղարաբաղյան և Նախիջևանի խանությունների տարածքներում: Այս հայերի վերաբնակեցման գործում գլխավոր հրամանատար էր նշանակվել գնդապետ Լազար Լազարևը:

Հռոմեական Աստծուն և ռուս ցարին հավատացող արքեպիսկոպոսի մտքով անգամ չէր անցնում, թե խոստացածի դիմաց ինչ քարքարոտ տարածքներ են նրանց առաջարկելու, որպեսզի յուրացնեն ու շենացնեն: Բայց նրա հոտն արդեն հոգնել էր սպանված եղբայրների, ամուսինների ու երեխաների դիերի վրա լաց կապելուց, հրկիզված տներից մի այլ տուն վազելով: Միակ հույսը ռուսական ցարն ու նրա քաջարի գեներալներն էին: Իրենց բաժին հասավ գեներալ Պասկևիչը: Կարսի անկումից մի քանի օր անց հանձնվեց Էրզրումը՝ հիևավուրց հայ Կարինը:

Հետո Պասկևիչը վերցրեց Ախալքալաքը, որից հետո նետվեց Ախալցխայի անառիկ բերդը, որ կանգնած էր բարձր լեռներում:

Կատաղի դիմադրություն ցույց տալով և զգալի վնաս ու կորուստներ պատճառելով՝ բերդը պաշտպանում էր մի բազմահազար կայազոր, կազմված լազերից, աջարներից, չերքեզներից: Իսկ ռուսներն ընդամենը մի բուռ քաջեր էին: Բերդ հասնելու համար Պասկևիչը հրամայեց հրդեհել տները: Բոցը պարում էր տանիքների վրայով և ակնթարթորեն տնից տուն տարածվեց դեպի կաթուղի եկեղեցի, ուր սուրբ հովանների տակ թաքնվելու հույսով փախել էին հայերն ու մյուս քրիստոնյաները՝ հույներ, վրացիներ: Հետաքրքիր է պատերի վրա էր հույսները, թե՛ Աստծու:

Չնայած սաստիկ դիմադրությանը՝ կրակոտ պաշարումը ստիպեց թուրքերին հանձնել բերդը: Ռուսների հետ հուսա-հատ կրվում էին տեղի քրիստոնյաները՝ հայերն ու վրացիները:


րը: Բարձր գնահատելով հավատակիցների օգնությունը՝ Պասկևիչը կայազորի պետ նշանակեց գեներալ-մայոր իշխան Բեյբուծովին:

Իսկ հետո Ադրիանոպոլիս-Էդիրնեում՝ Օսմանյան կայսրության երկրորդ մայրաքաղաքում, սուլթան Մահմուդ II-ի Մեծ վեզիրը ստորագրեց Ադրիանոպոլիսի հայտնի պայմանագիրը, ըստ որի՝ Կարսը, Էրզրումը, Բայազետը, Մուշը, Արդահանը, Ալաշկերտը ռուսները հետ հանձնեցին: Եվ այդպիսի արյունով վերցրածը հետ զիջեցին թուրքերին... Հետո բոլոր հայերին այնտեղից կվտարեն, բայց ռուս «բարի» ցարը Ռուսաստանին մի ամբողջ ծով կավելացնի թուրքական Փոթիով մինչև Անապա: Ինչպես է դա ստացվում (և այդքան լավ) թուրքերի մոտ, անհնարին է հասկանալ՝ պարտովել պատերազմում, բայց և այնպես ուզածը ստանալ:

Հայտնի չէ, թե ինչպես է ընկել թուրքերի ձեռքը հայ կաթուղիկների առաջնորդի «Կարնոյի հայերին» կոնդակը՝ ուղղված արքեպիսկոպոսին, որտեղ կաթողիկոսը կոչ է արել իր բոլոր ծխականներին ոտքի կանգնել կովելու ռուսների կողմից և աջակցելու նրանց: Բայազետում և Կարսում ռուս զինվորների շարքերում կովել են ավելի քան երկու հազար հայեր: Էրզրումում, Բայբուրդում և Գյումուշխանում, որտեղ էլ որ հայտնվեին ռուսական դրոշները, հայերն ու հույները խզում էին իրենց դարավոր հարաբերությունները թուրքերի հետ:

Էրզրումի հայերին դաժան հաշվեհարդար էր սպասվում՝ որպես պատասխան ռուսներին օգնելու համար: Արյունարբու թուրքերը պատրաստ էին ոչնչացնել բոլոր հայերին, բոլորին, ով կհանդիպեր...

Կարապետ Բագրատունին հրաշքով կարողացավ կաշառել թուրք տոլմաչին (որն, ինչպես և բոլոր թուրքերը, ազահ և կաշառակեր էր), ու վերջինս այնպես թարգմանեց, որ կանխեց օսմանյան կառավարիչների և փաշաների զայրույթը, այլպես հայերին կսպասեր Սուրբ Բարդուղիմեոսի զիշերը:



Ճիշտ է, մահապատիժը փոխարինվեց էրզրումի շուրջը հսկա խրամատ փորելով, գիշեր-ցերեկ փորելով, Կարապետն էլ իր հոտի հետ միասին: Մխականները, նրան հարազատ համարելով, անվանում էին Մեծավոր:

Բայց թուրքերը, այնուամենայնիվ, բռնեցին կաթոլիկ քահանաներին, կտրեցին նրանց մորուքները և ապա ուղարկեցին Անատոլիա: Ավելին, լուրեր տարածեցին, թե այս արքայի համար պարտական են տեր Կարապետի դավաճանությանը: Ա՛խ, ինչքան են թուրքերը սիրում (և կարողանում) սուտ լուրեր տարածել. նրանց հաց մի՛ տուր, սուտ ասել տուր: Ինքը՝ արքայիսկոպոսը, երեք օր անցկացրեց Մանիոլյանների նեղ, խոնավ նկուղում, մինչև որ ռուսները հասան: Բագրատունին անմիջապես մաքսավորների միջոցով նամակ է ուղարկեց ռուս գեներալին, որտեղ մանրամասն նկարագրել էր քաղաքի հատակագիծը, թե ինչպես կարելի է այն վերցնել: Ուրիշ ինչպե՞ս նրանք կարող էին խուսափել մահապատժից կամ կենդանի մնալ, բայց ատելի կեղեքիչների հետ:

Այդ նամակը Պասկևիչին փոխանցել է Գաբրիել Պատկանյանը՝ Ռաֆայել Պատկանյանի պապը (Պատկանյանների ընտանիքը եկել է Կիլիկիայից, որտեղ շատերը կաթոլիկ էին): Իսկ Պասկևիչին թարգմանել է կաթոլիկ վարդապետ Սերովբեն, ով հետագայում ընդունել է առաքելական աստիճանը՝ թողնելով Սուրբ Էջմիածնին Ախալքալաքից հյուսիս ընկած բավականին լավ հողահանդեր և գյուղեր: Այնպես որ, կարինցիներն այլ ելք չունեին...

Նույնիսկ Պասկևիչը ինքնիշխանին ուղղված իր նամակներում տխրությամբ գրել է. «Աղբիանապոլսի պայմանագիրը հայերին ավելի սարսափելի վիճակի մեջ գցեց», և նա մանրամասն նկարագրեց, թե ինչպես 800 հայից բաղկացած մի խումբ իրենց արքայիսկոպոսի գլխավորությամբ օգնել է ռուսական բանակին:

Բայց թագավորը գործում էր իր պետության շահերից ելնելով և պարզապես պարտավոր էր երկիրը մեծացնել դեպի ծովային ելք ունեցող մոտակա տարածքներով, թեև քրիստոնյաների ոսկորների վրայով, որոնք անհիշելի ժամանակներից ապրել են հենց այդ տարածքներում: Հավերժ են ռուս թագավորն ու Ռուսաստանը՝ մի հսկայական, ընդարձակ և անմարդաբնակ երկիր: Թող բնակվեն թեկուզ այն մեռած հողերում. նրանք կարող են ամեն ինչ անել՝ և՛ առևտուր, և՛ հերկել, և՛ ցանել:

Ո՞վ կարող էր այն ժամանակ մտածել, որ նույնիսկ Ռուսաստանն ու նրա ցարը հավերժ չեն: Իսկ ի՞նչ կարող էր անել պարտաճանաչ Պասկևիչը: Կայսրը վերադարձրեց քաղաքները թուրքերին, իսկ բնակիչներին, որոնք հավատում էին ռուսական զորքին, թողեց, որ թուրքերը նրանց կտոր-կտոր անեն: Պասկևիչն առաջարկեց ռուս-թուրքական պատերազմների սովորական դասավորությունը՝ Արևելյան Հայաստանը և նվաճված Ախալցխան ու Ախալքալաքը բնակեցնել հայերով՝ որպես երախտագիտություն ռուսական գեներալի հաղթանակի գործում նրանց ավանդի համար:

Նիկոլայ Առաջինը արտահայտեց իր բարձր միապետական համաձայնությունը: Համազգային գաղթը կայսրի համար օտար չէր, նույնիսկ՝ սովորական: Չնայած մի շարք կոնֆլիկտային իրավիճակներին՝ Պասկևիչը (փորձելով ազատվել որոշ իրեն խանգարող անհատներից, օրինակ՝ Լազարևից կամ Ներսես արքեպիսկոպոսից) անձամբ որոշեց իր ձեռքում հայտնված գումարները բաշխել քրիստոնյա բնակչության հրատապ կարիքների համար. «Ձերդ գերագանցություն, խնդրում եմ նկատի ունենալ, որ առանց կայսրի հատուկ թույլտվության... Բայց հանգամանքները թույլ չտվեցին նույնիսկ չնչին ուշացմանը: Պարսիկների հետ իմ վերջին բանակցությունների ընթացքում կարողանալով ձեռք բերել 400.000 արծաթյա ռուբլի՝ ես համարձակվեցի մտածել, որ չեմ են-

թարկվի ամենատղորմած ինքնիշխանի գայրույթին, եթե բաժանեմ այդ գումարի մի մասը նորին մեծություն քրիստոնյաների հպատակություն ձեռք բերելու համար, որպեսզի ազատագրվեն մահմեդական լծից»։ (Պասկևիչի գլխավոր շտաբի պետ Ի.Ի. Դիբիչին գեկույցից, 1828 թվականի մարտ)։

Մեկ տարի անց նմանատիպ հանգամանքները ստիպում են Պասկևիչին՝ դիմելու ինքնիշխանին մի գեկույցով, որտեղ գրել է. «Ես համարձակվում եմ թույլտվություն խնդրել, որպեսզի իրավունք տամ նրանց բնակությունը հաստատելու Կրաստանում և հայկական և նույնիսկ Գովկասի տարածաշրջանում»։ «Արժանապատիվ, ամենատղորմած տիրակալ, – գրել է Պասկևիչը կայսրին, – Ձեր ողորմած ուշադրությունը դարձրեք այս դժբախտ գոհերի վրա և թույլ մի՛ տվեք, որ դա տեղի ունենա, այլապես օսմանցիների ինքնավարությունը վրեժխնդիր կլինի նրանցից այն ջերմության համար, որը նրանք տվել են Ռուսաստանին»։

«Համոզված եմ, – գրել է թագավորը, – որ Ձեզ վստահված տարածաշրջանում մարդկանց այդքան զգալի բազմապատկումը կլինի Ձեր կարգադրանքի շնորհիվ և օգտակար՝ կայսրությանը»։

Իսկ 1829 թվականի աշնանը զիննախարարը Պասկևիչին գրել է. «Ինքնիշխանը հավանություն տվեց այդ գաղափարին՝ տեղափոխելու 10.000 հայի և բնակեցնելու նրանց Ախալցխիում և շրջակա տարածքներում»։ Այս հարցի լուծման համար հրամայվեց ծախսել Պասկևիչի ռազմական արշավից մնացած գումարը, և ավելացրեց, «որ սա չափազանց օգտակար կլինի սահմանները պաշտպանելու համար»։

Իհարկե, կենդանի վահան սահմաններում... Բոլոր ժամանակներում ուժեղները կարողացել են թաքցնել իրենց արարքները թույլերին օգնելու մասին գեղեցիկ խոսքերով՝ հանուն սեփական շահերի՝ նրանց ստրուկ դարձնելով։

«Նորին մեծությունը իր հույսերը փոխանցում է Ձեզ, Ռուսական կայսրությունը հետաքրքրված է կայսրի հավատարիմ հպատակներով, ուղղափառությունը պարտադրողական չէ, բայց մենք պաշտպանում ենք հավատակիցներին մեր արյունով»։

Գլուխ երրորդ

Մեր դարավոր ճակատագիրը՝ հեռվից դրախտն է գայթակղում, տեղից տեղ է մեզ տանում: Ի՞նչ կարող ենք մենք անել: Չաշտագլոր ենք, այո, դառը բախտն է մեզ տանջում՝ արմատներ ենք տարածում օտարների աշխարհում...

Երեխան համարյա չէր լացում: Մայրը մոտեցրեց դեմքը՝ շունչը ստուգելու: Փառք Աստծու, փոքրիկին հասցրին մկրտել. հիմա արդեն հաստատ ողջ կմնա: Մեծավորը, վերցնելով երեխային իր գիրկը, հագիվ խուսափեց նրա տաք շիթից ու ծիծաղեց.

–Տղան հաջողություն կբերի: Աստծո կամոք մենք արդեն ամռանը կկարողանանք սայլեր բեռնել: Առաջին ընտանիքները շուտով ճամփա դուրս կգան:

–Հա՛յր սուրբ, թուրքը խորամանկ է, թուրք էլ կմնա, մենք շատ քիչ գենք ունենք, իսկ պարկուճ ընդհանրապես չի մնացել, – ձայնը բարձրացնելով ասաց Համբարձումը:

–Դուք գենք կունենաք, իսկ Պասկեվիչը խոտացել է ուղեկցող սպաներ տրամադրել: Թե չէ քրդերն ու լազերն արդեն պատրաստվել են. հոտ են առել, թալանի մեռած են, – հանգստացրեց սուրբ հայրը և դարձավ բարձրահասակ ծերունուն.

–Բալասա՛ն, այրի Մանուշակի տղան նորից հիվանդացավ, եկեղեցու բակում մի լավ էշ կա, Մկրտիչին տար Տաք աղբյուր, թող մի քիչ տաք ջրի մեջ նստի հիվանդությունը դուրս գա:

–Հա՛յր սուրբ, Արեգնազանիս ամուսինը ուզում է գնալ Լիբանան: Ասում է՝ բարեկամ ֆրանկներն այնտեղ լավ խանութ են բացել, որպես գործավար կվերցնեն:

–Օրհնե՛ք, կու՛յս Մարիամ, Սուրբ Աստվածածին, նրա ուղին և հաջողություն՝ ն տվեք Լիբանանում մեր հավատացյալ եղբայրներին:

–Բայց, սու՛րբ հայր, – լացակումած բացականչեց ծնողը, – ես նրանց այլևս չեմ տեսնի, եթե նրանք մեզ հետ չգան: Թո՛ռներս մեր եկեղեցում են սովորում, ես ինքս էլ եմ գրագիտություն սովորում նրանց հետ:

–Հանգստացի՛ր, Նապոլեոն, թող այնտեղ փրկվեն, իրենց հավատը պահեն, միայն թե իրենք ողջ մնան: Ձեր աղջիկը պետք է ընդունի իր ամուսնու ճակատագիրը: Իսկ դու մնում ես տղաներիդ հետ, պատերազմը հո անվերջ չի՞ տևի, – վարդապետի ձայնը դողաց, և աչքերը նույնպես խոնավացան: Արդյո՞ք հավատաց իր ասածին:

Ժողովուրդը հավատում էր Փրկչին և հարգում էր իր հովվին: Երբ սովն ու համաճարակը պտտահողմով մի քանի տարի առաջ պարուրեցին Էրզրումը, և մարդիկ անցան արոտավայր, կերան այն, ինչ կար ոտքերի տակ՝ արմատներ, տերևներ, կենդանիների աղիքներ, եպիսկոպոսը ամբողջ վիլայեթի եկեղեցիների հացահատիկի պաշարները բաժանեց հիվանդներին և աղքատներին՝ դրանով իսկ իր հոտը փրկելով սովից: Էրզրումի գավառում կային չորս հարյուր հայկական եկեղեցի և ավելի քան հիսուն վանք: Իր քարոզների ժամանակ նա ծիսականներին անընդհատ հրահանգում էր.

–Տքնաջա՛ն աշխատեք: Միայն աշխատանքն ու գրագիտությունը մեզ կփրկեն:

Ժամանակին արքեպիսկոպոսը շատ խելամտորեն մոտեցավ նյութական ապահովմանը. նա հիմնեց մի ամբողջ տնտեսություն, որը դժվար տարիներին նրան շատ օգնեց: Երբ Կարապետը 1811 թվականին, արդեն արքեպիսկոպոսի աստիճանով, ստացավ Էրզրումի հոտը, գրեթե բոլոր վանքերը և եկեղեցիները թուրքերի ձեռքում էին. խլել էին «պարտքերի» դիմաց: Կարապետն իր խնայողությամբ և նույնիսկ առևտրային շրջանառությամբ կրկնապատկեց եկեղեցու եկամուտները և դրանք օգտագործեց վանքերը հետ գնելու ու տառապյալներին օգնելու համար:

Շատ լավ հասկանալով կրթության դերն իր ազգի կյանքում, երբ դեռ ոչ մի թուրքական դպրոց չկար, նա դպրոց բացեց երեխաների համար՝ անվանակոչելով իր անունով Կարապետյան: Այս դպրոցում աղքատների կրթությունն անվճար էր, հազուստն ու սնունդը՝ նույնպես:

«Քեզնից թշնամիների առաջնորդությամբ ոտքով դուրս եկան, բայց Աստված նրանց կրերի քեզ մոտ փառքով բարձրացած, ինչպես թագավորի որդիների. Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին, մեր մեջ սկսեց ազատագրման գործը: Սկսվել է Նոր էլքը: Սա էլք չէ Եզիպտոսի կամ Բաբելոնի ստրկությունից: Նոր էլքը մեզ ազատում է սատանայի իշխանությունից և մահից. սա էլքն է այս աշխարհից և նրա գործերից: Ով մկրտվեց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, այլևս այս աշխարհին չի պատկանում: Մենք բոլորս շարժվում ենք դեպի բոլորովին նոր հորիզոններ: Քարոզ Գալուստի երկրորդ կիրակի. «ԱԶԱՏՈՒՄ»: Էրզրումի հայ կաթողիկոսների հովիվ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին»:

Վերջապես ավարտվեցին բոլոր նախապատրաստությունները: Որոշ ընտանիքներ Գյումուշխանից, չնայած ցրտին ու վատ եղանակին, ուշ աշնանը ճանապարհ ընկան դեպի Ծաղկայի մոտ գտնվող վրացական գյուղերը, որտեղ նույնպես հայեր էին ապրում: Իսկ կարսաբնակներն իրենց եպիսկոպոս Ստեփանոս Խաժակյանի հետ ընտրեցին մերձավոր Գյումրին և Լոռի-Փամբակը: Բայազետցիները ազնվական քաղաքացի Մկրտիչ Արծրունու գլխավորությամբ ընտրեցին Սևանն ու նրա շրջակայքը:

Իսկ Էրզրումի մեծերը որոշեցին մինչև գարուն ճանապարհ ընկնել դեպի Ախալցխա: Նրանց գլխավորում էր արքեպիսկոպոս Կարապետ Բագրատունին:

Տեսնելով, թե ինչ անհամբերությամբ են հայերը պոկվել թուրքական ճնշումներից՝ ցարական կառավարությունը անգամ չի էլ ջանացել՝ փոխհատուցելու նրանց այն թշվառ ու-

նեցվածքի համար, որը նրանք ունեին և չկարողացան իրենց հետ տանել, մինչդեռ թուրքերը հավաքվել էին իրենցից մի քանի օրով հետ գրաված տներում և շարունակ պահանջում էին մեծ գումարով գնել իրենց կավաշեն տնակները:

Ամենամեծ խումբը Էրզրումցիներն էին: Նրանք երկար ձգձգեցին և, վերջապես, 1930 թվականի մայիսին թողեցին պատմական Բարձր Հայքը... Երկու շաբաթում Էրզրումի շրջակայքի հայկական գյուղերը դատարկվեցին:

Նրանց հետ քաղաքից հեռացան նաև ռուսական զորքերը: Տուն ու տեղ դրած ծաղկուն գյուղերից շարժվում էին սայլակառքերի շարասյունները... Արծաթիից, Ռապատից, Նորշենից, Բասենից, Խնուսից... Դժոխք դարձած հայրենի տներից դեպի անհայտ դրախտ:

Միամիտ պարզությամբ ռուս սպաները որպես սայլորդ վարձեցին գող ու լկտի լեռնաբնակներին:

Սայլերն ու կառքերը ձգվում էին գրեթե մինչև հորիզոնը, շուրջբոլորը լցված էր բազմաթիվ անիվների ճռռոցով, տղամարդկանց ու երեխաների աղաղակով, իսկ սայլերի կողքին՝ անձրևի ու քամու տակ, քայլում էին տխուր, անվստահ մարդիկ (երբեմն հանդիպում էին նաև ռուս ձիավոր սպաներ): Առավոտյան լուսաբացը ոսկեզօծեց տեսանելի եկեղեցիներն ու մզկիթները:

–Եկա՛նք: Փա՛ռք Աստծո, մենք հասե՛լ ենք: Մեծ քաղաք է, բա ասում էին՝ գյուղ է:

–Չէ՛, ժողովու՛րդ, սա Կարսն է:

Սայլերը շրջվեցին դեպի մի կողմ և կանգնեցին: Կառապանները, նախապես ստանալով լրիվ գումարը, անմիջապես իրենց զցեցին շուկայի խորքը՝ խայտաբղետ ամբոխի մեջ, և անհետացան: Երեկոյան պարզ դարձավ, որ ողջ քարավանը դատապարտված է Կարսում չնախատեսված կանգառի փորձությունը:

Ավագները դժվարությամբ լեռնանցքներով ու կիրճերով անցնելու համար նոր ուղեկցորդներ գտան և հազիվ երկու շաբաթ անց նորից ճանապարհ ընկան դեպի Ախալցխա:

–*Ձե՛րդ գերազանցություն, Կարսում մենք պետք է նոր կառքեր գնե՛ինք: Դրանցից չորսը ես բռնեցի եկեղեցական գույքով:* (Փաստորեն, դեռ ավելին, տասներեք սայլ կար): *Ես խնդրում եմ Ձեր օգնությունը: Ախալցխայում հայեր վաղուց են ապրել, և այնտեղ կան նաև եկեղեցիներ: Բայց եկվորների համար, եթե կայսրը և Ձերդ գերազանցությունը դեմ չեն, մեզ մեկն էլ է պետք:* Առայժմ մեկը, – մտածելուց հետո ավելացրեց քահանան:

–Ինչպիսի՛ մարդիկ եք դուք, բայց, – Պասկևիչը ծիծաղեց, ուր էլ որ գնաք, եկեղեցիներ ու դպրոցներ եք կառուցում, որից հետո լրջանալով ասաց, – ուրեմն դուք կաթուղի եք, եթե չեմ սխալվում:

– Քրիստոսը մեկն է, Ձե՛րդ գերազանցություն: Իսկ եկեղեցական արարողություններն ու ժամերգությունները մեր լեզվով ենք կատարում, որ ժողովրդին հասկանալի լինի: Մեր ժողովուրդը հնազանդ է ու աշխատասեր: Մկրտվել է և հավատում է:

–Ուրեմն դուք հնազանդվում եք Հռոմի պապերին, այնպես չէ՞:

–Հռոմի պապը հեռու է, Ձե՛րդ բարեձննդություն, իսկ Ռուսաստանը մոտ է, – խուսափողաբար փիլիսոփայեց Բագրատունին, – մեր նախնիները բոլորն էլ նույն հավատքն ունեին: Մե՛կ պարսիկների հետ են կռվել, մե՛կ թուրքերի, որ մեզ կռույ չտան. ունիա ունենք, ունիա: Առանց գենքի, առանց ռազմիկների իմ ժողովուրդը չափազանց թույլ է: Թուրքերը մորթելու են մեր վերջին մանուկին, մեր ամբողջ հույսը մեր ազատարարի՝ ռուս կայսրի վրա է:

Կարապետը ոտքի կանգնեց ու խաչակնքեց:

–Լա՛վ, հա՛յր, ես հասկանում եմ քեզ: Ռուսաստանը ոչ միայն մոտ է, նաև՝ ձեզ հետ է, – անկեղծորեն արտասանեց Պասկևիչը:

Շրջապատի բնությունը ցնցող էր իր աներկրային գեղեցկությամբ, նույնիսկ մոայլ երգումացիները դա նկատեցին, ու նրանց դեմքերը պարզվեցին շուրջը նայելիս: Զմրուխտե մարգագետիններ ու արոտավայրեր, շուրջբոլորը կանաչ՝ ծածկված վրացական՝ զարնանային փթթուն ծաղիկներով: Մայիսյան անձրևներն ու ամպրոպները թափվեցին երկար ճանապարհին, սայլերը հազիվ էին շարժվում անանցանելի ցեխոտ արահետներով: Բայց աշխարհում ամեն ինչին ավարտ կա:

Օգոստոսին քարավանների սայլերը հասել էին արդեն Փոցխով գետի ափ, որն այժմ կոչվում է Կարախտին (ռուսերեն աղավաղված «կարանտին» բառը), այստեղ ենթարկվել են բժշկական զննության, ու ձևականություններն ավարտելուց հետո նրան վերջապես թույլ են տվել հատել սահմանը:

Երբ առջևում բացվեց Փոցխովի հովտի հոյակապ համայնապատկերը, և Կուրն ու Փոցխովը գրկախառնված փայլեցին արևի շողերի տակ, ուժասպառ վերաբնակիչները, չար ճակատագրով վտարված իրենց նախնիների երկրից, թեթևացած շունչ առան:

Բայց ամեն ինչ դեռ նոր էր սկսվում...

Երկիրը նման էր մի դրախտավայրի, որի մասին միայն լսել էին: Տղամարդիկ՝ հերկավորները, ձեռքով ագահորեն շոշափում էին հողը, ճգնում մատների արանքում: Քարե ր, քարե ր: Այս ամենը պետք է հանել, ցանել, տներ կառուցել... Առաջին հերկելու տարին, առաջին ամիսները դժվար էր, օ՛հ, ի՛նչ դժվար:

Իզուր չէր, որ Կարապետը խնամքով թաքցրեց ոսկիները: Հենց որ վերջին վերաբնակիչները քաշվեցին Ախալցխա, նա սկսեց նոր եկեղեցու կառուցումը:

Եփրեմ Մեթյանի և Միսնոն Դիլանյանի հետ տեր Կարապետը շրջեց բոլոր գյուղերում և տարածքներում, որտեղ ջուր ու աղբյուր կար: Անմիջապես կառուցվեցին ժամանակավոր շինություններ: Բացի այն փողից, որն, ըստ պայմանավորվածության, հատկացրել էր Պասկևիչը և բացի եկեղեցական սպասքի ու գույքի վաճառքից ստացված հասույթից՝ Մեծավորն էլի գումար ավելացրեց: Հայր սուրբը շրջում էր լեռներում ցրված բնակավայրերում ու կարողանում էր ամենուր հասնել: Նա մկրտում էր, թաղում, ամուսնացնում ու բուժում: Շատ աղքատների և տկարների օգնեց: Մեծավորը բնակվում էր հենց իր ծխականների հետ:

Նա կկառուցի և՛ եկեղեցի և՛ դպրոց: Գյուղերում կկսկսեն ցանել ու հերկել: Ախալցխայում կյանքը գնալով լավանում էր, բայց Մեծավորը չէր կարողանում մոռանալ այն հայերի մասին, որոնք մնացին ու չեկան նրա հետ: Միգուցե ցուցակո՞ւմ չտեղավորվեցին կամ լավ չպայքարեց նրանց գալու համար:

Էրզրումի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Կարապետ Բագրատունուն, ում դիմանկարն այսօր էլ կախված է իրեն հիշող ծխականների բազմաթիվ հետևորդների տներում, ժամանակ առ ժամանակ թվում էր, թե ինքն է պատասխանատու հոտից հետ ընկած մասի դժբախտ ճակատագրի համար...

Բայց ամեն ինչ դեռ նոր էր սկսվում...

Գյուղերում, ուր նրանք պատրաստվում էին բնակություն հաստատել, բնակիչների մեծ մասը տեղի հայեր էին: Նրանք ունեին իրենց սովորությունները, եկեղեցիները և հովիվներին: Նորերին սկսեցին կոչել «Ֆրանկ» և այդպես էլ մնաց: Ֆրանկները համարում էին, որ իրենց նախնիները ժամանակին առաքելական եկեղեցու քրիստոնյաներ էին և արդեն ուժասպառ էին եղել օսմանյան օրենքներից ու կանոններից: Ֆրանսիական քարոզիչները համոզում էին նրանց հան-

դես գալ Հռոմի պապի պաշտպանության ներքո, քանի որ իրենց կարծիքով՝ թուրքերը չեն համարձակվի գնալ վերջինիս դեմ: Անգրագետ ու ճնշված բնակիչները՝ *մայա* կոչվածները, Օսմանյան կայսրության դաժան օրենքներով՝ զրկված էին զենքից, ձիուց և ցանկացած արտոնությունից: Նրանց՝ այլադավաններին, բացի առևտրից և գյուղատնտեսությունից, արգելվում էր որևէ այլ բանով զբաղվել: Ուստի դեմ չէին փոխել մեկ քրիստոնյա հավատքով: Սակայն ստացվեց այնպես, որ ընդամենը փոխեցին ամենակարևոր ղեկավարներին՝ նրանցից հավասարապես հեռու նստած իրենց եկեղեցու սրահներում:

Չքնաղ էր վրաց աշխարհը...

Ժամանակին՝ շատ վաղուց, երբ Վրաստանը դեռ չկար էլ, ուժեղ թագավորներն ու թագուհիները կարողացան տարբեր ցեղերից, մեկիքություններից և ազգություններից կերտել վրացական թագավորությունը: Նրանք նույնիսկ հարձակվել են իրենց հարևանների վրա, գրավել քաղաքներ ու ավաններ: Բայց ուժեղացած հարևաններից իրենց պետությունն էլ դժվար էր պաշտպանել, մինչև հասկացան, որ ժամանակն է հովանավոր փնտրելու, ուժեղ հարևան...

Վերջին հաղթական պատերազմից հետո, որտեղ օսմանյան թուրքը՝ հին ու անպարտելի թշնամին, լիովին ջախջախվեց ռուսների կողմից, վրացի կառավարիչները հավատացին, որ միայն Ռուսական կայսրությունը կհովանավորի թագավորական Վրաստանը: 1783 թվականին Քարթլիի և Կախեթիի թագավորը՝ Իրակլի II-ը, Գեորգիևսկում մի պայմանագիր կնքեց ռուս կայսրի գերագույն իշխանության ճանաչման մասին, որը կոչվեց Գեորգիևյան տրակտատ: Ճիշտն ասած, պայմանավորվելիս թերևս այլ պայմանի մասին էր խոսքը, գուցե ռուսներին մի քիչ սխալ հասկացան:

Պայմանագրի կետերով Ռուսաստանը խոստացավ հովանավորել Քարթլի-Կախեթի թագավորությանը, երաշխա-

վորել նրա ամբողջականությունը, թագավորական գահը պահեց Իրակլի II-ի և նրա սերունդների համար՝ վատահեցնելով, որ չեն միջամտելու թագավորության ներքին գործերին: Բայց քաջ հայտնի է, որ Ռուսական կայսրությունն ամենից շատ կարողանում է տիրել այն ժողովուրդներին, ովքեր հավատում են նրա խոստումներին և ընկնում են իր ազդեցության տակ:

Մի քանի տարի անց բոլորը մոռացան ինչ-որ պայմանների ու տրակտատների մասին, միացրին Ռուսաստանին այն ամենը, ինչ կարող էին միացնել: Ամենակարևորն այստեղ ծովի թանկարժեք ափն էր: Ճիշտ է, որպես փոխհատուցում՝ գրեթե բոլորը, ովքեր հայտարարում էին իրենց հարստության կամ բարգավաճման մասին, ցանկացած գույքային հնարավորություններով թեթև ստուգումից հետո դառնում էին ազնվական կամ իշխան, նույնիսկ պարգևում էին ազնվական ծագում: Քիչ քան չէ, որ սերնդեսերունդ ձգվում է աշխարհում ամենազնահատելին՝ նախնիների փառքը...

Այդ ժամանակվանից ի վեր բարգավաճում էր օրինյալ Վրաստանը: Նույն ծովը դարեր հետո թույլ տվեց Վրաստանին մեկուսանալ իր փրկակարից՝ զգալի կտոր կորցնելով: Փրկվելու գինը միշտ հզոր գործոն է...

Բայց այդ բարգավաճելը Թիֆլիսում ապրող ոչ բոլոր հայերի համար էր:

Նոր ժամանածները՝ Կարինի հայ կաթոլիկները, տեղի բնակչության կողմից այնքան էլ ջերմորեն չընդունվեցին: Պարզ է, որ Կարապետ Բագրատունին և Եփրեմ Սեթյանը անմիջապես բարձրացրին նոր եկեղեցու հարցը: Եփրեմ Սեթյանը հետագայում Ախալցխայում կառուցեց մի լավ եկեղեցի՝ գեղեցիկ ու ընդարձակ՝ օձված հավատացյալների և իրենց սեփական աշխատանքով:

Մեկ դար անց այս եկեղեցին կպայթեցվի, կավերվի, ու հենց այս վայրում կկառուցեն կուսակցության քաղաքային

կոմիտեի շենքը: Կարծես թե էլ ուրիշ տեղ չկար: Մինչև հիմա Ախալցխայի մոտիկ ու հեռավոր գյուղերի բնակիչները դեռ շշուկով են խոսում իրենց սիրելի եկեղեցու մասին, քանի որ լավ գիտեն, որ բոլոր նրանք, ովքեր սկսեցին և մասնակցեցին այս եկեղեցու ավերմանը, իրենց մահով չմեռան: Անշուշտ Աստված ամեն ինչ տեսնում է:

Կես դար հետո վրացիները կազատվեն ռուսական գրկախառնումներից և հողն իրենցը կհայտարարեն «Վրաստանը՝ վրացիներին» կարգախոսով, և այդ ժամանակ հայերին կամ վրացի կդարձնեն, ազգանունն ու եկեղեցին փոխելով, կամ անտանելի պայմաններ կստեղծեն՝ նրանց դուրս մղելու այն երկրից, որտեղ դարերով ապրել են հայերի հետ կողք կողքի... Ճիշտ այնպես, ինչպես թուրքերը:

Գլուխ չորրորդ

*Տափաստանից քամին փչում, դեպի անդունդն է տանում:
Մեր խաչը մեզ չի փրկում: Երկի նք, քեզ ենք աղոթում, ոչ մի
դրախտ էլ չենք ուզում, միայն կյանքը վայելենք, հավատալուց
հոգնել ենք...*

Շատ ու շատ տարիներ առաջ, երբ տղաները, պանիր--
հացով դուրումն առած, վազվզում էին Ալաստանով մեկ, փոք-
րիկ Ստեփանը՝ Ներսես Երոյանի որդին (բուրբ գիտեին, որ
Ներսեսը դաշնակցական է և ընկերություն է անում հենց դաշ-
նակցականների ղեկավար Զավարյանի հետ, որը և այդ կու-
սակցությունը ստեղծողներից էր), ավելի շատ մտում էր տանը
ու ինչ-որ քրքրված գրքեր էր կարդում: Գրքերը Աստծու և
Մարիամ Աստվածածնի մասին էին, ուրիշը չկար, Ալաստա-
նի եկեղեցուց էր բերել:

Իսկ երբ հայ համայնքի ղեկավար Հովսեփ Սարուխան-
յանը եկեղեցում առաջին անգամ լսեց փոքրիկ Ստեփան Երո-
յանի ձայնը, ցնցվեց: Ստեփանի երգը հմայում էր ձայնի ուժով
և արտասովոր ձայներանգներով: Տեր Հովսեփն առանձնաց-
րեց տղային նաև անսովոր ողջամտության և գիտելիքի անչա-
փելի ձգտման համար՝ մորաքույր Վերոնիկային խոստանա-
լով, որ իրենց որդին կզնա Իսկուհու որդու՝ Ղազարոսի հե-
տից: Երկու տարի առաջ Ղազարոսը մեկնել էր Հոռու:

Լավ է ասված՝ մեկնել էր: Փոքրիկին տարան այնտեղ սո-
վորելու, որ քահանա դառնա:

Մորաքույր Վերոնիկան չէր էլ համարձակվում մտածել
այդպիսի պատվի մասին, որ իր որդին սովորելու է հեռավոր
Հոռում և հոգևորական է դառնալու: Աստծուց լքված Զա-
վախքի գյուղերի ծնողների ամենաթաքուն երազանքն այն էր,
որ գոնե մեկ զավակը քահանայություն սովորի, որ մարդ
դառնա: Ընդհանրապես, քահանաների մեծ պահանջ կար

հայկական գյուղերում: Հոռուի ազդեցությունից խուսափելու
նպատակով՝ ցարական իշխանությունները կաթոլիկների
շատ իրավունքներ սահմանափակեցին, իսկ կաթոլիկ գյուղե-
րի առաջնորդի պաշտոնը դարձավ նշանակովի: Ու արդեն
արտասահմանից կաթոլիկ չէին կարող բերել, ստիպած գյու-
ղերից երեխա էին հավաքում, տանում Հոռու՝ կրթելու:

Հովսեփը իրոք կատարեց իր խոստումը. ամուսնը վերց-
րեց Ստեփանին ու ևս չորս տղաների ու տարավ Ալաստանից
Թիֆլիս, այնտեղից էլ՝ Հոռու: Իսկ մորաքույր Վերոնիկան տե-
ղափոխվեց Ախալցխա՝ իր հարազատների մոտ: Միքտը չէր
դիմանում բաժանմանը, բայց այնտեղ հանգստացրին, որ թե՛
Ստեփանը, թե՛ Պեջիկյանների ու Մակարյանների թոռները
գերազանց են սովորում, հոգևոր աստիճան կստանան, կվե-
րադառնան և քահանա կդառնան կա՛մ Ախալքալաքում, կա՛մ
Ախալցխայում, և չնայած երեխաները այլ երկրում մայրական
օջախից հեռու են, բայց ավելի լավ են ապրում:

Ոչինչ, շուտով կվերադառնան որպես քահանա, կդառ-
նան հարգված մարդիկ: Ճիշտ է, այս «շուտովը» տևեց ավելի
քան տասը երկար տարիներ... Եվ մինչ երեխաները սովորում
ու մեծանում էին, երկրագունդը պտտվում էր, Թիֆլիսում նոր
կրքեր էին բորբոքվում, մի պատերազմը կարծես ավարտվեց,
բայց սկսվեց մյուսը:

1918 թվականի մայիսին թուրքական զորքերը, չնայած
հայկական փոքրաթիվ ինքնապաշտպանական ստորաբաժա-
նումների կատաղի ու անհավասար դիմադրությանը, գրավե-
ցին Զավախքը: Եվ տասնյակ հազարավոր ջավախքահայեր,
հիմնականում Ախալքալաքից և շրջակա գյուղերից, որոնց հի-
շողության մեջ դեռ թարմ էին Օսմանյան կայսրությունում 1915
թվականի Հայոց ցեղասպանության հիշողությունները, փախ-
չելով թուրքական զորքերի առաջխաղացումից, փորձում էին
սպաստան գտնել Վրաստանի տարածքում: Մակայն Վրաս-
տանի Դեմոկրատական Հանրապետության երիտասարդ կա-

ռավարությունը, որը ստեղծվել էր 1918 թվականի մայիսի վերջին, հրամայեց իր գործերին գեներալ Արջևանիձեի հրամանատարությամբ, չորդնել հայ փախստականներին իրենց տարածք դրանով իսկ դատապարտելով նրանց սովի:

Ախալքալաքից փախստականների մեծ մասը հարկադրված եղավ բնակություն հաստատել Ախալքալաքից հյուսիս գտնվող Ծալկայի, Բորժումի և Բակուրիանի շրջանների անտառներում: «1919 թվականի գարնան սկզբին թուրքական ներխուժման, սովի, ցրտի և հիվանդության հետևանքով Ախալքալաքից և շրջակա գյուղերից մոտ 40 հազար հայ փախստական է մահացել»:

1921 թվականի փետրվարի 11-ի գիշերը Բորչալիի շրջանի ռուսական գյուղերում սկսվեց «ապստամբություն», որը խորհրդային քարոզչությունը անվանել է *Վրաց աշխատավորների ապստամբություն* (իրականում դա 11-րդ Կարմիր բանակի հարձակումն էր անկախություն հայտարարած Վրաստանի վրա): Սկզբում բոլորը ուրախանում էին նոր իշխանություններով. աղքատները հարստանալու հույսով, իսկ նրանք, ովքեր վաղուց աղքատ չէին համարվում, ուրախանում էին մտածելով, որ ավելի կհարստանան: Նույնիսկ շատ հարուստներ անմիջապես չէին կռահում, թե ինչ է նրանց սպասում և ինչ է պետք անել նրանց գալուց հետո:

Հետո... իսկ հետո սկսվեցին ձերբակալությունները: Լայնածավալ ռեպրեսիաների ալիքը, որն անցկացվեց խորհրդային ահաբեկչության վերընթաց աստղ Լավրենտի Բերիայի ղեկավարությամբ, ով ոչ մեկին չխնայեց, և նրանք, ովքեր ակտիվորեն պաշտպանում էին երկրի անկախությունը, անմիջապես ճնշվեցին: Մեկ շաբաթվա ընթացքում (1924թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 5-ը) մահապատժի ենթարկվեցին 12.578 մարդ (հիմնականում ազնվականության և մտավորականության ներկայացուցիչներ), ավելի քան 20 հազար մարդ արքայազնություններ: Վրացական հողը հառաչում էր «կարմիր տեռորի»:

Բուշնիկները, հայերն ու վրացիները կարմիր էին, սպիտակները նույնպես հայեր ու վրացիներ էին... Հարևանը մատնում էր հարևանին, ուղղափառը մատնում էր կաթոլիկին, իսկ շատ հաճախ ոչ ոք էլ չէր մատնում, հենց ցուցակով էին վերցնում:

Մարսափելի լուրերն ու ստեկոսները փոխարինվեցին ավելի սարսափելի լուրերով: Վերոնիկան, հիշելով, թե ինչպես Իսկուհու որդին հրաշքով փրկվեց, երբ ժամանակին մեկնեց Հոռոմ, Ստեփանին համոզում էր, որ նույնպես հեռանա այս նոր, դաժան ու անհասկանալի բուշնիկներից: Բայց մի թե տեղին է, որ քահանայի աստիճանով մարդն, Աստուց բացի, ուրիշին լսի:

Իսկ Աստված, որն ըստ երևույթի, դեռ անծանոթ էր բուշնիկների պահվածքին ու թափին, Ստեփան Երոյանի և նրա նմանների համար սոսկալի, անսովոր ու անսպասելի ճակատագիր պատրաստեց: Ո՞վ չգիտի, որ ամենակարող Աստվածը մարդու ձեռքերով է գործում...

Բնակչության ամենաաղքատ, իրավազրկված մասը օկուպացված տարածքներում (հատկապես գյուղերում), որպես կանոն, վեր է ածվում «ոչ տիրոջ սակի» ազգի... Իսկ վրացի բուշնիկները սկսեցին ճնշել և թուրքերի նման խլելով կյանքը կամ ազգությունը, և՛ որպես բուշնիկներ՝ խլելով և կյանքը, և՛ ազգությունը: Օրինակ, 1949 թվականի հունիսի 14-ի արքունի ժամանակ աննկարագրելի տուժեցին հայերը: Ինչպես վկայում են հայ կաթոլիկ գյուղերի բնակիչները, համապարտությունների նկատմամբ հալածանքները բոլորովին այլ ենթատեքստ ձեռք բերեցին: Հայ կաթոլիկներին առավելապես արքայի են իբրև «Վատիկանի գործակալներ»:

Իսկ կյանքը, կարծես, անտարբեր էր շուրջը կատարվածի նկատմամբ, նա հոսում էր դարավոր սովորությունների համաձայն՝ մկրտություն, ամուսնություն, մահ, թաղում...

Եկեղեցուց սկսեցին խլել իրենց հողերը, առգրավել ոսկուց առարկաները, արծաթից իրերը, բայց քահանաներին

դեռ ձեռք չէին տալիս: Ռուսաստանին և բոլշևիկներին սատարող վրացիները զբաղված էին մի նոր գործով՝ վերակենդանացնում էին նախկին փառապանձ Վրաստանն այժմ նոր թագավորի սովերում՝ նույնպես վրացի: Գյուղերից իջնում էին թարմ ուժերը: Թիֆլիսը ուռճացավ, մեծացավ դառնալով վրացական քաղաք:

Նույնիսկ սեփական կաթոլիկները շատացան: Ջավախքում դրանից առաջ վրացական իշխանությունները ռազմական ռեժիմ էին հաստատել՝ սկսելով Վրաստանի ներքին շրջաններից վրացի վերաբնակիչներին շրջաններից բռնի բնակեցման գործընթացը: Իսկ կարճատես աշխարհը հերթական անգամ լարված սպասում էր, թե երբ է ընկնելու այս տարօրինակ ուժն իր բուսակային հորդաններով:

Եվ ահա, ինչպես միշտ մատուցելով իր պատարագը Վատիկանում՝ Հռոմի պապը ըստ բոլշևիկների՝ ինչ-որ սխալ բան ասաց, թեպետ հանուն արդարության պետք է հիշել, որ գրեթե տասը տարի՝ մինչև 1927 թվականը, Վատիկանը պաշտոնապես և ոչ պաշտոնապես աջակցում էր բոլշևիկյան կառավարությանը՝ օգնելով նրան դուրս գալ դիվանագիտական մեկուսացումից: Սրա դիմաց պապությունը, իհարկե, ակնկալում էր, որ բոլշևիկները կաջակցեն Ռուսաստանում Հռոմի հաստատվելու ցանկությանը կամ ուղղափառությունը ճնշելուն նույնիսկ իշխանության հաշվին: Նոր կառավարության հետ Հռոմի պապը փորձեց սիրախաղ անել, ուստի այդ խաղերով գլխին միայն փորձանք բերեց:

Պիոս XI Աքիլլե Ռատտիին, բնականաբար, բոլորովին դուր չեկավ, թե ինչպես է բոլշևիկյան Ռուսաստանը, որին Հռոմի պապը ճանաչեց առաջիններից մեկը, վերաբերվում իր տարածքում ապրող կաթոլիկ հոտին: Նա դատապարտեց քրիստոնեական հավաճանքները ԽՍՀՄ-ում՝ հատուկ պատարագ մատուցելով հավաճված կաթոլիկներին աջակցության համար, որից հետո կարծես հաստատելով իր վատ համ-

բավը՝ սովետներն անմիջապես արձագանքեցին. անհապաղ հաջորդեցին բոլոր ծեսերի կաթոլիկ հոգևորականների ձերբակալությունները:

Հավաճանքների կրակը բռնկվել էր շատ վաղուց, բայց էլ ավելի ուժեղացավ, այնպես, որ Խորհրդային Ռուսաստանում, կարելի է ասել, եկավ կաթոլիկության վերջը. չէ՞ որ լրտեսության և դիվերսիոն գործողությունների ղեկավարներն այնքան հմտորեն հարմարեցվում էին անպաշտպան եկեղեցականներին: Պրոպագանդա, ազդեցություն... Այն ամենը, ինչը նախկինում քարոզ էր կոչվում, դարձել էր դիվերսիոն վնասակար ազդեցություն:

Մեջբերում՝ Սոլոտովին ուղղված Լենինի նամակից 1922թ.-ին. *«Ողբան շատ զեղակահարեք քահանաներին և բուրժուաներին, այնքան լավ: Հատկապես հիմա պետք է դաս տալ այս համայնքին, որպեսզի մի քանի տասնամյակ հետո ոչ մեկի մտքով անգամ չանցնի դիմադրել»:*

1925 թվականի սկզբին Վեցերորդ բաժնի պետ Տուչկովի ղեկավարությամբ սկսվեց *«հոգևորական լրտեսող կազմակերպությունների վերաբերյալ»* ծրագրերի մշակումը: Ի դեպ, բոլշևիկները, իհարկե, կանգ չեն առել նաև ուղղափառների հարցում: Կատաղի հաշվեհարդարներ տեսան բոլոր նրանց հետ, ովքեր քարոզում էին Աստծու խոսքը... Համայն Ռուսիո պատրիարք Տիխոն Բելավսկու հայտնի կոչը (*«Ուշքի՛ եկեք, խելագարներ՛, դադարեցրե՛ք ձեր ջարդերը: Իշխանությունը զավթելիս և ժողովրդին ձեզ վստահելու կոչ անելիս ի՞նչ խոստումներ եք սովել նրանց և ինչպե՞ս էիք կատարել այդ խոստումները: Ի վերջո, ձեր արածը ոչ միայն դաժան արարք է, այլև իսկապես սատանայական արարք, որի համար դուք կենթարկվեք գեհե՛նի կրակին ապագա հետմահու կյանքում և սերունդների սարսափելի անե՛ծքին ներկա երկրային կյանքում»*) միայն մոտեցրեց նրա դաժան մահը:

Գլուխ հինգերորդ

*Սուրբ Մայր, մեր Աստվածածին, գոնե դու մեզ փրկելիք,
ի վերջո, մենք քոնն ենք:*

Դու մեզ Նրան տվեցիր, ճակատագիր դարձրիր...

Լիբանանում՝ Հարիսսա լեռան գագաթին, բարձրանում է Սուրբ Կույս Մարիամի հսկա բրոնզե արձանը, որն ինչ-ինչ պատճառներով այժմ ներկված է սպիտակ: Լիբանանցիներն իրենց արձանը ֆրանսիական ձևով անվանում են «Նոթր Դամ դյու Լիբան»: Շուրջը 20-ից ավելի եկեղեցիներ ու վանքեր կան, իսկ պապական նվիրակի նստավայրին շատ մոտ՝ Բզումմար (Զումառ) քաղաքում, գտնվում է հայ կաթոլիկների պատրիարքի նստավայրը:

Ավետիս Պետրոս ԺԴ Արփիարյանի մահից հետո՝ 1937 թվի նոյեմբերի 30-ին, Հայ Կաթողիկե Սինոդում Գրիգոր Աղաջանյանը ընտրվեց Կիլիկիո և համայն հայության կաթողիկե պատրիարք:

Անունը նա վերցրեց որպես Գրիգոր-Բեդրոս XV (Gregoire Pierrot XV) Աղաջանյան. Այն ժամանակվանից, երբ հայ կաթոլիկների առաջին պատրիարք Արձիվյանն իրեն կոչեց Աբրահամ Բեդրոս, բոլոր հաջորդող պատրիարքները Պետրոսի (Պետեր, Պիերրո) անունը սկսեցին ներմուծել կաթոլիկների անվան իրենց եկեղեցական կոչման մեջ:

Համաշխարհային մամուլի, այլ դավանանքների հավատացյալների, կաթոլիկ հայերի հսկայական խոնվելու ներքո նոր պատրիարքը հանդիսավոր պատարագ մատուցեց: Լիբանանյան սփյուռքը խանդավառությամբ ողջունեց իր պատրիարքին, որը նաև Պապի սիրելին էր: Իսկ տասը տարի անց Պիոս XII Պապը նրան շնորհեց կարդինալ քահանայի արժանապատվություն՝ *S. Bartolomeo all'Isola* կոչումով: Աղաջանյանը վաստակել էր կարդինալի իր կարմիր գլխարկը. նա և իր

կրթությամբ, և՛ օրինակելի եկեղեցական վարքով գրավել էր պապական գահի ուշադրությունը:

Երբ նա ընտրվեց պատրիարք, Պապը բացականչեց. «*Հալեթին պարզապես մայրական սրտով պատրիարք էր պետք*»: Թե ինչ նկատի ունեն էրկրում Աստծո տեղապահը, դժվար է կռահել: Ըստ երևույթին, եթե Պապն իրեն հայրական սրտով պատրիարք էր համարում, ապա, իրոք, կաթոլիկ հայերն այլևս որք չէին համարվի:

Քիչ անց Մխիթարյանները հոռուեացի կարդինալին նվիրեցին իրենց ծիրանի գլխարկը: Իսկ այն հայրենակիցները, ովքեր, լինելով առաքելական հայրեր, չընդունեցին կաթոլիկական «հերետիկոսությունը», կարդինալին սկսեցին անվանել ոչ այլ ոք, քան «Միրանավոր», այսինքն՝ ծիրանի գլխարկ կրող, և նրանց աստվածաբանական հերքումներով կոչը այնքան էլ անկեղծ չէր սկսվում. «Միրանավոր մեր եղբա յր»:

Գլուխ վեցերորդ

Խառնվել է ամեն ինչ, կյանքն ու մահը՝ իրար հետ, երկնքից պատիժ եկավ, Աստծու կրակ մեզ գտավ, եղբայրն եղբորն է մատնում, որդին՝ հոր դեմ է ելնում, մեռածներին են դատում...

«...Եկել է իսկական Սոլովկիի աշուն: Մերթ կսառչի, մերթ նորից կհավի: Յեխոտ գետին, երբեմն հյուսիսային ցուրտ քամի: Հանկարծ կպարզվի, և երկինքը կգունավորվի ամենաքնքուշ սքանչելի երանգներով: Արևը շատ կարճ ժամանակով էլնում է հորիզոնից վեր և գրեթե չի ծագում, այն միայն սահում է նրա վրայով: Իսկական արև ոչ միայն ձմռանը, այլ նույնիսկ ամռանը չես տեսնի. այնքան թույլ է, ինչպես մի ուրվական՝ Սոլովկիի երկնքում, կարծես երազի մեջ է, և ամեն ինչ այստեղ ուրվական է թվում, ինչպես ստվերների աշխարհում: Աշունը փայլում է զարմանալի գույներով՝ վարդագույն, յասամանագույն, փայլ, դեղնավարդագույն երանգներ (սրանք ագռավի աչքի տերևներն են), հապալասը, կեչիները, և շատ կարմիր ու մուգ մանուշակագույն հատապտուղներ: Գույները հատկապես բազմազան են ու նուրբ: Ընդհանրապես, ըստ գունային երանգների՝ երկինքը, ջուրը, բուսականությունը, Սոլովկիի գանձ են նկարչի համար. ամբողջովին Գոգեն է», – գրել է Սոլովկիից Պավել Ֆլորենսկին 1936 թվականի աշնանը:

Պարադոքս է, բայց քահանա Պավել Ֆլորենսկին և շատ հազարավոր ուրիշ հոգևորականներ հենց այն հավատացյալների համար Սոլովեցկի բանտում մահացան, որտեղ նախահեղափոխական ժամանակներում հոգևոր բանտ էր աթեիստների և հերետիկոսների համար:

Ռուսաստանի հյուսիսի արտասովոր գեղեցիկ կղզիները, ուր արքայի վել էին հայտնի քաղաքական գործիչներ, հոգ-

ևորականներ, հին ծեսի հավատացյալներ, մտավորականներ, դարձել են ողբերգության, անմարդկային տառապանքների հոմանիշը... Երբ շատ տարիներ անց այնտեղ հայտնաբերվեցին թաղումներ, տեղը պարսպապատեցին, իսկ մուտքի դիմաց տեղադրեցին ինքնաշեն պատնեշ՝ «Կանգնի՛ր: Խոնարհվի՛ր: Սանդարմոխի հուշահամալիր: Կոմունիստների և այլ անասունների մուտքն արգելված է»:

1920-ական թվականների կեսերին չեկիստների աշխատանքը ակտիվ գաղտնի տեղեկատուների (կամ գաղտնի աշխատողների «սեկստներ») ներմուծումը եկեղեցիներ և բոլոր կրոնների համայնքներում հոգևորականների միջավայր գրեթե ավարտված էր: Գաղտնի հետախուզության ծախսերի նախահաշիվները վերջապես հաստատվեցին, և դրա համար միջոցներ էին բաժանում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ բոլոր շրջաններում: Ըստ այդ հաշվարկների՝ յուրաքանչյուր տաճարում պետք է լինեին առնվազն երկու ակտիվ «սեկստ», թեև, ըստ չեկիստների կարծիքի՝ ցանկացողները եղել են շատ ավելի:

1927 թվականից և հատկապես Պիոս XI պապի այն չարաբաստիկ ելույթից հետո սկսվեց հաջորդ փուլը, և չեկիստներն ակտիվորեն ստանձնեցին հոգևորականությունը վերացնելու գործը: Այժմ դա տարածվում էր ողջ Խորհրդային Միության բոլոր դավանանքների վրա: Տաճարում պաշտոնապես գրանցված յուրաքանչյուր քահանայի կանչում էին Գլխավոր վարչություն՝ նրան տալով ընտրություն՝ կամ համագործակցության պայմանագիր ստորագրել, կամ գնալ ճամբար: Իհարկե, այս ստորագրությունները տված հոգևորականներից յուրաքանչյուրն ինքն է ընտրել, թե ինչպես դուրս գալ այս վիճակից: Ինչ-որ մեկն իսկապես ակտիվ համագործակցել է, գրել ու խախտել է խոստովանության գաղտնիությունը, մյուսը չի կատարել հանձնարարվածը և որոշ ժամանակ անց, իհարկե, որպես «անհաջողակ», գնացել է ճամբար:

Տարածված մեթոդաբանությանը քննչական գործողությունները շարունակվել են 20–30 օր գործնականորեն առանց ընդմիջման: Քահանաները հաճախ քիչ էր մնում խելքները կորցնելին. նրանց ստիպում էին խոստովանել և ստորագրել իբր իրենց ծխերում լրտեսական ցանց են կազմակերպել, որի նպատակն է եղել խորհրդային կարգերի տապալումը:

«Հենց նա է, – պաթետիկ գոռաց քննիչը՝ մատնացույց անելով սուրբ հորը, – նա հավաքեց կաթոլիկներին և քրիստոնյաներին՝ ընդդիմանալու իշխանություններին: Հենց նա կազմակերպեց կոմունիզմի դեմ ընդհանուր ճակատը»:

Վերոնիկայի որդին՝ Ստեփան Երոյանը, Սուրբ Զատիկից առաջ ժամանեց Հոռոմ (նա, ում երգը հմայել էր Հովսեփ Մարտիասյանին): Ավարտել էր Հոռոմի Լևոնյան ճեմարանը և 1921 թվականին ձեռնադրվել: Հոռոմի գահը ուղարկեց ջավախքահայ կաթոլիկ Ստեփանին, ով վարժ տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների՝ ծառայելու հայրենի Զավախքի Տուրքիս գյուղում:

Նա փոքր-քիչ զուսպ էր, քիչ մարդկանց հետ էր ընկերություն անում, բացի հոր համագյուղացի Եղիա (Բլիա) Պեջիկյանից. նրա հետ շատ մտերիմ էին: Եղիան հետագայում դարձավ հայտնի հայագետ, գիտնական–հրատարակիչ: Նա հրատարակում էր «Բազմավեպ»-ը, որտեղ հրապարակվել է Ստեփան Երոյանի մասին մահախոսականը:

Երոյանը սիրում էր կարդալ լատիներեն, Ֆրանսերեն կրոնական գրականություն (այս բոլոր գրքերը խնամքով և սրբությամբ դեռ պահվում են ալաստանցի հարազատների մոտ): Նրա մագիստրոսական աշխատանքի թեման էր՝ «Գրիգոր Լուսավորիչը Հոռոմում եղել է, թե՞ ոչ»: Փաստ է, որ Գրիգոր Լուսավորչի արձան կա Հոռոմում:

Ստեփանը, ինչպես և Հոռոմի կաթոլիկ եկեղեցուն առընթեր Հայկական ճեմարանի շատ շրջանավարտներ, աչքի էր

ընկնում գիտելիքների իմացությամբ: Գիտեր ավելի քան տասը լեզու: Երիտասարդ քահանան մեծ դժվարությամբ էր հաղթահարում իր ծխականների սովն ու աղքատությունը: Երբեմն Հոռոմից ծանրոցներ էին ուղարկում, որոնք նա բաժանում էր հատկապես աղքատ ընտանիքներին: Թվում էր, թե տեր Ստեփանոսը չէր նկատում բոլշևիկների ճիրաններում հայտնված բոլորի գլխին կուտակված թանձր ամպերը: Բայց ով գիտի, թե ինչի մասին էր նա խորհում՝ փորձելով առանց վառելիքի տաքանալ սառը ծնողական տանը...

Եվ մի աշնանային անձրևոտ երեկո աղոթքի կեսին նրա տանը հայտնվեցին երկու հոգի, օրը ցերեկով ատրճանակը ուղղեցին նրա վրա... Մորաքրոջ տղան էր, որը դարձել էր կարմիր բոլշևիկ: Եվ Ստեփան Երոյանին առանց բացատրության, գրեթե բոլոր կաթոլիկ քահանաների պես, ձերբակալեցին, նստեցրին խուց, իսկ մի քանի օր անց՝ «Հատուկ եռյակը» դատապարտեց տասը տարվա ազատազրկման՝ առանց նամակագրության իրավունքի: Ամեն ինչ, ինչպես հազարավոր և հարյուր հազարավոր այլ անմեղ քաղաքացիներին, ովքեր հանկարծ հայտնվեցին մի նոր, ամբողջովին մեկ այլ՝ այդքան թշնամական երկրում, որն իր ժողովրդին էր ընտրել որպես թշնամի:

Ահա թե ինչ է գրում Երոյանի մեծ եղբորորդին՝ Վրաստանում և Ռուսաստանում հայ կաթոլիկության հայտնի հետազոտող Ա. Միմավորյանը, Կաթոլիկական հանրագիտարանի համար «Բռնադատված կաթոլիկների» հատուկ հոդվածում. «1929 թվականի նոյեմբերի 26–ին ձերբակալվել է Թիֆլիսում, իսկ 1930 թվականի օգոստոսի 3–ին՝ 10 տարով համակենտրոնացման ճամբարում (ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքի 58–6, 10, 12 և 59–12 հոդով.): Ուղարկվել է Մոլոկի, ուր նա ժամանել է 1930 թվականի օգոստոսի 15–ին: Տեղափոխվել է Անգեր կղզի: 1932 թվականին նա ձերբակալվել է այստեղ՝ Անգեր կղզում գտնվող կաթոլիկ հոգևորականների խմբակային գոր-

ծով: Նրանք մեղադրվում էին «հակասովետական խումբ ստեղծելու, հակասովետական քարոզչություն վարելու, աստվածաբանական և կրոնական ծեսեր գաղտնի կատարելու և անօրինական հաղորդակցություն իրականացնելու մեջ, ԽՍՀՄ-ում կաթոլիկների վիճակի մասին լրտեսական տեղեկատվություն արտասահման փոխանցելու նպատակով»:

Պահպանվել է միայն մի գրություն, գրաբարով մանր ձեռագրով նշում, «ԲԱՆՏԱՐԿՈՒՅԻՑ» (բացիկ՝ 1932 թվականից): Ուրիշ լուր նրանից էլ չկար: Թեև խոսակցություն կար (նման դեպքեր հազվադեպ չեն), իբր Տուրցիսից մեկն ասել է, որ Երոյանին Սոլովկիում է տեսել, երբ նա բարձրացել է ջրհորից ջուր խմելու: Իբր տուրցիսեցին ջուր խմեց, իսկ մոտ կանգնած Երոյանը հարցրեց.

–Տեսնում եմ՝ հայ ես, որտեղի՞ց ես գալիս:

Իմանալով, որ գյուղացին Տուրցիսից է, ասել է, որ ինքն ալաստանցի է և աշխատում է դեղատանը, քանի որ լատիներեն գիտի: Եվ կարծես, դա եղել է գրեթե պատերազմի ժամանակ: Երբ խելագարված հարազատներն ու ալաստանցիները շտապեցին Տուրցիս՝ ավելին իմանալու իրենց սիրելի քահանայի մասին, շատ են հիասթափվում: Ինքը՝ տուրցիսեցին, հագիվ էր պրծել ճամբարներից, շատ վախեցած էր և կտրակալապես հրաժարվեց իր խոսքերից: Ո՛վ գիտի, թե ինչպես և ինչու էր փոխվել ժամանակի զգացողությունը խեղճ մարդու մոտ, որը Բերիայի դահիճների ճիրաններում է եղել:

Սոլովկիում անհավանական ծանր պայմաններում հիմնականում բնակվում էին բանտարկված եկեղեցականները: Եվ այնուամենայնիվ քահանաները մնացին Աստծո առաքյալներ. «Հիշե՛ք, որ Սոլովկիի մեր պատարագները թերևս Ռուսաստանում արևելյան քահանաների միակ պատարագներն են, ովքեր աղոթում են Ռուսաստանի համար: Պետք է ամեն գնով ձգտել օրական գոնե մեկ պատարագ մատուցել»:

Սկզբում խեղճ քահանաներին թույլ էին տալիս ծառայությունների համար օգտագործել մի լքված մատուռ: Ապա հետևեց ընդհանրապես ծառայելու արգելքը: Ստիպված գաղտնի էին ծառայում ցանկացած վայրում՝ նկուղներում, անտառում՝ քարի վրա կամ մեծ եղևնու պաշտպանության տակ: Իսկ 1929 թվականի հունիսից սուրբ եղբայրների իրավիճակը էլ ավելի վատացավ: Ամբողջ «հոգևոր թիմը» կենտրոնական կղզուց տեղափոխվեց ամենահյուսիսային Անգեր կղզի, որտեղ պայմանները, բոլոր առումներով, սոսկալի ծանր էին: Բուսականությունը՝ տունդրա: 23 հոգի տեղավորված էր մեկ խցում՝ չորս մետր երկարությամբ և մոտ երկու մետր լայնությամբ: Ես ունեմ ութ մետրանոց սենյակ... դա անհնարին է նույնիսկ պատկերացնել: Նույնիսկ ցարական Ռուսաստանի բանտերում մարդիկ ավելի քիչ էին խցկված:

Մեսսաները (կաթոլիկ պատարագները) հաջողվեց ծառայել հենց տանիքի տակ գտնվող ձեղնահարկում, այնքան ցածր, որ բոլորը կարող էին միայն ծնկի գալ և ստիպված էին ծառայել միայն գիշերը: Տեղացի քննիչ-բոլշևիկներից մեկի դիտողությունն իսկապես արդարացի էր. «Որտեղ քսենձ (քահանա), այնտեղ պատարագ»:

Այսպես էին անցնում ամիսներն ու տարիները: Այս մշտական անհանգստությունները Սուրբ մատաղ անելու հնարավորության մասին, գիշերվա մթության մեջ պատարագի ծառայությունները «հանցագործության վայրում բռնվելու» մշտական վախի ներքո, մշտական մտահոգությունները, թե ինչպես ստանալ գինի, հաց, զգեստներ, սպասք, ստիպում էին արտոյալներին անցնելու հոգևոր կյանքի դաժան դպրոցը:

Կինի շրջանի քահանա Իոսիֆ Կովալսկու արխիվային փաստաթղթերում կա մի Լապ անվամբ տեղեկատուի հայտարարության պատճենը: Նա իր վերադասներին տեղեկացնում է հետևյալի մասին (բնօրինակի ուղղագրությունը պահպանված է).

«...Քաղաքացի ավագ մայրը, այս բոլոր պիղծ, ճարպակալած սրիկաները քսենձ Ձեմյան, Կորեց, Կարպինսկի, Օպոլսկի, Հանսկի, Կովալսկի, Շիշկո, Տուրովսկի, Մայդերա... բանտախցից եկեղեցի սարքեցին... քահանաների այս ամբողջ խումբը թշնամական, սաղորիչ աշխատանք էր տանում բանտի ղեկավարության դեմ, այլ բանտարկյալների հետ անկարգություններ էին անում, բղավում, որ իրենց նկատմամբ բռնություն են գործադրում և այլն: Նրանք զբաղվում են ապօրինի նամակներ ազատություն տեղափոխելով»:

Զգիտես ինչու, նախաքննությունը միջնորդել է Երոյանին բոլորից անջատ պահել: Ի դեպ, ոչ միայն նրան: Նույն ձևակերպումը կար, օրինակ, մեկ այլ ախալցխացի, վրացի կաթոլիկների ադմինիստրատոր Շիո Բաթմանիշվիլու դեպքում, ով «թույլ տվեց վրացի հակահեղափոխականների կենտրոնացումը վանքին պատկանող տարածքներում»: Նախաքննության ավարտից հետո Երոյանը մնաց Սոլովկիներում: Որպես բանտարկյալ՝ 1937 թվականին կրկին ձերբակալվել է հենց այստեղ, ըստ երևույթին, երկրորդ մեղադրանքով:

Զեմ սխալվի՝ ասելով, որ կրկնվող մեղադրանքները դարձել էին չեկիստների իրավապահ պրակտիկայի անբաժանելի մասը, այսպես ասած, անօրինականության «ինտերցիոն» բաղադրիչը: Ի դեպ, ժառանգվել է և կրկնվում է այսօր ընդդիմադիրների հալածանքների շարքում:

1937 թվականի հոկտեմբերի 9-ին Լենինգրադի մարզում «Հնկավեդեի» հատուկ եռյակի հրամանագրով՝ Երոյանը դատապարտվել է մահապատժի: 1937 թվականի նոյեմբերի 3-ին պատիժը կատարվեց Սանդարմոխի տրակտում (Մեդվեժիե-գորսկի մոտ): Կան ապացույցներ, որոնք մատնանշում են այս նողկալի գործողության հեղինակին՝ «Զիմնևո պալատի գրավման» մասնակցին (ինչպես ինքն է գրել հարցաթերթիկում, ի՞նչ կարող ես անել գյուղական դպրոցի ընդամենը երկու դասարան): Միխայիլ Մատվենը, Անվտանգության «փոր-

ձառու աշխատակից», պետք է անձամբ կատարեր... Եվ պետական գաղտնիքները ապահովելու համար նա գտավ ձանապարհը:

Դատապարտյալներին «պատրաստում էին» բարաքի երեք սենյակում: Առաջին սենյակում «ստուգում էին ինքնությունը», մերկացնում ու խուզարկում: Երկրորդում մերկացածներին կապում էին: Երրորդում մերկ կապածներին գլխին փայտե մուրճի հարվածով ուշաթափ անում: Հետո նրանց մի քառասուն դիակ բարձում էին մեքենան և ծածկում բրեզենտով: «Բրիգադի» անդամները նստում էին բրեզենտի վրա: Եթե ներքևում պառկածներից մեկն ու մեկը ուշքի էր գալիս, մուրճի նոր հարվածից «հանգստանում» էին: Տեղ ժամանելուն պես դիակները հերթով նետում էին պատրաստված փոսի մեջ, որի հատակին կանգնած էր Մատվենը: Նա անձամբ կրակում էր բոլորի գլխին: Այդպես, մեկ «հերթափոխում» 200-250 «մահապատիժ» էր իրականացնում:

Հենց այդ փամփուշտների հետքերը ծոծրակային մասում հայտնաբերեց Յուրի Դմիտրիևը, ով ռուս պատմաբան Չուխինի հետ պատահաբար զանգեր է բացել Սանդարմոխում և կազմել է Սանդարմոխում գնդակահարվածների ցուցակը 6200 անունից: Եվ հենց այդ գործնությունն էր վերջերս նրան համարյա ցմահ բանտարկելու պատճառը: Այժմյան չեկիստները անհավես են վերաբերվում հին հանցանքները վերհիշելուն:

Նոյեմբերի 4-ին ոչնչացման աշխատանքներն ավարտվեցին, իսկ Միխայիլ Մատվենը Եժովի կադրերի մաքրման ժամանակ հակահեղափոխության դեմ հաջող պայքարի, խոշտանգումների և ավայտանքների համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով: Այդ հարբեցող, նվաստացած սրիկան մահացավ մեր օրերում...

Բռնաճնշումների ենթարկվեցին հոգևորականության գրեթե բոլոր անդամները: Սոլովկիում շատ քահանաներ սարսա-

փեյի մահով մահացան: Եվ ոչ միայն Սուլովկիում... Գրեթե նույն օրերին, պապական հիշարժան պատարագից հետո ձերբակալվեց ԽՍՀՄ բոլոր հայ կաթոլիկների առաքելական կառավարիչ Հակոբ Բաքարաթյանը՝ իբր ի պատասխան 1930 թվականի մարտին Հռոմի Պապ Պիոս XI-ի կողմից ԽՍՀՄ-ում «հալածվող եկեղեցու» համար աղոթքի համաշխարհային օրվա հայտարարության առթիվ: Կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքը նաև քաղաքական ենթատեքստ ուներ. նրանք բոլորը հայտարարված էին լրտեսներ:

Կաթոլիկ քահանաների մեծ մասն ամբողջությամբ վերացվեց, ոչնչացվեց: Սկզբում նրանց մեղադրեցին «Աստծո պատերի մեջ խորհրդային երկրի մասին ոչ ամբողջությամբ դրական կերպար ստեղծելու» մեջ, իսկ Սուլովկիում արդեն ավելացրին «լրտեսություն հօգուտ Վատիկանի»: 1932 թվականին ստեղծվեց արհեստական «Հայ կաթոլիկների խորհուրդը», որտեղ Բակարաթյանը, լինելով իշխանությունների ճնշման տակ, զրկվեց բոլոր հոգևոր պաշտոններից, ապա ձերբակալվեց, իսկ Սուլովկիում՝ նա նոր մեղադրանք ստացավ, արդեն մեղադրվող կաթոլիկ հոգևորականների խմբակային գործով:

Բաքարաթյանին հաջողվեց իր փոխարեն թողնել Դիմուրցյանին, ով միամտաբար աղաչում էր իշխանություններին հոգ տանել կաթոլիկների մեծ հոտի մասին՝ թույլ տալու ներկայացուցչություն Ստեփանավանում և Լենինականում: Դրա փոխարեն 75-ամյա ծերունուն ձերբակալեցին Կրասնոդարում և աքսորեցին Կիրովի մարզ: Իսկ Ջավախքը հայտարարվեց սահմանային գոտի: Միաժամանակ Լենինգրադի բանտում գնդակահարվեց էրիվանի ծնունդ, հայ կաթոլիկ քահանա Արսեն Խորենի Տեր-Կարապետյանը:

Գաղափարախոսությունների զիզգազներ... Հայ կաթոլիկական թեմի վերջին կառավարիչ Դիոնիսիոս Կատետանովիչը նացիստների կողմից օկուպացված Լվովում փրկեց մի քանի

հարյուր հրեաների՝ նրանց համար լրացնելով ծխական մատյանները և նշելով նրանց որպես հայ: Ինչ-որ տակա՞նք նրան մատնեց: Միտրոպոլիտի ջանքերի շնորհիվ՝ հայր Դիոնիսիոսը գետապայտում մահից փրկվեց: Իսկ 1945 թվականի նոյեմբերին նրան ձերբակալեցին արդեն խորհրդային իշխանությունները և մեղադրեցին «կոլաբորացիոնիզմի» և «ուղղափառություն ընդունել չցանկանալու» մեջ: Մահացել է 1954 թվականին ՀՍՍՀ Կոմիի Աբեգ գյուղի ճամբարում «անհասկանալի պատճառներից»: Վերականգնվել է շատ ուշ՝ 40 տարի անց, Ուկրաինայի իշխանությունների կողմից:

Իսկ Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Առաջինի ստոր սպանությունը:

Սուրադբեկյանը 20-րդ դարի ազգային ակնավոր գործիչներից մեկն էր: Բերիայի «կազմակերպած սպանությունն» ամբողջությամբ ընկած է հայ չեկիստների խղճի վրա: Եկեղեցին գլխատելու համար անհրաժեշտ էր սկսել համառ կաթողիկոսի լուծարումը: Նախ Բերիան Աղասի Խանջյանին հրամայեց անել ամեն ինչ, որպեսզի «դաշնակցական ու հակասովետական» արքեպիսկոպոս Խորեն Սուրադբեկյանը չընտրվի պատրիարքական գահին:

Խանջյանը, սակայն, «չկարողացավ» կատարել պատվերը, ինչը Բերիան չներեց: Դրանից հետո, ըստ մատնության «դոնոսի», ապրիլին «գործ սարքեցին», իսկ 1938 թվականին կաթողիկոսին խեղդամահ արեցին՝ նրա մահը ձևակերպելով որպես սրտի կաթված: Երևանի եկեղեցիները մեկը մյուսի հետևից սկսեցին փակվել, քահանաներին վտարեցին ու ձերբակալեցին:

Բոլշևիկյան վայրագությունների միայն թվարկումից մարդու արյունը սառչում է: Նրանք նույնիսկ ոտնձգություն կատարեցին մի ամբողջ ժողովրդի սրբավայրի նկատմամբ՝ բազմիցս բարձրացնելով թեմի վարչակազմի շենքը Սուրբ Էջ-

միաձնից վերցնելու հարցը: Սուրբ Էջմիածնի, որի քարերը դրել է ինքը՝ Գրիգոր Լուսավորիչը:

Միայն կաթոլիկների թվաքանակները (այլ դավանանքների, այդ թվում՝ ուղղափառների բռնաճնշումները անհամեմատ ավելի ծավալուն են)... Նրանցից ոմանք գնդակահարվել են, ոմանք զոհվել են բանտերում ու ճամբարներում: Ովքեր բախտ են ունեցել ազատ արձակվել, լքել են երկիրը: Եթե մինչև 1917 թվականը Ռուսական կայսրության միայն մեկ մայրաքաղաքում՝ Մանկտ-Պետերբուրգում, կային 68 ծխական և վերագրվող եկեղեցի ու մատուռներ, ապա 1939 թվականին ամբողջ ՌՍՖՍՀ տարածքում գործում էին միայն երկու կաթոլիկ եկեղեցիներ՝ Սբ. Լյուդովիկին՝ Մոսկվայում, և Լուրդի Տիրամայրը՝ Լենինգրադում: Այս տաճարները ստացել են «Ֆրանսիական դեսպանատներին կից եկեղեցիների» կարգավիճակ, և նրանց գործունեությունը՝ որպես «եկեղեցի օտարերկրյա դիվանագիտական աշխատողների համար», վերահսկվում էր իշխանությունների կողմից: Այլ կաթոլիկ տաճարները փակվեցին:

Որպես համեմատություն՝ Առաջին համաշխարհային պատերազմի վերջում թուրքերի կողմից կատարված կոտորածը մեծ վնաս հասցրեց հայ կաթոլիկ համայնքին: Մպանվեցին 7 եպիսկոպոսներ, 130 քահանաներ, 47 միանձնուհիներ և ավելի քան 100 000 աշխարհականներ: Ըստ տարբեր աղբյուրների՝ Կայսրության գրեթե 150 հազար կաթոլիկ հայերից ողջ է մնացել մոտ 20 հազարը, որոնք հիմնականում (տեղահանության պատճառով) հաստատվել են Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, իսկ նրանց մի չնչին մասը մնացել է Պոլսում և Անկարայում:

Գլուխ յոթերորդ

Հռոմը՝ հեռու, փայլով ծածկված, ոչ թե սրով՝ ստով խաբած, փրկարարար իր վահանը մեզ խոստացած՝ դաժան վայրագ օսմաններից, բայց չփրկեց կարսիքներից...

Չեքիաթային հեռուներում ու երազներում շքեղ վրաններով ու հոյակապ տաճարների ցայտաղբյուրներով՝ որպես կաթոլիկ եկեղեցու գործության խորհրդանիշ, փայլում է Հավերժական քաղաքը, կանչում ձգում է Վատիկանը: Հիմնական տաճարներից մեկում հենց նոր դադարեցին հնչել պատարագի ձայները: Հայ Կաթոլիկ եկեղեցու Հայոց նոր պատրիարք Գրեգուար Պիեռ XV-ի հռչակման տոնական պատարագն էր:

Աղաջանյանը փոխարինեց Ավետիս Պետրոս XIV Արփիարյանին: Եվ մի տխուր խորհրդավոր համընկնում՝ նույն նույնբերյան օրերին, երբ Ստեփան Երոյանն ու իր հավատակիցները հանգչում էին Սոլովկիի սառած հողում՝ եղբայրական գերեզմանում, հայ կաթոլիկե բոլոր ծխերում նշվեց նոր պատրիարքի ընտրությունը: Տարբեր ճակատագրեր և կյանքի տարբեր ուղիներ...

«Տոնակատարութիւնները տարածուեցան Լիբանան՝ Զմմառ, Պէրթի մօտ, ուր կը գտնուի Հայոց Հայրապետի նստավայրը, եւ հազարաւոր ուխտաւորներ ողջունեցին նոր Պատրիարքը, համբուրեցին անոր պատմուճանի ծայրը եւ ծաղիկներ նետեցին անոր ճամբան»:

Այսպիսով, Գրեգուար Պիեռ XV. ժամանակին ջավախքի ջանասեր և աստվածասեր տղա Գրիգոր Աղաջանյան, Հռոմի կողմից հրաշքով փրկված՝ Նա նախ դարձավ կարդինալ, ապա՝ Հայոց պատրիարք: Արդյոք երջանի՞կ էր...

Կարծում եմ, երբ մենակ էր Աստծու հետ, ամենայն հավանականությամբ, երջանիկ էր: Բայց ինքն իր հետ մնալով, վտարանդիի խոր ապրումներից բզկտված և գրկված լինելով ըն-

տանիքի հետ ունեցած կապից, նորընտիր պատրիարքը հազիվ թե իրեն երջանիկ կզգար: Ամեն ծխականի մեջ նա տեսնում էր բուլշևիկյան իշխանությունների կողմից իրենից խզված մայր, քույր, եղբայր: Նա ամեն քահանայի մեջ տեսնում էր հավատացյալ նահատակ եղբայրներին:

Արդյոք գիտե՞ր, որ ճակատագրի հեգնանքով այն նույն օրերին, երբ հանդիսավոր պատարագներ էին թնդում նոր պատրիարքի պատվին, և 1937 թվականի նոյեմբերի 30-ին Ջամադի Ջունիիեից ոչ հեռու գտնվող կաթողիկե եկեղեցու շքեղ կամարների տակ գահակալվեց ինքը՝ Գրեգուար Պիերո (Գրիգոր Պետրոս) Աղաջանյանը, Սոլովկիում նոյեմբերյան այս ցուրտ օրերին ընդհանուր փոսի մեջ թաղեցին ու սառած հողով ծածկեցին մահապատժի ենթարկված ու սպանված քահանաներին, նրանց հետ միասին՝ Ստեփան Երոյանին, նրա եղբորը, համագյուղացուն:

Գիտե՞ր արդյոք, զգո՞ւմ էր, թե ինչ է կատարվում իր հայրենիքում, ուր այլևս չէր կարող գնալ այսպիսով խուսափելով խոշտանգված եղբայրների ճակատագրից...

Երոյանից ընդամենը երկու տարով մեծ, նույն սուրբ հոր կողմից նույն կնքավազանում մկրտված՝ հասցրել էր այցելել նրան՝ Հոռոմ մեկնելուց առաջ: Աստծո կամոք նա գնաց բողոքովին այլ ճանապարհով, և, կիսելով ուսման նստարանները՝ նրանք երկուսն էլ գտան տարբեր ճակատագրեր: Մեկին փրկեց Հոռոմը, մյուսի գլուխը կերան բուլշևիկները...

Գլուխ ութերորդ

Սգում էր երկինքը՝ Պապը մահացավ: Գլխավոր շտաբն իր գործին անցավ, մարդիկ ընտրում էին, ամբոխը սպասում, գուշակել են փորձում, մութ ուժերը երբեք չեն քնում, սրբոց հայրերին դողի մեջ պահում...

Առավոտյան Հոռոմում թույլ անձրև էր գալիս, այնուհետև աստիճանաբար ուժեղանում էր, և շուտով Հավերժական քաղաքի երկինքը կախվեց այնքան մոտ գետնին, որ կարծես, ձուլվել էր նրա հետ: Թվում էր, թե երկրային ու երկնային երկնակամարները այժմ կմիավորվեն մեկ ընդհանուր ամբողջության մեջ և կփլուզվեն հնագույն մայրերի վրա: Ջրային շիթերի մեջ Սբ. Պետրոս, Սան Պետրո հրապարակի շուրջ մայրերը անհետացան տապալված աշնանային անձրևների հորդառատ հեղեղների տակ, և Հավերժական քաղաքը սկսեց ավելի շատ նմանվել օրհնված Վենետիկին:

Երևի երկինքն էլ էր սգում՝ իր ծոցը վերցնելով Հոռոմի հերթական Պապի՝ Պիոս XII-ին, բայց սուրբ տեղը երբեք դատարկ չի մնում, և Վատիկանի երկնքի վրա պատահողոված կապարե ամպերը ևս մեկ էջ բացեցին հաջորդ Պապի համար: Էուջենիո Պաչելլին Պիոս XII Պապը, վերջացրեց իր կյանքի ուղին, և կարդինալ *կամերլենգոն* արդեն հայտարարել էր. «Vere Papa mortuus est», այսինքն՝ «Հոռոմի պապը իսկապես մահացել է»:

Մահվանից անմիջապես հետո Պապի մարմինը զմուսեց Ջենարո Գոլիան՝ Հիսուսի Սրտի կաթոլիկ համալսարանի բժշկության ֆակուլտետի Անատոմիայի ինստիտուտի ասիստենտը: 43 տարի անց՝ 2001 թվականին, արտաշիրիման ժամանակ, այն բացահայտվել է ամբողջովին անփուտ: (հավանաբար սա սովետական «Ուղեղի գիտահետազոտական ինստիտուտի» նմանօրինակն է, որը պատասխանատու է Վլադի-

մի Բյւիչի անփտելի լինելու համար, ում մահով և հիմք դրվեց Ուղեղի պանթեոնի հավաքածուին):

Մահացավ պապը իր հետ տանելով կոմունիստներին ջախջախելու իր նվիրական երազանքը: Մահացավ Պապը, որին երբեմն անվանում էին «Հիտլերի պապ», քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա հատկապես համագործակցում էր ն՝ Մուսոլինիի, և՛ Հիտլերի հետ, վտարում էր կոմունիստներին և փորձելով հոտին շեղել դասակարգային պայքարից՝ մայիսի 1-ը հռչակեց եկեղեցական տոն՝ նշանակելով աշխատավոր ժողովրդի հովանավոր պատրոն սուրբ Հովսեփի ատաղձագործին, որն, իհարկե, իսկական պրոլետարի տեղ էր անցնում:

Ճիշտ է, նույն Պապը ին՝ որպես պատասխան ֆրանսիացի դիվանագետի խոսքերին, թե «ավելի լավ է՝ Գերմանիայում իշխանության ղեկին լինի նկարիչ Հիտլերը, քան պրուսական գեներալները», պատասխանեց. «Դուք չգիտեք, թե ինչի մասին եք խոսում: Պրուսական գեներալներն իրենց սխալներն ունեն, բայց այս մարդիկ (նացիստները) սատանաներ են»: Եվ սա այն դեպքում, երբ նացիստները դեռ չէին նվաճել Եվրոպան, և նա ինքը, Պապ չէր:

Պատերազմող աշխարհում Պիոս XII-ը խաղաղության նախարար էր: Մի օր Բոսիֆ Ստալինը, իմանալով Վատիկանի հերթական քաղաքական դեմարշի մասին, հարցրեց իր մտերիմներին. «Իսկ քանի դիվիզիա ունի Պապը»: Հարցը հռետորական էր: Մոսկվայում, իհարկե, գիտեին, որ այս պետության ազդեցությունը 0,44 քառ. կմ մակերեսով որոշվում է բոլորովին այլ գործոններով, և ոչ պակաս կարևոր տնտեսական գործոններով: Երբ Պապին ասացին, որ Ստալինը հարցնում է, թե քանի դիվիզիա ունի Պապը, նա ասաց. «Դուք կարող եք տեղեկացնել իմ որդի Ջոզեֆին, որ իմ դիվիզիաներին նա հանդիպելու է երկնքում»: Այսինքն՝ այս մեղսագործ երկրում Պապը չէր պատրաստվում հարձակվել Ստալինի վրա:

Նույնիսկ Ստալինի մասին կարող էր ասել՝ «որդիս»: Դա Պապը իր գաղտնիքն էր: Ճիշտ է, հայտնի էր, որ Պիոս XII-ի վարչակարգի վերջում եկեղեցին կառավարում էր մայր Պասկուալինան: Ամբողջ աշխարհի համար այս Պապը երկու անգամ էր մահացել: Կարծես նման մի բան կատարվել է, երբ ընտրվեց նրա իրավահաջորդը: Ընթերցողին կարող է հետաքրքիր լինի՝ իմանալու երջանկահիշատակ Պիոս XII-ի մասին, աշխարհում՝ Պապը ի, Իտալիայում հայտնի «սևերի» կլանի սերունդ, որոնց ներկայացուցիչները դարերով ծառայել են պապական գահին: Խնամի, ծանոթ, բարեկամ... դարավոր օրենք...

Պիոսի պապը՝ Մարկանտոնինոն, դարձավ պապական մարզի ֆինանսների նախարար և զբաղեցրեց մի շարք բարձր պաշտոններ Պիոս IX-ի օրոք: Էռնեստոն դարձավ Վատիկանի ծառայության խոշոր բանկիր, Banca di Roma-ի հիմնադիրը, մեկ այլ եղբոր իրավաբանի որդին դարձավ Հռոմի Պապ Պիոս XII-ը: Բայց ինչպե՞ս կարող է բիզնեսը դուրս մնալ ցանկացած ընտրություններից: Ընդհանրապես, Հռոմի պապի ընտրության նկատմամբ հետաքրքրությունն ամբողջ աշխարհում միշտ էլ հսկայական է եղել:

Կաթոլիկները, ուխտավորները, թերթերի աշխատակիցները և պարզապես անբանները լցվել էին Հռոմում և նրա շրջակայքում: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ հիացած ու հարգալից շնչում էին, որ «կոնկլավը լսում է հինգ հետախուզական գործակալություն՝ արևմտյան գերմանական, բրիտանական, ֆրանսիական, իսրայելական, ակնհայտորեն՝ նաև ԿաժեԲե-ն», մեր ԿԳԲ-ն: Ահա թե ինչպիսի կարևոր իրադարձություն է Հռոմի պապ ընտրելը:

Իսկ այժմ Սիքստինյան կապելլայի շրջակայքում, որտեղ 1870 թվականից տարիներ շարունակ անց են կացվում Կոնկլավները, մարդկանց բազմությունը մի քանի օր է չի ցրվում, իսկ նորերը գալիս ու գալիս են: Այն ժամանակվա Պապ Սիքստոս IV-ը մատուռը տվել է նկարագարդելու՝ պա-

հանջելով, որպեսզի նկարի ինքը հանճարեղ Միքելանջելոն: Պերուջինո, Գիրլանդայո, Բոտիչելլի, Ռոսսելլի, Մինյորելլի. նրանց փայլուն վրձիններն էին, որ զարդարել են մատուռի պատերը, նրանք իրենց ձեռնադրել էին այն նկարելու:

Եվ այս հանճարագարդ մատուռը կառուցել է Միքստոս IV-ը ամենահանդիսավոր հանրային հանդիպումների համար: Նման առանձնահատուկ հանդիսավոր ժողովների թվում է հենց Կոնկլավը՝ Հռոմի պապին ընտրող կարևորագույն մարմիններից մեկը:

Հռոմում Պապ են ընտրում՝ երկրի վրա Աստծու փոխանորդին: Իհարկե, Աստված հավիտյան ու հավերժ է: Իսկ պապերը, լինելով մահկանացու, գնում են մարդկային ճանապարհով և, բնական է, հակված են մեռնելու:

Պապի յուրաքանչյուր դրախտ մեկնելուց հետո ամբողջ աշխարհից կարդինալները հավաքվում են մատուռում, և սկսվում է գաղտնի հանդիպումների ամենագաղտնին՝ ընտրում են երկրի վրա կաթոլիկների Աստծուն, քանի որ Աստվածը կառավարում է երկնքում, իսկ Պապերը երկնքի տակ: Այս դեպքում մեծամասնությունը հաշվարկվում է բավական նրբորեն՝ ձայների երկու երրորդը և, չգիտես ինչու, գումարած ևս մեկ ձայն:

Քվեարկելուց հետո քվեաթերթիկներն այրում են, և եթե ընտրությունը կայացել է, հռոմեական կուրիան, տեսնելով աշտարակից հոսող սպիտակ ծուխը, աշխարհին հայտարարում է, որ նոր Պապ է ընտրվել: Նախկինում այրում էին թաց ծղոտը, այժմ հատուկ գնդիկները տալիս են ցանկալի գույնը: Դարից դար կամերլենգոն արտասանում է այդ հաղորդությունը՝ Պապ այսինչը, ... անունը, ... համարը: Այո, այո, բոլոր պապերը համարակալված են... Իսկ մատուռի պատերից դուրս ժողովուրդը նույնպես դարից դար մոլուցքի մեջ բղավում է. «Պապ ընտրեցին, Պապին ընտրեցի և, Պապն ընտրվե՛ց»:

Անհավատալի է, բայց ընդամենը հարյուր տարի առաջ Պապը համարվում էր «Վատիկանի բանտարկյալ»: Բարեբախտաբար, Պիոսներից մեկը՝ տասնմեկերորդը, ով իզուր չէր հռչակ ձեռք բերել որպես փայլուն գիտնական և դիվանագետ, ընդլայնեց Սուրբ աթոռի դիվանագիտական կապերը: Իտալական կառավարության հետ կնքած կոնկորդատի շնորհիվ՝ Վատիկանը ձեռք բերեց դարերով սպասված անկախ պետության կարգավիճակ, որից հետո պապերը կարողացան ազատորեն այցելել Իտալիա:

Գլուխ իններորդ

Դարերից նամակներ են գալիս, մարգարեն վաղուց է նշել՝
Պապերին անվանել և կարգել, բոլորին համարել և թվել...

Ինչպես միշտ, Հռոմի պապի ընտրության օրերին Միքստինյան կապելլան հանրության համար անմիջապես փակվեց: Յուրաքանչյուր կարդինալ այս անգամ ստացավ մեկական գլան գուգարանի թուղթ, երկու գնդիկավոր գրիչ, տասը կտոր գրելու թուղթ, հայելի, մահճակալի համար մի փոքրիկ լամպ (հավանաբար, տարածքում ավելի վատ մահճակալներ չկային, դրանք հաստատ ճեմարանից էին փոխառված): Մեկ աթոռ՝ կոշտ մեջքով, միայն մեկ օճառ (որ շտապեն) և երկու բարակ սրբիչ, իսկ զբոսնելը՝ միայն փոքրիկ բակում: Եվ սնունդը նույնպես հիանալի չէր: Հավանաբար բանտում նույն կանոններն էին:

Բոլոր կարդինալները քարտ ստացան, որի վերին կետում տպված էր *Eligo in summam pontificem* (ես ընտրում եմ քահանայապետ), իսկ ներքևում կար տեղ անունը մուտքագրելու համար:

Այս ամբողջ գաղտնիությունը մնացել է և այսօր, թեև այն մտցվեց միայն 1903 թվականին և միայն Ավստրիայի կայսրի Կոնկլավի վրա ազդեցությունը սահմանափակելու համար (սա Կոնկլավի պատմության մեջ օտարերկրյա միջամտության վերջին օրինակն էր, որը տեղի ունեցավ Լեո XIII-ի մահից հետո): Այն Կոնկլավում կարդինալ Պուսինին կարդաց կայսր Ֆրանց ժոզեֆի նամակները, որտեղ նա խորհուրդ էր տալիս ում և ինչպես ընտրել:

Օգտվելով Կրակովի արժանապատիվ արքեպիսկոպոսի ձայնի իրավունքից՝ նույնիսկ վետո դրեց կարդինալ մարկիզ դել Տինդարոյի ընտրության վրա (մինչ այդ Մուրբ աթոռի և Կամերլենգոյի պետքարտուղար):

Այս անգամ կարծես ոչ ոք նամակներ չէր գրում կամ կարդում, բայց կոնկլավը նստեց երեք ամբողջ օր՝ ի տարբերություն նախորդի «բլից» կոնկլավից, երբ ընտրվեց հենց այս Պիոս XII-ը: Ու տևեց ընդամենը 20 ժամ: Մա ամենադժվար կոնկլավներից մեկն էր: Մոտ 50 կարդինալներ (ավելի ճիշտ՝ 51) եկան Հռոմ՝ պապին ընտրելու: Եվ նրանցից երկուսը՝ Յոզեֆ Մինձենտին՝ Սոցիալիստական Հունգարիայից և Ալոյսիուս Ստեպինացը՝ գրեթե սոցիալիստական Հարավսլավիայից, բացակայում էին ցավալի պատճառով: Երկու եպիսկոպոսներն էլ իրենց երկրներում կոմունիստական կուսակցության զգոն հսկողության տակ էին, և, մեղմ ասած, չափազանց սահմանափակված էին տեղաշարժի մեջ:

Այս տարի (1958 թ.) առաջին անգամ իտալացիները փոքրամասնություն էին կազմում (51 կարդինալից միայն 17 իտալացի), միայն մեկ երրորդն էին ու ստիպված էին հաշվի առնել այլ երկրներից իրենց գործընկերների ձայները: Այսպես կոչված, դավանափոխությունը լավ է նոր տարածքներ շահելու, նոր միջավայրեր ստեղծելու համար, բայց հայտնի է, որ իշխանությունն աշխատում են ընտրել միայն «մերոնցից»: Մահացած Պիոս XII Պապը ժամանակին հաստատեց Լատինական Ամերիկայի Եպիսկոպոսական խորհուրդ, բայց, իհարկե, Վատիկանի խիստ հսկողության ներքո:

Եվ խոսելով 1956թ. Կաթոլիկ աշխարհականների II համաշխարհային կոնգրեսում՝ Պիոս XII-ը կոչ արեց Լատինական Ամերիկայի հավատացյալներին և եկեղեցականներին պայքարել «մահացու վտանգների դեմ», որոնք սպառնում են նրանց ահավոր «իզմերով»՝ մարքսիզմ, բողոքականություն (պրոտեստանտիզմ) և սպիրիտուալիզմ:

Այսպիսով, աֆրիկյան նոր պետություններում հայտնվեցին նրանց եպիսկոպոսները: Մարքսիզմի ժանտախտի դեմ պայքարի դրոշների ներքո հավաքվեցին հավատակիցների նոր շարքեր, քանի որ Աֆրիկայի նոր պետություններն իրենց

հերթին կարիք ունեին Վատիկանի շողշողացող սրահների աջակցությանը, որը խոստանում էր երջանկություն, խաղաղություն և հնազանդություն ժողովրդներին՝ կաթոլիկ հոտին... Ո՞վ գիտի, գուցե պապերի ադոթքները հասնում են ամենաբարձրյալին: Օրինակ, գիտե՞ք, որ 1984 թվականին Ֆաթիմայի նամակում Բոասնեսու Պողոս II-ը ադոթում է Աստվածամորը կոմունիզմի փլուզման համար:

Աստվածամայր, գուցե կրկնե՞ս...

53 ընտրողներից ներկա էին 51-ը, բացակայում էին 2-ը (նրանց չեն թույլատրել համապատասխան գլխավոր կոմկուսի քարտուղարների կողմից), Աֆրիկայից՝ 2, Հյուսիսային Լատինական Ամերիկայից՝ 4, Ասիայից՝ 3, Եվրոպայից՝ 33, Օվկիանիայից՝ 1 և 17՝ Իտալիայից: Օրինակ, 1922 թվականի կոնկլավում կային 31 իտալացի կարդինալներ: Դարերով կարդինալները սովոր էին իտալացի պապ ընտրել: Այժմ նկատվում է այլ միտում՝ չընդգծել Իտալիայի առանձնահատուկ դերը կաթոլիկ աշխարհում, և լեհ Վոյտիլան ճեռքեց հազարամյակների ավանդույթը: Իսկ մեր հերոսը ձախողվեց:

Եվ ընդհանրապես, մի հայտնի դիտարկում. «Վատիկանը կառավարվում է ճիշտ անյպես, ինչպես Կրեմլը: Միակ տարբերությունն այն է, որ եթե Կրեմլում բոլորը գիտեն, թե ով է մտնում Քաղցյուրոյի կազմի մեջ, Վատիկանը դա չգիտի»: Եվ սա ասվում է ավտորիտար կառույցների բարքերի մասին: Իսկ Միրին, ավելին, իր ողջ կյանքում մերժել է եպիսկոպոսների գործընկերության գաղափարը: Ահա թե ինչն էր վախեցնում եպիսկոպոսներին:

Լրագրողներն ու պապարացիներից յուրաքանչյուրը հարմարավետ տեղավորվել էին կամ որսում էին մոտակայքում շարժվող կարդինալներից որևէ մեկին հարցեր տալու համար: Չնայած նման ուշադրությանը՝ հրապարակի շուրջը գտնվող բազմաթիվ ականատեսներից ոչ ոք չզարմացավ անգամ, որ մի քանի կարդինալների կոնկլավ բերեցին բուժա-

կան պատգարակով, և որ նրանցից մեկը մահացավ հենց կոնկլավում, մինչդեռ մի քանի հարգարժան երեցներ ավելի շատ նման էին կենդանի դիակների, քան շանս ունեցող «պապաբիլին»:

Յուրաքանչյուր կոնկլավի կարդինալին ուղեկցում էին երկու օգնականներ, և դա շատ հարմար էր, քանի որ կոնկլավին մասնակցող եկեղեցու իշխանների համարյա ամեն երրորդը թույլ ու գառամյալ էր: Առանց արտաքին օգնության չէր կարող շարժվել: Ումանց պարզապես ձեռքերի վրա էին տանում:

Եվ այսպես, բոլոր հայացքներն ուղղված էին դեպի մատուռի տանիքը, ավելի ճիշտ, տանիքի ծայրը: Անհամբեր սպասում էին լուրերի՝ ծխի տեսքով: Անկասկած, պապաբիլներն իրենք էլ էին անհանգստանում: Բոլոնիայի տաքարյուն և ամբարտավան կարդինալ Լերկարոն, որն այնքան էլ շանս չուներ, քանի որ շատ ծիրանավորներ նրան չէին սիրում, այնուամենայնիվ համարյա պապաբիլի էր համարվում, բայց Լերկարոն հույս ուներ պարզապես աչքի ընկնել (գոնե ավելի ուշ ժամանակների համար): Պապաբիլ էր նաև կուրիայի կարդինալ Վալերին՝ շատ ծեր մի կարդինալ, ով ծառայել էր պատերազմի ժամանակ Վիշի առողջարանային քաղաքում՝ որպես նվիրակ, համագործակից-կոլաբորացիոնիստ մարջալ Պետենի օրոք, և այդ հանգամանքը ոչ մի կերպ չէր ամրապնդելու իր դիրքը կոնկլավում: Ասենք, ֆրանսիացի եպիսկոպոսների մեծ մասը, ինչպես և Վալերին, համագործակցել են նացիստների հետ, այդպիսի բաները դժվար է թաքցնել...

Բայց հանուն արդարության հարկ է նշել, որ մոլեռանդ քարոզչությունը, հատկապես կոմունիստների աջակցությամբ, կարծրացրեց մարդկանց հոգիները՝ մեղադրելով եկեղեցուն գերմանացի թշնամուն խրախուսելու մեջ, թեև իրականում թե՛ նվիրակը և թե՛ եպիսկոպոսները փորձում էին փրկել միայն այն, ինչ դեռ կարելի էր փրկել՝ օգնելով հրեաներին և

քաղաքական հալածյալ ֆրանսիացիներին փախչելու գերմանական բանակից:

Սակայն Անջելո Ռոնկալլին, ով նշանակվեց Ֆրանսիայի նվիրակ այն բանից հետո, երբ դը Գոլը պահանջեց հետ կանչել Վալերիին, կարողացավ գրեթե շահել դը Գոլի վստահությունը, թեև նա բախվեց մի շատ բարդ և անսպասելի խնդրի հետ: Ըստ էության՝ դիմադրության հերոս, ինքնասիրահարված գեներալը ահավոր զայրացած էր, որ երբ Անջելոն քայլում էր Փարիզի փողոցներով, մարդկանց ամբոխը ողջունում և ամենուր հետևում էր իրեն: Խանդոտ գեներալը նվիրակին խորհուրդ է տվել լիմուզին նստել:

Մի քանի տարի անց դը Գոլին վերջապես հաջողվեց ազատվել այս խորամանկ գեղջուկից, որը խելքից դուրս ժողովրդականություն էր ձեռք բերում իր՝ դը Գոլի ընտրագանգվածում, և Պապը հանձնվեց. ֆրանսիացի կաթոլիկների սիրելիին պարզևատրեց կարդինալի կարմիր գլխարկով, ու Անջելոն տեղափոխեց Վենետիկ, որի բնակիչները հետագայում Ռոնկալլիին պաշտելու էին:

Մինչ այդ Փարիզում Ռոնկալլին իր գյուղացու հոգու պարզամտությամբ թե՛ խորամանկությամբ կարողացավ շփում հաստատել անգամ ԽՍՀՄ ներկայացուցիչների հետ: Նրա այս հաջողությունների մասին բավականին զվարճալի մանրամասներ կան: Ամանորից առաջ Ռոնկալլին հրաման է ստանում՝ շտապ մեկնել Փարիզ՝ որպես նորանշանակ նվիրակ: Ինչու՞ էր դա հրատապ: Սովորության համաձայն՝ կաթոլիկ երկրներում դուայենը նվիրակն էր: Իսկ դը Գոլը և մի քանի այլ առաջնորդներ իսկապես չէին ուզում, որ այն ժամանակվա խորհրդային դեսպան Բոգոմոլովը շնորհավորանքներ կարդար նրան օտարերկրյա դիվանագետների անունից: Խորհրդային դեսպանի հետ հանդիպմանը Ռոնկալլին շատ բնական և առանց քաշվելու այսպես արտահայտվեց. «Հուսով եմ, որ պատրաստ ելույթ ունեք, կխնդրեի՝ փոխանցեք: Հնա-

րավոր է՝ կօգտագործեն»: Պետք է ասել, որ նվիրակին հաջողվել է խիստ զարմացած Բոգոմոլովի այս ելույթը մատուցել դը Գոլին գրեթե առանց ուղղումների:

Իսկ դիվանագիտական ընդունելություններից մեկում նվիրակ Ռոնկալլին նկատեց, որ խորհրդային դեսպան Բոգոմոլովը կանգնած է բոլորից առանձին և խոժոռված: Նա մոտենում է դեսպանին ու դիվանագետի հատուկ բավականին անսովոր գրույց սկսում. «Ձե՛րդ գերագանցություն, – ասում է նա, – մենք հակառակ ճամբարներում ենք, բայց մի կարևոր ընդհանուր բան ունենք՝ մեր որովայինը: Երկուսս էլ կլոր ենք...»:

Բոգոմոլովը սրտանց ծիծաղում է, և սառույցը կոտրվում է: Այսպիսի հանգամանքները պետք է հաշվի առնվեն, երբ քննարկվում է քարերի դիրքը...

Ռոնկալլին, իրոք որ, բավականին ուժեղ դիվանագետ էր: Իզուր չէին նրան հարգում իր բռնունակ, իսկը գյուղացու մտքի համար: Շատերին է հայտնի այն պատմությունը, երբ նա 1935 թվականին ժամանեց Անկարա՝ որպես նվիրակ: Քանի որ Ռոնկալլին ներկայացնում էր պապական գահը և Աթենքում, դժվար չէ պատկերացնել, թե որքան բարդ էր նրա համար միաժամանակ գործել երկու հակասական միջավայրերում: Հույներ և թուրքեր՝ լցված հիշողություններով վերջին տարիներին կատարվածի մասին: Եվ Աստված մի արասցե, նրանց հետ միաժամանակ գործ ունենալ, մանավանդ այն բանից հետո, ինչ տեղի ունեցավ 1915 թվականին:

Այն ժամանակ թուրքական կառավարությունը պաշտոնապես չէր ճանաչում պապական ներկայացուցչության առկայությունը: Այստեղ կաթոլիկներ նույնիսկ ավելի քիչ կային, քան Բուլղարիայում, և այս երկրներում կրոնական կյանքը հեշտ չէր: Ռոնկալլիի՝ Ստամբուլ ժամանելուց մի քանի ամիս անց կառավարությունը օրենք ընդունեց, որը քահանաներին արգելում էր եկեղեցական զգեստները կրել: Չզիտես ինչու, զգեստ կրելու հարցը խիստ կարևոր էր թելադրել դեռ

օսմանյան ժամանակներից: Իսկ Հունաստանում Ռոնկալլին նույնպես ստիպված էր զբաղվել ցանկացած կրոնական քարոզչության արգելքների ու կասկածների պայմաններում, որոնք հռոմեական կաթոլիկների համար ստեղծվել էին խիստ ուղղափառ երկրում: Բայց նա անսահման համբերատար ու մարդկային էր և գործելով առավելագույն խնամքով՝ կարողացավ հարթել շատ սուր անկյուններ, ու այս դժվարին պայմաններում նա շատ լավ գլուխ հանեց իր պարտականություններից, գուցե դրա համար էլ նրան նվիրակ ուղարկեցին Փարիզ, որտեղ մաքուր եպիսկոպոսների պակաս կար:

Այնուամենայնիվ, եկեք վերադառնանք Հռոմ... Թերթերի աշխատակիցները, միասին կուչ եկած, սպասում էին արդյունքներին: Նրանք փորձում էին գուշակել ապագա պային, նորից ու նորից գնահատում էին պապաբիլների՝ փարաջայի տակ թաքցրած չափերը և աշխատում էին կռահել, թե ո՞վ է լինելու, ու՞մ կընտրեն... Դարավոր հաշվարկներով՝ գերը փոխարինում էր նիհարին, և Պաչելիից հետո պապաբիլ Գրեգուար Աղաջանյանը՝ հռոմեական կուրիայի կարդինալը և Հռոմի հայ կաթոլիկների պատրիարքը, պարզապես պետք է փոխարիներ հաստամարմին Պիոսին: Հայ կաթողիկե եկեղեցունախյկին պատրիարքի ազգանունը մի **ո** տառի համար չէր բռնում, թեև անվան մեջ կար:

Բայց ամենահաս լրագրողները լուսաշխարհի հանեցին մի ուրիշ, կիսամիստիկ ցուցակ, այսպես կոչված, Մալաբիա մարգարեի ցուցակը, ըստ որի՝ Գրեգուար Պիերո Աղաջանյանը պետք է պապ դառնար: Իռլանդացի եպիսկոպոս Մալաբիայի այս ցուցակը բավականին զվարճալի է, և որքան էլ անհավատալի է, նույնքան տարօրինակ կերպով կատարվում էին նրա մարգարեությունները: Հաճախ դժվար է լուրջ ընդունել այս սահմանումները, բայց նաև դժվար է չհամաձայնել դրանց հետ:

Մաղաբիայի մարգարեություններից

Սուրբ Մաղաբիան՝ Հյուսիսային Իռլանդիայի Արմադի կաթոլիկ արքեպիսկոպոսը, որն ապրել է 1094–1148 թվականներին, թողել է մի հետաքրքիր գիրք, որը լայնորեն հայտնի դարձավ Եվրոպայում միայն իր մահվանից հինգ հարյուր տարի անց: Իռլանդական սրբի կոմպոզիցիան պարունակում է 112 կարճ արտահայտություններ՝ «կարգախոսներ», որոնք վերաբերում են Հռոմի պապերի (և մի քանի հակապապերի) թագավորությանն ու կյանքին՝ սկսած Մաղաբիայի ժամանակակից Սելեստին II-ից մինչև հարյուր տասներկուերորդ, որին կոչում է Պետրոս Հռոմեացի (Petrus Romanus) .

Այդ պատճառով կարծում եմ՝ խիստ կասկածելի է, որ ապագայում կգտնվի որևէ պապ, որը կընտրի Պետրոս անունը:

104-րդ Պապ Բենեդիկտոս XV (1914–1922): *Religio depopulata*՝ հավատացյալների կրճատում: Հռոմի պապ Ջակոմո դելլա Կիեզայի գահակալության շրջանը մոայլվեց Մեծ պատերազմի իրադարձություններով և բազմաթիվ մարդկանց մահերով: Կարգախոսը, նկատի ունենալով ճակատում մահացած կաթոլիկների հսկայական թվաքանակին, միանգամայն հնարավոր է՝ կանխատեսել է հարյուր հազարավորների մահը՝ «իսպանական զրիպից», որը սկսվել էր կաթոլիկ Իսպանիայում:

105-րդ Պիոս XI Պապ (1922–1939 թթ.): *Fides intrepida*՝ անվախ, համարձակ: Հավատքը Աբիլե Ռատտիին տարավ համարձակ բանադրանքի՝ ուղղված թե՛ կոմունիզմի, թե՛ մոլեզևտոլ ֆաշիզմի ու նացիզմի դեմ:

106-րդ Պիոս XII Պապ (1939–1958): *Հովիվ Անգելիկոս*՝ հրեշտակ հովիվ Եուջենիո Պաչելլին եկեղեցու հովիվն է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան վերակառուցման դժվարին ժամանակաշրջանում: Նրա վրա էր դրվել կառավարելու հոգևոր և նյութական աշխարհը, որը բարձրանում էր պատերազմի մոխիրներից: Պիոս XII

պապի մասին, ի թիվս այլ բաների, նկարահանվել է ֆիլմ՝ «Հովիվ Անժելիկուս» վերնագրով:

107-րդ Պապ Իրաննես XXIII (1958–1963)՝ *Pastor et nauta*, նավաստի հովիվ: Անջելո Ռոնկալլին Վենետիկի պատրիարքն էր մինչև պապությունը:

108-րդ Պապ Պողոս VI (1963–1978 թթ.)՝ *Flos florum*, ծաղկած ծաղիկներ: Բայց Մոնտինին, կարծես միտումնավոր, երևան էր գալիս ձեռքերին շուշաններ, զինանշանի վրա նույնպես շուշաններ ուներ:

109-րդ Պապ Իրաննես Պողոս I (1978–1978)՝ *De medietate lunae*՝ միջակություն լուսնի տակ: Խոսքը Վենետիկի նախկին պատրիարք Ալբինո Լուչիանի պապի մասին է: Մալաքիան նշում է «լուսնի ժամանակը» անդրադառնալով լուսնային ամսվան: Նրա հովվապետությունը տևեց ընդամենը 33 օր: Բայց դա կարող է թարգմանվել նաև որպես «Միջակություն լուսնի տակ»:

110-րդ Սուրբ Պապ Իրաննես Պողոս II (1978–2005)՝ *De labore solis*՝ միայնակ աշխատավորներից դեպի արևելք երկրից (դեպի արև):

Կարող Վոյտիլան կհիշվի որպես ազգությամբ՝ լեհ Պապ, Արևելքից: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Կարող Վոյտիլան ծնվել է արևի խավարման օրը՝ 1920 թվականի մայիսի 18-ին: Ճիշտ նույն արևի խավարումը նկատվել է նրա հուղարկավորության օրը:

111-րդ Պապ Բենեդիկտոս XVI (2005)՝ *De gloria olivae*՝ ձիթապտղի փառք (հավանաբար պարզևատրվել է ձիթապտղի փայտով): Բենեդիկտոս XVI, գերմանացի կարդինալ Ջոզեֆ Ռատցինգեր, Բենեդիկտյան շքանշանի անդամ, որը հայտնի է նաև որպես «Օլիվետա»:

Ռատցինգերը ծնվել է Ավագ շաբաթ օրը՝ Չատկի ժամանակաշրջանում, ձիթապտուղների նշանի ներքո (Հիսուսն ու

աշակերտներն այս ամբողջ ընթացքում ապրել են հենց Ձիթենյաց լեռան վրա):

112-րդ և Հռոմի իբր վերջին Պապ Պետրոսը մինչև աշխարհի վերջը (սա էլ էր գուշակում աշխարհի վերջը...): Անունը շատ հուշող է, մինչ Պետրոս I-ը կաթոլիկ եկեղեցու առաջին հովիվն էր դրախտի բանալու տերը: Նա պետք է վերադարձնի Պետրոս I-ի մանդատը և ընդմիջտ փակի աշխարհի դռները: Պապության ավարտի վերջին մարգարեության մեջ Մաղաքիան արձանագրել է ոչ միայն նշանաբանը, այլև լատիներեն որոշ տողեր. «*Յոթ բլուրների քաղաքը կկործանվի, և ակեղ դատավորները դատելու են իրենց ժողովրդին: Թո՛ղ այդպես լինի*»:

Մաղաքիան ոչինչ չի գրել մեր ժամանակակից Ֆրանցիսկ պապի մասին, որն, անսպասելի, Արգենտինայից է:

Հռոմեական Սբ. Պողոսի տաճարի քառակողմ սյունաքահի կենտրոնում, որը բաղկացած է 150 սյունից, կա Սբ. Պողոսի արձանը: Գեղեցիկ պատուհանների ու սյունների արանքում ձգվում է պապերին պատկերող խճանկարային մեդալիոնների շարանը: Այս պահին դատարկ են մնացել միայն մի քանի մեդալիոններ: Ավանդույթն ասում է՝ երբ դատարկ մեդալիոններ այլևս չմնան, և մահանա վերջին Պապը, աշխարհի վերջը կգա: Սակայն ես եղել եմ Վատիկանում 2013 թվականին և անձամբ հաշվել եմ 14 ազատ մեդալիոն: Աշխարհի վերջը դեռ շատ հեռու թվաց...

Հռոմի թերթերն այդ տարի մարգարեության մասին գրել են.

«*Հետաքրքիր է, որ կոնկլավի ընտրված թեկնածուների թվում 1958 թ. եղել է կարդինալ Ֆրանկոարմենո Աղաջանյանը՝ հովիվ, ով ունեցել է զինանշան, որն ուներ խարիսխ: Եթե նա ընտրվեր, ապա մարգարեություններն իսկապես ս սենսացիոն կերպով կկատարվեին*»:

Ինչպես տեսնում ենք, աստղերն այլ կերպ դասավորվեցին...

Դասե՛ք ինքներդ: Իրաննեւ-Ջովաննի XXIII (1958-1963) *Pastoreet nauta* Հովիվ և ծովագնաց: *Et nauta*-ն կարելի է վերծանել որպես «ծովածոցից», «ջրանցքից», «Վենետիկից», «նավից», կամ կարող եք նաև ասել «նավարկիչ»: Աղաջանյանի զինանշանը պարզապես ցուցադրում է խարիսխ, հոտն ու խարիսխը... Դե, Ռոնկալլին, ինչպես գիտեք, տոմս էր վերցրել Վենետիկից, որտեղ հովիվ էր ծառայում... Ավելին, նույնիսկ երկկողմանի տոմս էր գնել. ծեր Ռոնկալլին բնավ հույս չունեի, որ Պապ կդառնա: Ահա այսպիսի մանրամասնություններ... Եվ երկուսն էլ քվեարկության գրեթե մինչև ավարտն իրար չէին զիջում՝ երբեմն առաջ անցնելով մի քանի ձայնով, երբեմն էլ ետ մնալով:

Գլուխ տասներորդ

Քաղաքի, աշխարհի վրայով սև ծուխն է պտույտներ տալիս, աշտարակից լուռ գալիս: Իսկ Պապն անհայտ է, դեռ սպասել է պետք: Սուրբ հայրերն ամբողջ աշխարհից հավաքվել են, իմաստուն, թե՛ տարեց, փորձում են պարզել՝ ում ընտրեն: Աշխարհը գիտի սպասել:

Կրկին վերադառնանք Մատուռի դիմացի հրապարակ՝ տեսնելու հոկտեմբերի 26-ի առավոտյան առաջին ծուխը: Ինչպես և սպասվում էր, սա սև էր, բայց այդպես էլ լինում է, երբ ոչ ոք չի ընտրվում: Եվ եկեք լսենք, թե ինչի մասին են խոսում և ձեռածում հասարակ հոռմեացիներն ու մայրաքաղաքի հյուրերը, որոնք սպասելուց արդեն ուժասպառ էին եղել: Երանք նորից քննարկեցին չափսերը և մարմնական պարամետրերը (միակ բանը, որը հաստատապես էր հայտնի), մնացած ամեն ինչը վիճակախաղ էր, պատահականը հմտորեն ուղղորդում էր այն:

Եթե հիշենք, որ Վատիկան պետությունն իր անունը ստացել է, «*Mons Vaticanus*» բլրի անվանումից (լատիներեն *vaticinia*՝ «գուշակության վայր»): Եվ նորից հրապարակում վիճում էին ու պնդում իրենցը՝ հիմնավորելով, որ վերջին 150 տարիների ընթացքում շարունակ գահին ազգանվան *n* տառով գեր տղամարդը փոխարինեց ասթենիկին՝ առանց *n* տառի: Պիոս IX-ը (Մաստայի Ֆերետտի) գեր էր: Լեո X-ը (Պեչչի), ընդհակառակը՝ նիհար: Գեր էր Պիոս X-ը (Սարտո), Բենեդիկտոս XV-ը (Դելլա Կյեզա)՝ նիհար, Պիոս XI-ը (Ռատտի)՝ գեր, Պիոս XII-ը (Պաչելլի)՝ նիհար, Իրանն XXIII-ը (Ռոնկալլի)՝ ճարպոտ, իսկ Պողոս VI-ը (Մոնտինի), զարմանալի է, բայց նիհար էր: Եվ մի այլ աննշան մանրամասնություն՝ գեր տղամարդիկ պապ-քահանաներ էին, իսկ նիհարները՝ գերակշռող հասարակության քաղաքական գործիչներ:

Հրապարակում ձեռածելով և բարձր խոսելով դատում էին, որ եթե ավանդույթը շարունակվի, ապա ստիպված կլինեք ընտրել Ուրսիից, Պիրոնիոյից (բայց նա պետք է մի փոքր քաշ հավաքի) և Պապալարդոյից: Ճիշտ է, Պիրոնիոն չափազանց երիտասարդ է՝ ընդամենը 57 տարեկան, բայց մեկ-երկու տարուց կարողինալները կարող են որոշել, որ նա հարմար է:

Նրանք արագ (արդեն որերորդ անգամ) վերլուծեցին պապական գանձարանի վիճակը: Հավանաբար, ամենաանթափանցիկ մի գանձարան, ինչպես միշտ, բռնապետական ռեժիմների օրոք:

Սպասվում էր, որ կունկլավում, հավանաբար, մեծ ազդեցություն կլինի գերմանացիների կողմից, հայտնի է, որ նրանց փողերը շատ են օգնում աղքատ եկեղեցիներին, և շատ կարողինալներ, հաշվի առնելով դա, կհետևեն նրանց: Բայց նման իրադարձության նկատմամբ համընդհանուր հետաքրքրություն ունենալու դեպքում, այն ժամանակվա տեղական թերթերում ոչ մի տեղեկություն չկա այն մասին, թե ինչ էին անում այդ ժամանակ բուքմեյքերները: Հիմա է, որ մարդիկ գրագ են գալիս ամեն ինչի վրա, նույնիսկ այն բանի վրա, թե ով է դառնալու պապ, խաղարկություններ են կազմակերպում: Եթե ես լինեի Հռոմի պապը, խաղացողներին բոլորին անաստված կհայտարարեի: Պատկերացնում եք: Խաղաղությամբ կատարել կունկլավի, կարողինալների վրա, թե նրանցից ով կդառնա պապ:

Կաթոլիկությունը հետաքրքիր և շատ հին դավանանք է: Տարբեր երկրներ, տարբեր ռասաներ միավորվել են մեկ կրոնի սուրբ դրոշների ներքո: Միգուցե պապի ներկայությունը դեր է ունեցել հին Եվրոպայի ճակատագրում: Եվ միգուցե կաթոլիկությունն էր, որ ժամանակին «օգնեց» Եվրոպան կտոր-կտոր անել, իսկ հետո՝ միավորել: Չարմանալին այն է, որ հազարամյակներով ապրող Քրիստոսի ուսմունքը, ինչպես

նաև մեկ այլ կրոն այնքան է թափանցում մարդկանց մեջ, որ փոխանցվում է սերնդեսերունդ, և չկա ավելի սուրբ բան, քան ժամանակին ձեռք բերված մարդկանց նախնիների կողմից սեփական հավատքին պատկանելը: Մինչդեռ գաղափարական (դա էլ կրոնի պես բան է) և տնտեսական դրդապատճառների միավորումները, որոնք շատ ավելի շոշափելի են, կարող են ակնթարթորեն փլուզվել և անհետանալ...

Ինչ էլ որ պատահի, սուրբ ընտրություններն ընթանում են ճիշտ այնպես, ինչպես աշխարհիկները, միայն այն տարբերությամբ, որ բոլոր մասնակիցները պահպանում են իրենց դեմքի լավագույն արտահայտությունը, իսկ փարաջան թաքցնում էր գործընթացի բոլոր իրական շարժիչներն ու աղբյուրները: չէ՛ որ ընտրական ողջ գործընթացը պահպանվում էր խորագույն գաղտնիության մեջ:

Գլուխ տասնմեկերորդ

Դժվար է ընտրել, հավասար են բոլորը, հաջողությունն ինքն է մտորված,

մեկից դեպի մյուսն է վազում: Ներքևում իշխելու կոչվն է վերևում՝ երկինք ու Աստված.

1958 թվականի հոկտեմբերի 25-ին բացված կոնկլավում կարդինալներից շատերը կարծում էին, որ պետք է ընտրեն նոր պապ, որը կթուլացներ, կվերացներ մահացած պապի ափսոսուկրատական պահպանողականությունը, կմոտենար աշխարհին և կունենար հոգևոր հովվի հատկություններ: Կարդինալ Աղաջանյանը, որն ուներ հսկայական թվով պաշտոններ, աշխարհով մեկ սփռված հոտ ուներ և իր բաժանմունքի բնույթով ավելի շուտ նոր հետևորդներ էր հավաքում միսիոներական աշխատանքի առումով, քան նրանց կրոնական սպասարկումն էր կատարում:

Կոնկլավն իրար մեջ մտրակեց «ինտեգրիստներին», որոնք ցանկանում էին շարունակել Պիոս XII-ի ընթացքը (ինտեգրիստների առաջնորդն էր կարդինալ Օտտավիանին) և «առաջադեմներին» բարեփոխումների կողմնակիցներին (նրանց առաջնորդն էր կարդինալ Սիրին): Կարդինալների մեծ մասն այլևս իտալացի չէին, և մի խումբ՝ կարդինալ Տիսերանի գլխավորությամբ, հստակ ցանկանում էր ընտրել ոչ իտալացի պապ: Դատելով պապաբիլների ցանկից Տիսերանի խմբի թեկնածությունը Գրիգոր Աղաջանյանն էր: Այնուամենայնիվ, այս հարցում կուրիայի կարդինալների մեծամասնությունը նույնպես ձգտում էր ավանդույթների: Կուսակցությունների միջև առկա սուր հակասությունները հնարավորություն չտվեցին նրանցից որևէ մեկին ընտրվելու: Նորից զգացվում էր մի հին օրինաչափություն՝ ով գալիս է կոնկլավ որպես պապի թեկնածուի, այն լքում է որպես կարդինալ:

Իսկ ո՞վ կարող էր սուրբ հայրերից դառնալ պապ:

Պարտադիր չէ, որ պապը սուրբ լինի, բայց հստակ է, որ նա պետք է լինի լավ մարդ: Պարտադիր չէ, որ նա ապրեր աղքատության մեջ և զուրկ լիներ փառասիրությունից, բայց չպետք է մասնակցեր ֆինանսական ու կազմակերպչական որևէ ինտրիգի: Խիստ, հոռետես պապը չէր կարողանա աշխարհին ներկայանալ որպես Ավետարանի մարդ՝ «բարի լուր»:

Դա պետք է լիներ մեկը, ում հավատը երջանկացնում է: Նա պետք է հասկանար, թե ո՞ր ռազմավարական խնդիրներն են պահանջում իր ողջ ուշադրությունը, և որոնք պետք է տեղափոխվեն ենթակաների վրա՝ նրանց տալով դրա համար լիակատար լիազորություններ: Նա պետք է վստահեր ուրիշներին՝ իր «թիմին», եպիսկոպոսներին, այլ դավանանքների առաջնորդներին, կաթոլիկ գիտնականներին:

Պապը պետք է ներշնչեր հույս, ապահովության զգացում, վստահություն. պետք է հասուն լիներ և ինքնավստահ, ունենար իշխանություն պատվիրակելու կարողություն և պատասխանատվություն: «Նա, ով ղեկավարում է բոլորին, պետք է ընտրվի բոլորի կողմից»: Ո՞վ է սա ասել: Ջեֆերսոնը, Բլեկստոնը, Հանս Կունգը, որևէ ռադիկալ: Ո՞չ, Հռոմի պապ և սուրբ Լեո I-ի խոսքերն են:

Կարդինալները համառորեն պնդում էին, որ պետք է լինի հովվական կողմնորոշում, անձնական բարեպաշտություն, հոգատարություն աղքատների նկատմամբ, պատրաստակամություն ավելի մեծ կոլեգիալության առաջնորդության մեջ: Բրազիլացի կամ նույնիսկ կանադացի և ամերիկացի կարդինալների հակադրությունը զարմանալի է: Նրանք խնամքով պատրաստվում են կոնկլավին, սակայն իտալացի կարդինալներից մեկին երբ նրան հարցրել են, թե որոնք են իր հիմնական խնդիրները կոնկլավի ժամանակ, ասել է, որ չգիտի՝ այնտեղ էլեկտրական ածելիի խրոց կգտնի, թե ոչ: Ինչ վերաբերում է ամերիկյան եկեղեցու խնդիրներին, ապա նրանք բո-

լորը, կարծես թե, ասել են, որ դա իսպանացի ներգաղթյալների խոնակույտ է: Եվ սա այն դեպքում, երբ 84%-ը մերժում է ծննդյան վերահսկման մասին եկեղեցու ուսմունքը, երբ կաթոլիկները և բողոքականները, կարծես թե, նույն վերաբերմունքն ունեն հղիության արհեստական ընդհատման նկատմամբ: Երեք անգամ ավելի քիչ ձեռնադրություններ կան, քան 15 տարի առաջ, 40%-ից էլ ավելի քիչ մարդ հավատում է պապական անսխալականությանը: Կեսից էլ քիչ են գնում եկեղեցի կիրակի օրերին, հակակաթոլիկության ակիբը հեղեղում է երկիրը: Անհնար է չգարմանալ այս մարդկանց միամիտ անկեղծության վրա: Եթե միայն բարեպաշտություն և անկեղծություն պահանջվեր ընտրողներից ու եկեղեցու առաջնորդներից...

Եվ ովքե՞ր էին այս պապաբիլիները, որոնց անունները շուրթերից չէին հեռացնում: Կաթոլիկները սպասում էին, որ սպիտակ ծուխը վերջապես կերևա աշտարակի վերևում. կհայտարարեն նոր Պապի մասին:

Անջելո Ռոնկալին՝ Վենետիկի 77-ամյա գիրուկ պատրիարքը, ով սիրում էր սուր խոսք, իսկը գյուղի կյուրե, իրենց 85-ամյակը տոնած գործընկերների համեմատ երիտասարդի տեսք ուներ՝ լի ուժով ու առողջությամբ: Ապագա «խաղաղության պապը» ծնվել էր գյուղացիական մեծ ընտանիքում (բավական է նշել, որ նա ուներ 12 եղբայր և մեկ քույր) և հարազատների, եղբայրների ու մնացած գյուղացիների հետ կապը պահպանել մինչև կյանքի վերջը:

Ռոնկալին պատրանքներ չունեի իր պապության մասին, միայն ինչ-ինչ գումարներ էր ծախսել Վենետիկից երկկողմանի տոմսի վրա: Թափահարելով կիսադատարկ ճամփորդական պայուսակը՝ հետ ու առաջ էր անում ու սպասում, թե երբ կվերադառնա սիրելի Վենետիկ, սիրելի և իրեն սիրող ծխականների մոտ: Ինչ վերաբերում է վենետիկցիներին, որոնք հրմշտոց սարքեցին ճանապարհ դնելիս, ամբոխը, կարծես,

նախազգում էր, որ այս անգամ իրենց սիրելի պատրիարքը չի վերադառնա Վենետիկ: Թեկնածուների ցուցակում էր հայտնվել նա մեկ պապաբիլ՝ կարդինալ Օտտավիանին, որի եպիսկոպոսական կարգախոսն էր՝ «Semper Idem» («Միշտ նույնը»), և նա արտացոլեց դա իր պահպանողական աստվածաբանության մեջ): Պատկանել է կուրիայի պահպանողականներին և առանց որևէ հաջողության համոզում էր կարդինալ Ջուզեպպե Սիրինին՝ չիրաժարվել ընտրություններին մասնակցելուց: Օտտավիանին մի քանի այլ կարդինալների հետ ձևավորեց Պիոս XII-ի մերձավոր շրջապատը, և նրանց մեջ առաջնորդները այս խումբը. չգիտես ինչու, մկրտեցին «կուրիալ Պենտագոն»:

Ինչու էր Ջուզեպպե Սիրին այդքան հետևողականորեն մերժում պապական տիարան կրելուց, կարելի է միայն ենթադրել: Նա առնվազն գիտակցում էր, որ միջազգային ուժերի դասավորվածությունը նկատելի փոխվել է ռուսների՝ ատոմային ռումբ հայտնագործելուց հետո: Եվ նրա շրջապատում, որի վրա նա պետք է հենվեր, դժվար էր գտնել մեկին, ով թեկուզ փոքր-ինչ ցանկանար չափավորել հակաստվետական եռանդը: Ինքը՝ Սիրին, նույնպես ատում էր կոմունիզմը՝ կոմունիստներին համարելով երկրագնդի չարը և իր հիմնական հակառակորդները: Այդ կոմունիստները նույն ձևով էին տարածվում աշխարհով մեկ: Կաթոլիկների մոտ դա կոչվում է պրոգելիտիզմ, իսկ կոմունիստների մոտ տարածվում է տարբեր ճանապարհերով, և պետք է խոստովանել, ընդհուպ մինչև ուժային ներխուժում:

Ընդհանուր առմամբ, կաթոլիկների ճնշող մեծամասնությունը իրենց հոգու յուրաքանչյուր մանրաթելով ատում էր կոմունիստներին, բայց չգիտես ինչու, Հիտլերի և Մուսոլինիի հետ նրանք ինչ-որ կերպ կարողանում էին լեզու գտնել: Սա պարզապես առեղծված կարելի է համարել: Եվ, այնուամենայնիվ, եկեղեցին ընտրություններում անընդհատ հակադր-

վում էր կոմունիստներին, ու դա մշտապես ապահովում էր Իտալիայում կոմունիստներին ավելորդ կես միլիոն ձայն ունենալուց, ըստ երևույթին, անուղղելի աթեիստների ձայները:

Իսկ, ասենք, կարդինալ Բենեդեկտո Ալոիզի Մագելլան պատահաբար էր հայտնվել այս ցուցակում: Այնուամենայնիվ, նա գրեթե 80 տարեկան էր, համենայն դեպս պահում էին որպես պահեստային վարկած: Հետագայում նա դարձավ կամերլենգո, ապրեց բավականին երկար և մահացավ 90 տարեկանում:

Մեկ այլ մրցակից՝ հանգիստ, սրամիտ մեր հայրենակից կարդինալ Աղաջանյանը գունեղ գործիչ էր, ով լայն ժողովրդականություն էր ձեռք բերել կարդինալների շրջանում որպես խելացի, դիվանագիտական և բարեպաշտ Եկեղեցու մարդ: Պատկանելով միութենական հայկական ծեսին՝ նա այս ծեսով դարձավ Կիլիկիո պատրիարքը: Այնուամենայնիվ, նրա նստավայրն իրականում Հռոմն էր, և, իհարկե, Լիբանանի, նաև Սիրիայի հավատակիցների շրջանում նրա ժողովրդականությունը դրանից միայն տուժում էր:

Վաղ տարիքից հայտնվելով Հռոմում և այնտեղ ավարտելով մի շարք միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Աղաջանյանը դարձավ իսկական «հռոմեացի» և կարողացավ ժողովրդականություն ձեռք բերել Հռոմում ինչպես հոգևորականների, այնպես էլ բնակչության շրջանում, որը հազվադեպ մի բան էր օտարերկրյա կարդինալի համար: Եվ շատ ավելի մեծ չափով, քան Տիսերանը, ինչը թույլ տվեց նրան համարվել լուրջ «պապաֆիլիներից» մեկը: Ինչպես Տիսերանը, այնպես էլ Աղաջանյանը բազմալեզու էին, ինչով բացատրվում է նրանց բարձրացումը կուրիայում: Շատերին է հիացրել այն փաստը, որ նա ազատ տիրապետում էր տասնյակ լեզուների, այդ թվում՝ ռուսերենի և վրացերենի:

Թեև ոչ վաղ անցյալում կար նա մեկ, ծագումով հայ կարդինալ՝ Պատրիարքի կաթողիկոս Անտոն Պետրոս IX

Հասունյանը, որը ծառայում էր 19-րդ դարի վերջին, բայց կարդինալ Աղաջանյանը շատ ավելի մեծ և պայծառ հետք թողեց Հռոմում: Կարդինալ Աղաջանյանը 1971 թվականին իր մահից ավելի քան քառասուն տարի անց հիշատակվում է որպես Եկեղեցու իշխան, որն իր կենդանության օրոք հանդես է եկել որպես թագավոր ամբողջ աշխարհի կաթոլիկ հայերի համար:

Մնացած «եղբայրների» մեջ նա բավականին երիտասարդ էր թվում: Վերջերս դարձավ 60 տարեկան: Բայց հենց պապաֆիլի «երիտասարդ» տարիքը կարող էր նենգ դեր խաղալ, գուցե և պատճառներից մեկն էր... Աղաջանյանը Հռոմից հաճախ չէր բացակայում, բացի, իհարկե, հովվական այցելություններից՝ փորձելով մոլորված և աշխարհով մեկ սփռված հայերին (ու ոչ միայն հայերին) դարձի բերել դեպի կաթոլիկական դավանանք՝ կառուցելով ապաստարաններ, դպրոցներ, բացելով ողորմության տներ: Եվ մնում էր Պիոս Պապի կողքին, որն իր սիրելիներին պահում էր մոտակայքում:

Չնայած նրան, որ Աղաջանյանը կոչվում էր պատրիարք Գրիգոր-Պետրոս XV, իրականում նա վերածվեց արևմտյան ծեսի իսկական կարդինալի և հազվադեպ էր այցելում Լիբանան:

Կարդինալը (ատաջին հայացքից հեզ), չափազանց խելացի և մեղմ էր, բայց բոլորը գիտեին, թե որքան կատաղի է նա առում կոմունիստներին: Աղաջանյանը սեփական հաշիվներն ուներ կոմունիստների հետ: Ժամանակին՝ բռնազավթված իշխանության լուսաբացին, կոմունիստները զագանաբար ոչնչացրին բազմաթիվ հայ կաթոլիկ քահանաների, իսկ Աղաջանյանին կտրեցին հայրենիքից:

Երրորդ պապաֆիլը՝ Ռուֆինին, ավելի մեղմ էր առում կոմունիստներին: Մտովին նա, ըստ սովորության, կոմունիստներին անվանում էր իրենց հին անունով՝ բոլշևիկներ: Բայց ահա հատված մի գրքից, որն ինձ հաջողվեց ձեռք բերել: Էջե-

րից մեկում հեղինակը հանկարծակի հայտնաբերում է և վստահեցնում մյուսներին, որ «*հայտնի է Գրիգոր XV անունով Աղաջանյան կարդինալը՝ սև (գուցե կարմիր) Հռոմի պապը՝ «Կրեմլի կարդինալը» հայկական եկեղեցու Պատրիարք, ծագումով ԽՍՀՄ-ից և բոլշևիկ բռնապետ Ստալինի սիրելին. նրա հետ սովորել է ձեմարանում՝ նույն դասարանում*»։ Ի դեպ, այդ հիմարությունը, իբր նա սովորել է Թիֆլիսի ուղղափառ ձեմարանում կամ Ստալինի հետ մի դասարանում, կրկնվում է շատ հոդվածներում և նույնիսկ գրքերում:

Հաջորդ հեղինակը իր գրքում արձագանքում է նրան: Ըստ երևույթին՝ նա պարզապես արտագրել է նույն գրքից՝ «*Եվ Ստալինի այս Աղաջանյան լավ ընկերը՝ Պատրիարքը, վերահսկում էր Գուլագի համակենտրոնացման ճամբարներում մարդկանց բնաջնջումը և Ջոզեֆի անձնական ընկերն էր*»: Տպարանից դուրս եկած խոսքը խայթող է: Մի ռուս հեղինակ էլ երրորդ գրքում արդեն վստահեցնում է, որ Աղաջանյանը ծնվել է Բաքվում:

Այնուամենայնիվ, «բարեխիղճ» գրչակները նույնիսկ չփորձեցին ստուգել երկու ծննդյան տարեթիվ՝ Ստալինի և Աղաջանյանի: Ջուղաշվիլին ընդունվել է Թիֆլիսի իր ձեմարանը 1894 թվականին, Ղազարոս Աղաջանյանը ծնվել է մեկ տարի անց՝ 1895 թվականին... Այնպես որ, հայ կաթոլիկ կարդինալը, որը ծնվել էր Ստալինից 15-16 տարի անց, ոչ մի կերպ չէր կարող լինել ուղղափառ ձեմարանական Ջուղաշվիլիի դասընկերը: Երևի այն ժամանակ սա կոչվում էր ոչ թե սև փիար, այլ ինչ-որ այլ կերպ, բայց հետապնդում էր նույն հայտնի նպատակները...

Այնուամենայնիվ, պահպանվել են ընտրությունների ընթացքն արտացոլող բոլոր տեղեկագրերը: Ինչպես երևում է, տեղեկատվության արտահոսքը եղել է և կա. դա շատ հին սովորույթ է: Ամենագոր գրչակները նույնիսկ կոնկլավի գաղտնիքներից որսացին քվեաթերթիկների նկարագրությունները:

Կոնկլավ 1958: Իրաննետ XXIII-ի ընտրության քվեաթերթիկների նկարագրությունը.

1-ին քվեաթերթիկ
Կարդինալներ
Ռոնկալի (Իրաննետ XXIII) 7
Օտտավիանի 2
Ռուֆինի 17
Աղաջանյան 13
Մազելլա 5

2-րդ քվեաթերթիկ
Ռոնկալի 8
Օտտավիանի 8
Ռուֆինի 15
Աղաջանյան 12
Մազելլա 4

3-րդ քվեաթերթիկ
Ռոնկալի 15
Օտտավիանի 16
Ռուֆինի 5
Աղաջանյան 8
Մազելլա 3

Ռուֆինին, թե՞ Աղաջանյանը: Ե՛վ երկրորդից, և՛ երրորդից հետո քվեաթերթիկներում առջևից Ռուֆինին է և արևելյան կարդինալը: Ըստ երևույթին, յուրաքանչյուր քվեաթերթիկի հետ ինչ-որ բան և ինչ-որ տեղեկատվություններ արտահոսում էն, քանի որ չորրորդ նիստի ընթացքում կարդինալները հանկարծ «խեղճի եկան» և փոխեցին իրենց կարծիքը: Բսկա-

պես, ինչպե՞ս կարելի է ընտրել արևելյան կարդինալին, որը սովորել է նույն երկրում կաթոլիկների համար ամենից տհաճ գործչի հետ: Ավելին, նա ծնվել է մի երկրում, որը կաթոլիկության մայրաքաղաք Վատիկանի գլխավոր թշնամին էր: Հավանաբար, նրանք Հիտլերից այնքան չէին վախենում, որքան ժողովուրդների հայր Իոսիֆ Վիսարիոնովիչից, որն արդեն ջ տարի էր, ինչ մահացել էր:

Միգուցե թեկուզ և Ռուֆինիին: Էռնեստո Ռուֆինիին, ով հայտնի էր իր կոշտ բնավորությամբ: Մի շատ կարևոր մանրամասնություն կարդինալ Ռուֆինին հայտնի էր նաև նրանով, որ սպասարկում էր Իտալիայի ամենամաֆիոզ տարածքը, մինչդեռ այնտեղ համընդհանուր հարգանք էր վայելում և լեզու գտնում նույնիսկ սիցիլիական մաֆիայի ղեկավարների հետ: Դա մի շատ հետաքրքիր պատմություն է, առժե լսել...

Պատմում էին, թե ինչպես Պալերմոյում այն ժամանակվա կնքահոր մոտ այցելությունից հետո ընտրությունների հետ կապված անբացատրելի իրադարձություններ տեղի ունեցան: Թեև ինչ կա մեկնաբանելու այնքան էլ անբացատրելի չէին: Դատեր ինքներդ, 1948 թվականն է: Պատերազմից հետո շարքային եվրոպացիների ողջ համակրանքը կոմունիստների կողմից էին, ժողովուրդը հիշում էր նրանց կուսակցական վաստակը հակաֆաշիստական շարժման մեջ: Բայց այդ ամենը հիշելով, երախտապարտ լինելով, նրանց ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ մուտք գործելու խորհրդարան: Իսկ նրանք ունեին հնարավորություն: Քիչ էր մնում, կոմունիստները իշխանության գային:

Միցիլիայում ձախերին կանգնեցնելու իրական ուժը միայն մեկն էր՝ մաֆիան, ինչքան էլ դա տխուր չհնչի: Մա լավ էր հասկանում կարդինալ Էռնեստո Ռուֆինին Միցիլիայի պրիմատ և Պալերմոյի արքեպիսկոպոս: Ռուֆինին միակ մարդն էր ողջ կղզում, ում նկատմամբ մաֆիոզները կարող էին հարգանք ունենալ և, ընդհանրապես, խոսել:

Եվ ահա, կարդինալ Ռուֆինին հայտնվում է ոմն միլիարդատեր մաֆիոզի տանը, ուղարկում ծառաներին դուրս և որոշում է լուրջ զրույցի անցնել զալիք ընտրությունների մասին: Մտահոգություն հայտնելով ձախերի ակտիվության մասին՝ նա սկսում է խոսել նախընտրական քարոզարշավի համար միջոցների սղության, «արժանի» պատգամավորների առաջադրման անհրաժեշտության մասին, որոնք թույլ չեն տա «մուրճ ու մանգաղով սատանայի սերունդը» մտնի խորհրդարան:

Մաֆիոզը հասկացող տղա դուրս եկավ: Երկու օր անց ահաբեկչության ալիքը տարածվում է ամբողջ Միցիլիայում, սպանվում են 4 արհմիութենական ակտիվիստներ: Նաև՝ մեկ սոցիալիստ, 5 կոմունիստ, իսկ 23 պատգամավորի թեկնածուները ընդհանրապես անհետացան: Չախ կուսակցությունների մասնաճյուղերի շտաբները հրդեհվեցին, և 1948 թվականին խորհրդարանական ընտրություններում դեմոկրատական քրիստոնյաները հաղթեցին Միցիլիայի գրեթե բոլոր ընտրական շրջաններում:

Աստվածասեր կարդինալ Ռուֆինին չէր էլ կարող երազել ընտրությունների նման ելքի մասին... Ի վերջո, նա համոզված էր, որ հաղթելու դեպքում կարմիր սատանայի ծնունդը ավելի շատ կորուստներ կբերի:

Այսպիսով, ընտրում էին այս հնգյակից՝ Ռուֆինի, Ռոնկալլի, Աղաջանյան, Օտտավիանի, Մազելլա... Երկրորդ օրն էլ որոշակիություն չբերեց, այն բացառությամբ, որ անձրևը հանդարտվեց: Հրապարակում ավելի շատ մարդ էր հավաքվել: Անհանգստացած պապարացիները գլխապտույտ պիրուետներ էին կատարում, շտապում էին մի անկյունից մյուսը... Ոչ ոք չէր կարող ասել, թե ինչ է տեղի ունենում այնտեղ, Միքստինյան կապելլայի կողաված պատերում...

Գլուխ տասներկուերորդ

Չեզ սուրբ հայրը, մտքերի մեջ, կարմիրներին է հիշում, նրանց վայրագ կազմն ու վարքը... Նա հիշում է եղբայրներին՝ արյան ծովում խեղդված: Նույնն է միշտ կարմիր փտանգը, որ օձի պես է սողում դեպի մարդկանց հանգրվանը...

Վատիկանի պալատի ներսի կամարներից մեկի մոտ կանգնած էր կարդինալ Գրեգուար Աղաջանյանը՝ մեղմ հայացքը հառած ինչ-որ հեռուներ: Ինչ էր նա տեսնում: Իր ապագան, թե՞ անցյալը: Երեկ՝ ուշ երեկոյան, նա հասկացավ, որ դարձել է «անանցանելի»: Ոչ, բայց ոչ Ռաֆիկին, երբեք: Չէտո՞ ոչ Օտտավիանին: Նա՛ Գրիգոր Աղաջանյանը, շուտվանից եկել է իշխանության, դարձել իր Արևելյան շրջանի պատրիարքը:

Հիմա, մանկուց վարժված ամենաբարձր գնահատականներին, պապաբիլ դառնալով՝ իրեն նույնիսկ թույլ չէր տա մտածելու, որ նրանցից որևէ մեկին իրենից առաջ կթողնի: Ճիշտ է, մամուլը, զգալով նրա հաջողությունը, սկսեց իր խաղը, և կարդինալ Աղաջանյանը միշտ լավ էր հասկանում, թե որտեղից էր փչում քամին: Դեռ դրանից առաջ թերթերը ճոռում էին, թե «*դիվահար Ջոզեֆի*» ընկերն է, թե նա իտալացի չէ, շատ երիտասարդ է, իսկ բոլորին հայտնի է, որ ոչ մեկին ձեռնտու չէ երիտասարդ պապ ընտրելը: Ով գիտի, թե ով և ում հետ կլինի: Կոմունիստները պառլամենտում շատանում են. չգիտես, թե մարդու ծննդավայրն ինչ կանի իր հետ: Բոլորը գիտեն, որ Ռոնկալլին անընդհատ այցելում է իր գյուղը և ամուր կապված է իր փոքրիկ հայրենիքի հետ:

Բոլշևիկները խլել էին Աղաջանյանի և՛ հայրենի քաղաքը, և՛ հայրենիքը, և՛ հարազատներին ու հայրենակիցներին: Քանի տարի է, ինչ նա չի ունեցել հնարավորություն՝ տեսնելու մորը, մանկության ընկերներին, եղբորը, քրոջը, քույր Լի-

զային... Ինքը հիշում էր նրան շատ փոքր և գվարճալի, նա էլ էր մանկուց շատ գվարճասեր: Մորը ավելի հաճախ էր հիշում, քան եղբորը, որին կարդինալը չէր կարող նույնիսկ պատկերացնել որպես չափահաս... Օիժադելի է նույնիսկ մտածել, որ նա «կարմիր» է: Բայց եթե հատուկ ծառայությունները գործի են անցնում, նրանց պատնեշ չկա: Այն բոլոր սուտ ու փուտ գրքերը նրանց ձեռագիրն է...

Այսպիսով, մնում է միայն Ռոնկալլին: Եվ ամենակարևոր արժանիքը Վենետիկյան հովվի ու նրա միջև տարիքի տարբերությունն է: Բոլորին, ով քվեարկել է իր օգտին, նա պարզ կհասկացնի՝ աջակցել Ռոնկալլին: Իսկապես, ծայրահեղական խմբերի կողմից արդեն առաջ էր մղվում որպես փոխգիջում, Վենետիկի տարեց պատրիարք կարդինալ Անջելո Ջուզեպպե Ռոնկալլիի թեկնածությունը: Ռոնկալլին համարվում էր «կարճաժամկետ» կատարյալ հայր: Վենետիկյան կարդինալի 77-ամյա տարիքը երաշխիք էր, որ նրա հովվապետությունը շատ երկար չի տևի:

Հարմարվելու իր բացառիկ կարողությամբ (որը դրսևորել էր ավելի վաղ գործունեության ընթացքում), իր քաղաքական ոչ ներգրավվածությամբ, ավելի ճիշտ՝ ձախերի տարրերի հետ կապերի բացակայությամբ, նա ընդունելի դարձավ նաև առաջադեմների (պրոգրեսիստների) համար: Ինտեգրիստները նույնպես գոհ էին նրա թեկնածությունից, քանի որ Ռոնկալլին իր աստվածաբանական հայացքներում պահպանողական էր և ավանդական: Պարզ է, որ բնեռային ստրատեգների ճակատամարտում միշտ հաղթում են նրանք, ովքեր ավելի լավ են հարմարվում: Եվ, այնուամենայնիվ, Ռոնկալլին իսկական հոգևոր հովիվ էր. նա անձամբ էր այցելում իր թեմի բոլոր ծխերը:

Այսպիսով, կարդինալները դիմեցին Անջելո Ռոնկալլիի թեկնածությանը: Ռոնկալլին հասարակ մարդ էր, ումից ոչ ոք ոչինչ կամ գրեթե ոչ մի վնաս չէր սպասում: Նա, ինչպես ասա-

ցինք, արդեն 77 տարեկան էր: Այս ընտրությունը, փաստորեն, հետաձգվեց (կամ թվում էր, թե հետաձգվում էր) ժամանակ տալով շունչ քաշելու համար, իսկ հետո կարող էր ուժեղ թեկնածու հայտնվել: Միգուցե մինչև այդ պահը ծիրանի գլխարկով կարդինալը կարողանա ավելի պնդել իր դիրքորոշումը: Բայց ամբողջ սրտով Գրիգոր Աղաջանյանը հասկանում էր թեև բաց թողնված հնարավորությունը կարող է վերջինը չլինել, միշտ չէ, որ շանսը կրկնվում է...

Ամենայն հայոց կաթոլիկների պատրիարքը կցանկանար (և կարող էր) դառնալ Հռոմի պապ. չարժե հրաժարվել իշխանությունից, քանի դեռ ձիավոր ես: Բայց նա հիանալի հասկանում էր, որ ոչ իտալացի պապ լինելը դեռ հնարավոր բան չէ, թեկուզ այն պատճառով (նա ավելի ուշ այդպես բացատրեց), որ իր հոտը կես միլիոնից էլ քիչ էր, մինչդեռ մյուսները հռոմեական կաթոլիկները, հարյուրավոր անգամ ավելի շատ էին:

Հրապարակում հազարավոր մարդիկ շարունակում էին սպասել նոր Պապի անվան հայտարարությանը. Արևը մայր էր մտել մեծ գմբեթի հետևում, և բազիլիկը պատված էր մթության մեջ: Մթության մեջ էին նաև կենտրոնական պատշգամբն ու դրա հետևում գտնվող հսկայական սրահը: Միքստինյան կապելլայի պատուհանները թաքնված էին Վատիկանի լոջայից, և միայն մի քանի պատուհաններ էին փայլում լույսերով: Ի՞նչ էր կատարվում այնտեղ: Որտե՞ղ էր նոր պապը: Ո՞վ էր նա:

Գլուխ տասներեքերորդ

Հին քաղաքը հյուրասեր էր: Բուրդին տանիք տվեց, մի բաժակ գինի բերեց, ապաքինեց և բուժեց, փոթորկի տակ կոսցավ, նրանց պաշտպան չդարձավ, աղքատ, անտուն մնացին... Բռնուփոշման գնացին: Ով փախավ՝ նա փրկվեց, Ով էլ մնաց՝ Աստծո բախտին ենթարկվեց:

Հին Թիֆլիսի երկնքում առավոտ էր բացվում խոստանալով պարզ և շոգ օր: Լուսաբացի մշուշի մեջ սուզված էր Մթածմինդա սուրբ լեռը: Շուկա տանող ճանապարհին սկսեցին երբեմն անցորդներ հայտնվել՝ աստիճանաբար հավաքվելով քաղաքային շուկայի կեղտոտ դարպասների մոտ, որը կոչվում էր «հայկական»: Օդում արդեն իսկական Թիֆլիսի շուկայի բույրերն էին շրջում, ախորժակ բացում, քաղաքն արթնանում էր, հետն էլ զարթնում էր հոչակավոր «Հայկական բազարը»: Ճանապարհորդներին զարմացնում էր նախ այն փաստը, որ այն բաղկացած էր ոչ միայն տարբեր ապրանքներից, մրգերից և տարբեր պարագաներով լի խանութներից, այնտեղ կային ամեն տեսակի արհեստանոցներ (արծաթի խանութներ), հացաբուլկեղենի բաժիններ, խմելու տներ, սրճարաններ, վարսավիրանոցներ, պանդոկներ (դուբյաններ):

Սեղանի և դարակների վրա սկուտեղներ ու բաժակներ էին դրված տարբեր մրգերով թարմ և չորացրած, բանջարեղեն և խոտաբույսեր՝ սեզոնից կախված: Ահա խոշոր հատապտուղներով բազմերանգ խաղողը, դեղձը, ծիրանը, սալորը, նուռը, խնձորը, զազարը, որը գույնով ավելի նման է ճակնդեղին, կարտոֆիլը, տարբեր լոբիներ, ոլոռ, բուրավետ և կծու խոտաբույսեր, առանց որոնց չի լինում կովկասյան խոհանոց, թարխուն, կոնդարի՝ օշինդրի տեսակ: Սամիթի, կոտեմի, բողբոջների և ջոնջոլիի ծաղիկների թթու, չամիչ, մեղր՝ կաթաս-

ներում, օսական պանրի փոքր շրջանակները: Վաճառողները գոռում են՝ չխնայելով ոչ իրենց կոկորդը, ոչ էլ ուրիշների ականջները:

Այստեղ ամեն կողմից կարելի է լսել. «Ա՛յ խնձոր, յաբ՝ լուկ, ա՛յ խաղող, ա՛յ դեղձ», այնտեղ բղավում են. «Պա՛ - պա՛ - պա՛, յյո՜շով աղամ՝ (այսինքն՝ էժան կտամ), պարո՛ն, գնի՛ր, ա՛ խ, կնյա՛ գ, սրանք այստեղ ամենալավն են»: Ամենատարբեր մարդիկ պտտվում են խանութներով, և երբեմն գնորդների կողքով անցնում էր ուղտերի մի քարավան ու էշերի շարան՝ բեռնված կանաչու, խաղողի, վարունգի և երկու կողմից բեռնված տարբեր կողովներով:

Իսկ վաճառողները շուկայում ապրում են ինչպես իրենց տանը. կարող են մայթի հենց մեջտեղում մի մանղալ դնել, որից խորովածի ծուխը կխփի անցորդների աչքերին, քթին՝ ախորժակ բացելով: Իսկ ամենից հաճախ, հենց իրենք՝ խանութների տերերը, ցանկանալով գրուցել ծանոթի հետ, որին պատահաբար են հանդիպում, դուրս են գալիս խանութներից անզգուշորեն հենվելով իրենց սկուտեղներին, փակելով մայթը՝ արդեն իսկ խճճված դեռ չբացված տուփերով ու հակերով, ոչ մի ուշադրություն չդարձնելով անցորդներին: Ահա ծանրորդը՝ «մուշան», մեջքին բարձ ունի՝ բրդով լցունված:

Եթե գլխին գլխարկ կա՝ շրջված գավաթի նման, ապա սա «կոռ» է, ինչպես այստեղ անվանում են Հայաստանից եկածներին: Մարդկանց հոսքերը թափանցում են բազար-խանի մութ շարքերը կամ ծածկված կամարները, որտեղ կան մոսկովյան ապրանքներ վաճառող հայերի խանութներ, ինչպես նաև գորգեր, թաղիք ու ֆետրներ, կիրառական արվեստի այլ գործեր՝ Պարսկաստանից և Անդրկովկասից:

«Թիֆլիսի բնակչության մեջ գերակշռող տարրն են հայերը, որոնց հաջորդում են ռուսները, վրացիները և այլ էթնիկ խմբեր: Գ. Վ. Վեյդենբաումը իր «Կովկասի ուղեցույցում» ասում

է, որ «Ազգագրական իմաստով Թիֆլիսը կա և կարծես թե եղել է հին ժամանակներից՝ որպես հայկական քաղաք»:

Երիտասարդ հայր Ֆրանչեսկոն, աշխարհիկ կյանքում՝ Ղազարոս, առանց կանգ առնելու անցավ ամբողջ շուկայով մեկ և սկսեց արագ վեր մագլցել հին Թիֆլիսի չսալարկված ծուռումուռ փողոցներով՝ հուսալով պատարագից առաջ հասնել այն հիվանդ տղային, որ վերջերս որբ էր մնացել: Մայրը, որի վրա նրա հայրն ու մայրը կանաչեղեն էին բերում հեռավոր գյուղից, շուկայից քիչ հեռու շուռ եկավ ու գլորվեց ձորը: Մի կարեկից կինտո, նկատելով խոտերի մեջ հառաչող տղային, վերցրեց նրան և տարավ իր տուն:

Մքանչելի է Մթածմինդան և պարզ օրով՝ թեկուզ թաքնված, ինչպես այսօր՝ մշուշոտ ծխի մեջ: Հայր Ֆրանչեսկոն հայացք է գցում շուրջը՝ սինագոգի աղյուսե շենքը, որտեղ հավաքվել էին միայն մի քանի ծխականներ: Վերջերս այստեղ տարածվեցին տհաճ լուրեր, ու հրեաները անհանգստացան: Ռուսական ցարն այնքան էլ չէր սիրաշահում թե՛ կաթոլիկներին, թե՛ հրեաներին, իսկ հիմա ամեն ինչ խառնվել էր այս նոր Ռուսաստանում, որտեղ նույնիսկ ցար չկար:

Ֆրանչեսկոն արագ ցատկեց կռատուկի բարձր թավուտների հետևում թաքնված ցածրիկ տան վերջին աստիճանից և մտավ ցածրադիր խրճիթի կիսախավարը: Երեկ տղան ջերմությամբ պառկած էր, Ազգանուշ քույրիկը տաք թուրմ էր տվել խմելու, իսկ այսօր աչքերում արդեն փայլ կա, իսկ այտերին՝ կարմրություն: Երեխաներն արագ են վերականգնվում:

— Հովհաննիս, ուզու՞մ ես հետս գաս:

— Ո՞ր կարող եմ ես գնալ, հայր իմ: Չե՞ որ ես եղբայր էլ ունեմ՝ Սերիկոն, նա հիմա հորեղբոր մոտ է՝ գյուղում: Ո՞վ է վազելու նրա հետևից, նա շատ փոքր է ու չարաճճի, — տղայի աչքերը նորից պղտորվեցին արցունքներից:

– Հովհաննիս, Աստված միշտ քեզ հետ կլինի, դու կկարողանաս սովորել և աղոթել, քահանա կդառնաս, դու կփրկես մյուս երեխաներին...

Ղազարոսը մոտեցավ տղային և առաջարկեց դառնել փուկի մնացորդները, որոնք երեխան ակնհայտորեն չէր ուզում խմել: Ազգանուշ քույրիկը հացը փշրեց լոբու ապուրի մեջ ու գնաց բակն ավելելու:

– Մուրբ հայր, հեռու ենք գնալու: Մերիկոյին կարելի է վերցնել մեզ հետ:

– Մեկ-երկու տարուց նրան էլ կբերեմ, հուսով եմ՝ քեզ նման խելացի է: Խոստանում եմ, իսկ մինչ այդ խմիր թուրմը և շուտ առողջացիր:

Տղան շատ էր ուզում արագ ապաքինվել: Շուտով լինելու է *Տիրոջ մարմնի օրվա* տոնը: Անցյալ տարի նա Թիֆլիս էր եկել իր բանջարավաճառ ճնողների հետ հենց այս տոնի ժամանակ, երբ գարնան վերջն էր: Հանդիսավոր երթը, որը պատարագի ավարտին շարժվում էր եկեղեցուց մինչև Սուրբազնի լանջին գտնվող կաթոլիկ գերեզմանատուն, շատ գունեղ էր:

Երթը բացվում էր ճերմակ հանդերձներով տղաների շարասյունով, իսկ գլխավոր պաղրեն հետևում էր այդ ամենին ամպհովանու տակ: Հետո բոլորը գնում էին գերեզմանատուն և կարդում Ավետարանը: Սկզբում՝ լատիներեն, իսկ հետո՝ վրացերեն, հայերեն ու լեհերեն: Հովհաննիսը գրեթե ամեն ինչ հասկանում էր, և հայրիկը խոստացավ այս տարի նորից մասնակցել այդ հրաշք խնջույքին: Տղան նրբորեն համբուրեց հայր Ֆրանչեսկոյի հագուստի ծայրը. այդպես էր անում նրա մայրը:

Ղազարոսը խնամքով ծածկեց երեխային, որ տաք լինի, և, հրաժեշտ տալով քույր Ազգանուշին, դուրս եկավ մութ սենյակից ու արագ քայլեց: Դեռ պետք է այցելեր ծեր քեռի Տարիելին. ո՞վ գիտի, թե ինչու է այդքան շտապ կանչել նրան: Հավաքարն արդեն լրիվ արթնացել էր, դուքյանների ու խա-

նույթների փեղկերը, դռներն ու պատուհանները թխկոցով բացվում էին, աշխատասեր ժողովուրդը կամաց-կամաց թափվում էր Հավաքարի անսալահատակ, կուզիկ ու ծուռ փողոցները:

Քեռի Տարիելը դժվարությամբ վեր կացավ բազմոցից և ծանր շնչելով կառչեց Ղազարոսի ձեռքից.

– Հա՛յր սուրբ, ես մի քանի ոսկյա մատանի ունեմ, ահա՛, – ասաց նա՝ դողդոջուն ձեռքերով բանալով ծնկների վրայի լաթե փաթեթը: Բռան միջի ոսկին փայլը կորցրել էր, բայց քարերը լույսի տակ բոցավառվեցին: Ղազարոսը զարմացած հայացքն ուղղեց դեպի ծերունին:

Շունչը կտրելով քեռի Տարիելը ձեռքով թափահարեց.

– Պաղրե, ինձ այլևս դրանք պետք չեն, տար սուրբ եկեղեցի: Դու արժանի ես մեր հայրերի հավատքին: Ես ուղղակի անհանգիստ եմ հոգումս, մարդիկ ոչ մի լավ բան չեն պատմում: Ահա՛ էդ Բալիոզովները Խարկովից են եկել, ստեղ Եվրոպայից գործվածքներ են վաճառում, ասում են՝ լավ չեն գործերը, կա՛մ գերմանացիներն են առաջ շարժվում, կա՛մ անգլիական գորքերը. ամեն ինչ խառնվել է, – ասում էր տարեց մարդն՝ առանց կանգ առնելու և կիսաձայն ողբում:

– Ռուսները կոխում են մե՛կ գերմանացիների հետ, մե՛կ հիմա արդեն ռուսն իր մեջն է մորթում ու կախում շուտով մեզ մոտ կհասնեն, ոչ ոք հայերին չի սիրում: Լսել եմ, որ բոլոր հողերը, որտեղ հայեր են ապրում, ռուս գներալներն ուզում են ավերել այն հողերը, որտեղ մենք ապրում ենք: Ասում են՝ ուզում են մեր հողն առանց հայերի՝ ամբողջ Թիֆլիսը խոսում է, ինքն անձամբ չի լսել, ես ուր, գներալներն ուր, – առանց կանգ առնելու շնչում էր Տարիելը:

– Պաղրե, միայն լսես, թե այդ Խարկովից մարդը ինչ սարսափելի բաներ է պատմում: Նեղերը նույնիսկ եկեղեցուց չեն վախենում, Սուրբ Զատիկի գիշերը նրանց վարդապետի աչքերը հանել են, կտրել են լեզուն ու ականջները և ողջ-ողջ

թաղել են աղբի փոսի մեջ: Հետո ամբողջ գյուղին գնդակահարել են: Սուրբ կույս Մարիամ, փրկյի՛ր, մի՛ մոռացիր մեր մահին, – ծերունին վշտացած սկսեց աղոթել:

–Քեռի՛ Տարիել, մեզ միայն ռուսներն են սիրում: Անգլիացիք թաթարներին են օգնում, հավատը նրանց չի խանգարում նավթը սիրել, – խաչակնքեց Ղազարոսը, – իսկ ռուսները խոստացան օգնել հասարակ քրիստոնյա ժողովրդին, մեզ փորձանքի մեջ չեն թողնի:

Ղազարոսը չկարողացավ ավելին ասել: Շարունակելու համար նա ստիպված կլիներ խաբել: Մի կողմից, եթե այնտեղ՝ Ռուսաստանում, ռուս ուղղափառ քահանաներին սպանեն ու կախեն, ժողովուրդը, միևնույն է, պետք է գնա եկեղեցի. կաթոլիկությունը կօգնի նրանց: Բայց մյուս կողմից նա ինքն էր անհանգստացած իր հայրենիքի՝ Ախալցխայի ճակատագրով:

Վրաստանում աննախադեպ, նույնիսկ աներևակայելի բաներ էին կատարվում, որոնցից երիտասարդ քահանան այնքան էլ չէր հասկանում, բայց զգում էր, որ այս պատերազմից լավ բան սպասել չի կարելի: Բայց ծերունուն հանգստացնելու համար պետք է իրողությունը թաքցնել...

Պաղրեն արագ անցնում էր արթնացող թաղամասի կողքով... Առջևում հպարտ Մթածմինդայի վրա բացվում էր օրը անհանգիստ ու գործնական: Դեռ պետք է հասցնեիր մորը տեսնել (խոստացել էր հարազատի համար դեղեր բերել), քրոջ՝ ծիծաղկոտ Լիզայի հետ խաղալ... Մայրը՝ տիկին Իսկուհին, երկար ժամանակ ապրում էր այրու դժվարին կյանքով, Հարությունը շատ շուտ մահացավ, և Իսկուհին երեք երեխաներին միայնակ մեծացրեց:

Ղազարոսի հայրն էլ էր ջանասեր ծխական, որպես ուխտավոր այցելել էլ աշխարհահռչակ Լուրդը և այնտեղից բերել կույս Մարիամ Աստվածածնի երկու արձանիկ: Մեկը

նվիրեց Ալաստանի եկեղեցուն, երկրորդը՝ Ախալցխայի համայնքին:

Իհարկե, ինչ-որ տազնապ կար հայր Ֆրանչեսկոյի հոգում, բայց աստվածահնազանդ մարդը վտանգն էլ խոնարհությամբ է ընկալում: Առօրյա հոգսերը նրան հեռու էին պահում վատ մտքերից, իսկ Աստծո ու ծխականների հետ շփումը ուժ էր տալիս:

Աղաջանյանները ծնվել էին արդեն Ռուսական կայսրությունում 1928 թվականի ռուս-թուրքական պատերազմից հետո: Կորցնելով հիվանդներին, թույլերին, երեխաներին ու ծերերին՝ գաղթականների մի շարան ձգվեց Կարինից, այդպես էին հայերն իրենց քաղաքն անվանում հնագույն ժամանակներից: Թուրքերն անվանափոխեցին, դարձրին Էրզրում... Հենց այս Կարինյան կաթոլիկ հայերից շատ գյուղեր են կայացել Կայսրության կովկասյան ծայրամասի տարածքում:

Աղաջանյանների ավագ որդին՝ Պետրոսը, լուռ ու հնազանդ երեխա էր, ոչնչով աչքի չէր ընկնում: Բայց ամենափոքրը՝ Ղազարոսը, մանկուց մեծերին զարմացնում էր անկաշկանդ խոսքով: Տասը տարեկանում նա տիրապետում էր լատիներենին: Համայնքի ղեկավար Հովսեփ Սարուխանյանը տղային լսելիս հաճախ էր հուզվում. «Միայն տեսեք, թե որքան սահուն է նա խոսում»: Իսկ երբ հովվական այցով Հոռմից վարդապետ Տեր Սարգիս Տեր-Աբրամյանը Ախալցխա եկավ երիտասարդ սերունդը հրավիրելու, փոքրիկ Ղազարոսը խճճվել էր նրա փեշերի մեջ և աղաչում էր, որ իրեն քահանա դարձնեն:

–Դու լսի՛ր, լսի՛ր նրան, մի՛ նայիր, որ դեռ երեխա է, – հպարտանում էր Հովսեփն իր աշակերտով:

Նա դեռ ութ տարեկան էլ չկար, երբ մայրը նրան տարավ Ախալցխայի կաթողիկե եկեղեցի գրեկ-կարդալ սովորելու: Տղան ցնցված էր իր տեսածից: Ոսկեգօծ եկեղեցին, աղջիկների երգչախմբի հանդիսավոր երգը նրան ամբողջովին գրա-

վել էին, և երբ եկեղեցին գիշերը փակվում էր, ուշ գիշերով նա պատուհանից ներս էր մտնում ու մումի լույսի տակ մտապահում աղոթքները: Եկեղեցին կանգնած էր Ախալցխայի կենտրոնում՝ գեղեցիկ և ամուր: Այն կառուցել էր Եփրեմ Մեթյանը, երբ ռուսները նրան Կարինից տեղափոխեցին այստեղ: Խորհրդային կարգերի օրոք այս եկեղեցին ամբողջովին ավերվել է մինչև վերջին քարը, որի փոխարեն կառուցեցին շենք կուսակցության շրջանային կոմիտեի համար: Նրանք իրենց կոմունիզմը նույնպես կրոն էին համարում, բայց նույնիսկ մեկ դար (և փառք Աստծո) այդ «կրոնը» չապրեց:

Ղազարոսի եռանդն այնպիսին էր, որ ախալցխացիները հիացած էին փոքրիկ ծխականով, իսկ տեր Հովսեփը վաղուց էր այք դրել ժիր, ընդունակ տղայի վրա: Նա ուշադիր հետևում էր տղային, նրան տարավ՝ շարունակելու ուսումը և ոչ թե ինչ-որ մի տեղ, այլ կաթոլիկության մայրաքաղաք՝ Հռոմ: Փողոցի բոլոր հարևանները, որտեղ մինչ օրս դեռ կանգուն է այն տունը, ուր մեծացել է Ղազարոսը, անչափ ուրախանում էին տղայի համար: Դե իհարկե, այդքան խելացի, հնազանդ, ջանասեր երեխան լավ քահանա կդառնա: Նա կտվորի և կգա իրենց մոտ որպես քահանա. հայրենիքում կունենան իրենց սեփականը: Հավաքվեցին ճանապարհելու և բեռնեցին նվերներով: Իսկ Ղազարոսը, մոր ձեռքը սեղմած, փորձում էր թաքցնել արցունքները, քանի որ պաղրեն ասաց, որ պետք է հինգ տարի սովորի:

Լսողները շարվեցին կիսաշրջանաձև: Ղազարոսը, սրտագորով և հուզիչ ձեռքերը կրծքի առաջ ծալելով, բարակ ձայնով երգում էր «Մանտա Մարիա», իսկ կես ժամ անց Տեր-Աբրամյանը տղայի համար իսկական քննություն կազմակերպեց՝ ուղղակի ցնցվելով նրա կարողություններից: Իսկապես, նա լիովին տիրապետում էր լատիներենին:

– Ինձ հետ Հռոմ կգա՞ս, – հարցրեց պաղրեն Ղազարոսին, որը կարմրեց գովեստից:

– Ես կհարցնեմ մայրիկին՝ նա ինձ թույլ կտա՞, – երջանկությունից ձայնը դողում էր:

Եվ չնայած կրտսեր որդին Իսկուհու սիրելին էր, նա մի տեսակ տխուր ուրախությամբ համաձայնեց: Այն օրերին քահանան վերահսկում էր հոտի սիրտն ու միտքը, և շատ ծնողներ երագում էին իրենց երեխային տեսնել քահանայի դեմքով: Տեսուչը, տեսնելով 11-ամյա լուրջ դեմքով փոքրիկ ծխականին, որ եկել էր Ուրբանի միջազգային քոլեջ՝ սովորելու, ժպտալով բացականչեց.

– Որտե՞ղ է նրա մայրը: Սա պարզապես երեխա է: Մենք չենք կարող վերցրնել, թող մեծանա:

Բայց Ղազարոսն իրեն իսկական տղամարդ դրսևորեց. երբեք չխնդրեց տուն գնալ, թեև սկզբում չէր կարող ապրել առանց քրոջ ծիծաղկոտ Լիզայի, Եղսաբեթի, և, իհարկե, կարոտում էր մորը: Որդու համար քահանայի կարիերա տանող ճանապարհը միակ ելքն էր Իսկուհու համար, ինչպես նաև շատ մայրերի, ովքեր երագում էին, որ իրենց երեխաները սովորեն ու եկեղեցական սպասավոր դառնան:

Քոլեջում նա ամենափոքրն էր և գուցե ամենազվարճալին: Երբ Պիոս X պապը եկավ քոլեջ, բոլոր ուսանողներին բերեցին Պապի մոտ: Փորձելով լուրջ և չափահաս երևալ՝ նրանք հմայված նայում էին Հռոմի պապին և մյուս կարդինալներին:

– Ո՞վ է այստեղ ամենաերիտասարդը:

Բոլորը բղավեցին՝ «Ղազարոսը»:

Տղան ամաչելով թաքնվեց ճեմարանականների թիկունքում, բայց Սրբազանը կոչ արեց.

– Ղազարե՛, եկ արտաքս (*Ղազարո՛ս, դու՛րս արի*):

Այդպես ասաց Հիսուսը, երբ քարայրից կանչեց Ղազարոսին:

1908 թվականին Ղազարոսը 13 տարեկան էր, երբ ուսանողները հավաքվեցին Ուրբանյան ճեմարանի 25-ամյակի ավարտական արարողությանը: Ներկա էին բոլոր հայ վարդա-

պետները, եպիսկոպոսները, և հայասեր հայրապետը հարցրեց. «Տեսնե՞րք ձեզանից քանիսը և ուրբեր են դառնալու եպիսկոպոս»: Փոքրիկ Ղազարոսը քահ-քահ ծիծաղեց, իսկ հետո Պատրիարքն ասաց.

—Այդ դու՞ ես ծիծաղում: Այ դու՞ էլ կլինես: Մաղթում եմ քեզ ոչ միայն եպիսկոպոս դառնալ, այլ նաև պատրիարք:

Եվ ի վերջո դարձավ: 17 տարեկանում նա ստացավ իմաստասիրության (փիլիսոփայության) վարդապետի վկայական, իսկ 21-ում՝ Աստվածաբանության վարդապետի վկայական:

Չնայած երկու վկայություններին՝ նրա չափազանց երիտասարդ տարիքը ստիպեց ևս մեկ տարի սպասելու ձեռնադրությանը: Բայց նա իզուր ժամանակ չկորցրեց. իրավաբանություն էր սովորում Հռոմի պապական Լատերանի համալսարանում: Եվրոպացի գործընկեր պրակտիկանտները հիացած էին արևելյան սևամորուք ուսանողով, ով արժանացել էր համալսարանի գրեթե բոլոր մրցանակներին: Այդ տարի նա ստացավ ևս մեկ վկայական՝ վարդապետ Երկուց Իրավանց (վարդապետական իրավունքի դիպլոմ):

Գոյունեան արքեպիսկոպոսն օձեց ու ձեռնադրեց Ղազարոսին և անվանեց Ֆրանչեսկո: Պարզվեց, որ պետք էր սովորել ոչ թե հինգ, այլ տասը տարուց ավելի: Պետք է պատկերացնել, թե ինչպես էր նա կարոտում Ալաստանից եկած տատիկին, մորը, ինչպես էր ուզում տեսնել և՛ հարազատներին, և՛ ընկերներին, ինչ կարոտով էր հիշում Ախալցխայի շրջակայքի գեղեցիկ սարերն ու լանջերը... Կախարդական բնությունն այնտեղ իսկապե՛ս ու դրախտային միջավայր էր ստեղծել: Երիտասարդ քահանան շատ էր անհանգստանում, թե արդյո՞ք իրեն կնշանակեն Ախալցխայի վանահայր: Բայց Թիֆլիսի և այլ գյուղերի կաթոլիկ եկեղեցին նույնպես հայոց լեզուն իմացող քահանաների կարիք ուներ: Չէ՞ որ ունիաթական ա-

բարոդությունը հայկական ծեսով էր, հայոց լեզվով, և Հռոմը չէր կարող այդքան հայ քահանա մատակարարել:

1909 թվականին ստեղծվում է Հայ ծիսակատարության կաթոլիկների առաքելական վարչությունը (նստավայրը՝ Թիֆլիսում): Մինչև 1916 թվականը վարչակազմը բաղկացած էր 47 քահանայից՝ 45 եկեղեցուց, 15 մատուռի և ավելի քան 65000 հավատացյալի համար: Այս թվերը հիշենք... Արդեն XIX դարի կեսերին Հայկական ծեսի կաթոլիկությունը դարձավ անքակտելի երևույթ, թե՛ Արևելյան, թե՛ առավելապես Արևմտյան Հայաստանի հայերի մեջ, թեև, ընդհանուր առմամբ, նրանց թիվը չէր գերազանցում ողջ հայ բնակչության 5-6%-ը (նաև այսօր):

Պետք էր նման գուգաղիպություն տեղի ունենար. Ղազարոսը ձեռնադրվեց հենց այն ճակատագրաբեր ապստամբ տասնյոթ թվականի վերջում, որը տակնուվրա արեց Ռուսաստանն ու իր հետ ամբողջ աշխարհը: Նա վերադարձավ և հայտնվեց Թիֆլիսում, այնտեղ հասնելով Կ.Պոլսով ծառայում էր նաև մոտակա երկու գյուղերի հոտին: Կես տարի անց Թիֆլիսում՝ Մուրբ Գրիգոր Լուսավորիչ Ղազարոս եկեղեցում, հայր Ֆրանչեսկոն կազմակերպեց Ղ.Ալիշան դպրոցը, հայ մանուկների համար՝ նրանց միտքն ու սիրտը մշակելու համար, որից հետո շահեց Թիֆլիսի հայ կաթոլիկների ողջ համակրանքը: Տեսնելով Հյուսիսային Հայաստանի կաթոլիկ հավատացյալների ծանր վիճակը, ուզեց հիմնել ուսումնարան, սակայն Հայաստանի սովետական իշխանությունները թույլ չտվեցին:

Բայց նա չէր մոռանում հայրենի տունը, հաճախ էր ճամփորդում իր հիասքանչ քաղաքը, միշտ գնում էր Մուխլիսի եկեղեցի, որի ծխականները սիրահարվում էին երիտասարդ, կրթված քահանային: Այնտեղ տանող ճանապարհը հիշեցնում էր հռոմեական և իտալական ճանապարհները: Լանդ-

շաֆտը փոխվեց դրախտից քաղաքային, քաղաքայինից դրախտային...

Սովխիսցիները Էրզրումից վերաբնակեցվելուց անմիջապես հետո՝ 19-րդ դարում, կառուցեցին ամուր քարե եկեղեցի (գյուղից դեպի եկեղեցին բարձրանում է նեղ քարքարոտ փողոց): Տարին մեկ անգամ տեղի բնակիչները գյուղի հայ բնակչությունը, հավաքվում են աղոթքի «հարթ տեղում», այն անվանում են «Վիչկինդուզ» (հարթ տեղ): Վիչկինդուզի փառատունը հիմնականում անցկացվում է մայիսին: Երեխաները, այս օրը նշելու համար, շշերը ջուր էին լցնում, վրան ավելացնում հոնի կամ բալի մուրաբա և գնում Վիչկինդուզ:

Երկար տարիներ ոչ ոք չարգելեց մեծ գյուղի գերեզմանատանը մատուռ կառուցել: Բայց հենց վերջերս էր, երբ գյուղացիները որոշեցին մի փոքր ամրացնել այն և գեղեցիկ նորոգել, վրացական իշխանությունները որոշեցին, որ շինարարությունը «ապօրինի» է, և Ախալցխայի շրջանային դատախազությունում քրեական գործ հարուցվեց:

Գլուխ տասնչորսերորդ

Վազում են, փախչում են բոլորը, մնում են թույլերը միայն, անհայտ խավարում կկորչեն, ոմանք կդատնան մարդասպան, հրաշքը կփրկի միայն: Բայց դաժան օրենքներ են տիրում, քահանա և հավատ են սպանում, պետության ճանկերում գայլային երախից չեն կարող փրկվել: Անօրեն են նրանք համարվում, սարսափով իրենց մահվանն են սպառում...

Գլուխը կախ՝ Ղազարոսը լսեց Տարիելին, ապա լաթի պարունակությունը խնամքով փաթաթելով իր թաշկինակի մեջ՝ ջերմորեն հրաժեշտ տվեց ծերունուն՝ նրան թողնելով մի շիշ նավթ ու նոր աղոթագիրք՝ որպես հուշ: Գիշերը Ղազարոսի դուռը կամացուկ թակեցին: Գիշերվա ցրտից դողալով՝ մի տարեց պաղորե՝ ախալքալաքցի քահանան, հայր Ֆրանչեսկոյին հրեց դեպի ներս՝ սենյակ, ու ցածր, խոպոտ ձայնով խոսեց.

– Տղա՛ս, եղբա՛յրս, սուրբ հա՛յր, վիշտ ու դժբախտություն է գալիս մեր ժողովրդին, դեպի մեր հավատքը, – դողացող ձեռքերով նա մեկնեց օրաթերթից ճղած մի էջ՝ ընդգծված տողերով, – ասում են, որ ռուս նոր եկվորները Թիֆլիսում զավթել են իշխանությունը, նրանք շուտով այստեղ կսկսեն գնդակահարել բոլոր նրանց, ովքեր իրենց հավատակից չեն: Սու՛ր Մայր, ողորմի՛ր մեզ, ողորմի՛ր և պահպանի՛ր:

Մոտենալով խաչելությանը՝ ծերունին շարունակեց ողբալ:

Ղազարոսը նստեցրեց պաղորեին բազմոցին, բարձրացրեց լամպի պատրույզը և սկսեց կարդալ: Այն, ինչ նա լսեց, ապշեցրեց նրան: Եվ դեռ ասում էին՝ ազատություն, ազատություն... Երբ Փետրվարյան հեղափոխության ժամանակ ուսանողները երգում էին՝ «Մենք կբարձրանանք երկինք, մենք կցրենք բոլոր աստվածներին», ո՞վ կարող էր մտածել, թե ինչի առաջ կհանգեցնի այս անսպասելի ազատությունը...

Մաշված և դեղնած թերթում մեծ տառերով գրված էր. «Մահ քահանաներին: Մահ արյունախումներին»: Ավելի ցածր հատվածում այսպես էր ասվում. «Անխնա իրականացնել զանգվածային ահաբեկչություն կուլակների, քահանաների և սպիտակ գվարդիականների դեմ: Կասկածելիներին պետք է փակել քաղաքից դուրս գտնվող համակենտրոնացման ճամբարում... անհրաժեշտ է ապահովել Խորհրդային Հանրապետությունը դասակարգային թշնամիներից՝ մեկուսացնելով նրանց համակենտրոնացման ճամբարներում»: **Ույսանով-Լենին**.

Այս թերթը հին է, այսինքն՝ այնտեղ արդեն ոչնչացրել են բոլորին, հիմա եկել են այստեղ: Պարզվում է՝ ծեր Տարիելը ճշմարտություն էր ասում:

—Սու բբ Կույս Մարիամ, փրկի՛ր մեզ, —խառնվեցին երիտասարդ պաղրեի մտքերն աղոթքի հետ:

Բայց ի՞նչ կարող էր նա անել: Փախչել է: Իսկ եկեղեցի՞ն, նրա ծխականները: Իսկ ու՞ր փախչել: Շուրջը ավերածություն, ջարդոլիտորդ եղած ճանապարհներ, քաղցած զինվորներ ճանապարհներին, և բոլորը սխալ ուղղափառ հավատքի, որոնց քահանաներին նույնպես մահ էր սպառնում: Եթե ուղղափառներն իրենց քահանաների մասին են հայտարարում՝ «Մահ տերտերներին», ապա ի՞նչ էր սպասվում նրանց՝ կաթոլիկներին:

Հայր Ֆրանչեսկոն խոնարհաբար խաչակնքեց՝ ամեն ինչ Աստծո՞ ձեռքում է: Նա չի թողնի իր ծխականներին, Աստված կգա օգնության: Թուրքերն էլ ֆոֆոում են աջ ու ձախից, նրանք չեն էլ զգուշացնում. մորթում են ու վերջ: Ախալցխայում մի տարի առաջ քիչ էր մնում ջարդ անեին. ուզում էին քաղաքը զավթել, բայց լավ է՝ մի խելոք դաշնակ կար, քաղաքի ղեկավարը թիֆլիսցի խորամանկ Չորի Չորյանը: Լեզու թափեց, մոտ 200 թուրք բնակիչ բերման ենթարկեց, պաշտպանեց

քրիստոնյաների վրեժխնդրությունից, իսկ թուրքերը «որպես երախտագիտություն» հետ նահանջեցին:

Ղազարոսը իր խղճուկ ընթրիքը կիսեց այսալքալքցու հետ: Նրանք լուռ կուլ տվեցին սննդի մնացորդները և պատկեցին քնելու սառը սենյակներում: Առավոտյան ուշ էլան: Քահանաներից յուրաքանչյուրը քայլեց դեպի իր եկեղեցին, աղոթք բարձրացրեց դեպի երկինք՝ պաշտպանության խնդրանքով: Սկսվեցին սարսափելի ժամանակներ. ոչ մի պաշտամունքի սպասավոր, ոչ ուղղափառ, ոչ կաթոլիկ, ոչ հունական եկեղեցիներ կամ հրեական սինագոգներ, որոնք դարեր շարունակ պաշտպանված էին Աստծո, խաչի և իրենց հավատքի կողմից, իրենց մտքով չէր անցնում, թե գլխներին ինչ աղետ է պատրաստվում..

Այնպես արագ էր ամեն ինչ փոխվում և ճիշտ հակառակ ուղղությամբ, որ օրերը կամ շատ արագ էին հոսում, կամ շատ դանդաղ՝ ինչ-որ սարսափելի բանի ակնկալիքով: Հռոմից քեռի Տարիելի ոսկյա մատանիների դիմաց որբերի ու հիվանդների համար փող ուղարկեցին, շորեր ու ոչ մի հուսադրող բան: Ընդհակառակը, զգուշացրին, որ իրենք քիչ միջոցներ ունեն, ամբողջ Իտալիայում սով ու ավերածություններ են եղել, բայց նոր բերքահավաքով, Աստծո օգնությամբ, բոլորը հույս ունեին ոտքի կանգնել: Ի վերջո, Իտալիան էլ էր հաղթող կողմ:

Ղազարոսը ջերմեռանդորեն աղոթում էր իր, ծխականների, եկեղեցու համար, հավատում էր, որ Տերը հավատացյալների կողքին է. այլ բան չէր էլ կարող մտածել: Առաջին իսկ հնարավորությամբ Ղազարոս-Ֆրանչեսկոն Հռոմ ուղարկեց որբուկին՝ փոքրիկ Հովաննիսին և նամակով խնդրեց հայրենակցին, որ տղան սովորի ճեմարանում: Լեզուն չգիտեր, բայց արդեն երկու-երեք ամիս Ղազարոսը գնում էր իրենց տուն, իտալերեն ու լատիներեն էր դասավանդում, իսկ տղան գրեթե ամեն օր անցկացնում էր եկեղեցում: Երկու ամիս հետո Հռո-

մից լուր եկավ, որ Հովաննիսի մոտ ամեն ինչ կարգին է, տղան խելացի է ու արդեն իրեն լավ է դրսևորել: Միննույն ժամանակ հայրենակիցը հայտնել էր սարսափելի դեպքերի մասին՝ կաթոլիկ և հայ եղբայրների դեմ:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջում թուրքերի կողմից իրականացված կոտորածը առանձնահատուկ դաժանությամբ վերաբերվեց հայ կաթոլիկ համայնքին. զոհվեցին ավելի քան 150 եպիսկոպոսներ, քահանաներ, միանձնուհիներ և ավելի քան 100 000 աշխարհականներ: Թուրքիայում կաթոլիկ հայեր գրեթե չմնացին... Աներևակայելի կոտորածի ողբերգության արձագանքները հասան հին Թիֆլիս ու շրջակա հայկական գյուղերը, դեպի ուր հոսում էին փախստականների առվակներ:

Մի թե և այստեղ՝ քրիստոնյա Ռուսաստանում, առաջին հերթին կաթոլիկները դժվարություններ կունենան: Ամեն օր նորություններ էին հասնում: Աղքատներին հավաքագրում էին գյուղերից ու տանում ռազմաճակատ, ու ոչ ոք չէր հասկանում, թե ով ում հետ է կռվում՝ կա՛մ՝ թուրքերի հետ, կա՛մ՝ հայերի, կա՛մ՝ ռուսների, հետո էլ՝ իրար հետ...

Ֆրանչեսկոն և մնացած բոլոր եկեղեցականները շարունակում էին մկրտել, թաղել, քարոզել և խոստովանել, բայց նրանց գլխին ամպեր էին հավաքվել: Մայրը՝ Իսկուհին, ամեն հանդիպմանը նայում էր նրա աչքերի մեջ և աղաչում հեռանալ: Ամենուր սպանում էին, ձերբակալում, օդում բոլորի գլխին վտանգ էր կախված: Սակայն նախախնամությունը այլ ծրագրեր ուներ՝ Ղազարոս Աղաջանյանի հետ կապված:

Հռոմում նույնպես անհանգստացնում էր իրենց քրիստոնյա եղբայրների ճակատագիրը, ֆրանկների ճակատագիրը հատկապես անհանգստացնում էր Լիբանանի հայ կաթոլիկների պատրիարք Բողոս-Բեդրոսին: Պատրիարքն ավելի լավ էր պատկերացնում, թե ինչ է կատարվում և ինչ դեռ կարող էր պատահել իր հոտի հետ ռուսական ցարի հողերում, ո-

րի գահից հրաժարվելուց հետո բոլորը կարծես կատաղել էին: Եվ Հռոմի օգնական եպիսկոպոս Մերգիոս Տեր-Աբրամյանին ուրիշ ելք չէր մնում, քան Ղազարոս-Ֆրանչեսկոյին Հռոմ կանչել, մինչև ամեն ինչ կկարգավորվեր: 1921թ. սեպտեմբերի 10-ին Լևոնյան վարժարանի տեսուչ գերապատիվ Սարգիս Տեր-Աբրահամյանի առաջարկով Աղաջանյանը վերադառնում է Հռոմ և նշանակվում վարժարանի փոխտեսուչի պաշտոնում, որպեսզի օժանդակի իր ուսուցչին: Նրա ուսուցիչը վարժարանի հուշամատյանում Աղաջանյանի մասին գրել է. «*Բարի և ուսեալ է. թող օրինէ՛ Աստուած զինք, որ Մեծառոբաց իրեն վրա դրած գեղեցիկ յոյսերը պսակէ՛:*

Տարեսկզբի Սուրբ Ծննդյան տոներից հետո Հռոմում բացվեց (թե՛ հատուկ բացեցին) Հռոմի հայ կաթոլիկ եկեղեցու Լևոնյան հոգևոր ճեմարանի պրոռեկտորի թափուր պաշտոնը: Ֆրանչեսկոն դիմադրում էր այս գաղափարին, բայց նա ինքն էլ տեսավ, թե ինչպես է օղակը սեղմվում իր շուրջը, և խոստումնալից երիտասարդ պադրեին բառացիորեն «փախցրին» չեկիստ մարդասպանների քթի տակից:

Որոշ ժամանակ անց Վրաստանի և Հայաստանի բազմաչարչար քրիստոնեական համայնքները ենթարկվեցին աննախադեպ բռնաճնշումների: Բայց մի թե՛ միայն նրանք: Աներևակայելի դաժան սարսափի մի այլք՝ *Կարմիր ահաբեկչություն*, որը, շրջելով խորհրդայնացված երկրի բոլոր քաղաքներով ու գյուղերով, անխնա և ամբողջությամբ ոչնչացրեց Ռուսաստանում ու նրա նախկին գաղութներում հսկայական թվով ուղղափառ և կաթոլիկ քահանաների: Միայն պատկանելության պատճառով...

Օրինակ, «*Չեկայի*» խորհրդի անդամ Լացիսը (Սուրբաբը) չեկիստական «*Կարմիր տեռոր*» շաբաթաթերթում տպագիր հրահանգ է տվել. «*Մի՛ փնտրեք մեղադրական ապացույցներ գործի վերաբերյալ՝ զենքով թե՛ խոսքով նա ապստամբեց Խորհրդի դեմ: Ձեր առաջին պարտականությունն է*

հարցնել նրան, թե ինչ դասի է պատկանում, ինչ ծագում ունի, ինչ կրթություն և ինչ մասնագիտություն ունի: Այս հարցերը պետք է որոշեն մեղադրյալի ճակատագիրը: Սա է Գարմիր տեռորի իմաստն ու էությունը»: Հասկանալի և մատչելի է բացատրված էության մասին:

Ֆրանչեսկոն սկսեց շրջել եվրոպական և որոշ արաբական երկրներում ու հավաքագրել պատերազմից և ցեղասպանությունից փրկված հայ տղաների հետագա կրթության համար: Ընտրում էր ամենախելացիներին: Բազում որբեր հայտնվեցին մանկատներում տեղի ունեցած ջարդից հետո: «Երեխաները, որոնց վրա լատին միսիոներների ուշադրությունն է հրավիրվում, զրկված են ծնողներից և չեն ստացել այնպիսի դաստիարակություն, որը ինչ-որ կերպ կարմատավորեր իրենց հայրերի ազգային մշակույթն ու հավատը: Նրանք ամենահարմար «կյութն» են «նոր մարդու տեսակի ձևավորման համար»՝ մանկուց կողմնորոշվելով արևմտյան արժեքների և լատինական հավատի կողմը»:

Հայտնի է, որ ի տարբերություն ենիչերիների, որոնք բռնությամբ են տարել լիակատար ընտանիքներից, Բայց նույն գաղափարախոսությամբ: Ավելի քան տասը տարվա տքնաջան ու բժախնդիր աշխատանքից հետո՝ Հոռուի օգնական եպիսկոպոս Սերգիոս Տեր-Աբրամյանը, որ գլխավորում էր Հոռուի թեմի հայ կաթողիկե հոգևորականներին, Ֆրանչեսկոյին օժուր է եպիսկոպոսություն:

Բայց ամեն մի նորություն կարմիր բոլշևիկյան Ռուսաստանից Ֆրանչեսկոյին մոտեցնում էր այն մտքին, որ սա երկար ժամանակով է և կարծես թե արդեն ընդմիջտ... Այսինքն՝ նա երբեք չի կարողանա տեսնել ո՛չ եղբորը, ո՛չ քրոջը, ո՛չ մորը...

1958 թվականին Հայ առաքելական եկեղեցու Տեր Իոաննես քահանան պատմում է. «Տիօրհների օրերն են Սուրբ ծննդյան և Տիրոջ աստվածահայտնության նախօրեին:

Ախալցխայի համայնքում Սուրբ Զատիկն ու Սուրբ ծնունդը նշում են տարին երկու անգամ: Գրիգոր Աղաջանյանի հիվանդ մայրը տառապում էր և կարոտում ընդմիջտ հեռացած որդուն, որի դիմանկարը կախված էր պատից: Այդպիսի մի օր մենք նրան այցելեցինք մահվան մահճում: Ջերմ գրույցի ընթացքում նա մի փոքր ոգևորվեց, խոսեց, Բայց մի քանի օր անց մահացավ: Չնայած նրա մայրը նույնպես կաթոլիկ էր, սակայն ծեսը կատարել էմ Հայ առաքելական եկեղեցու կանոններով...»:

Գլուխ տասնհինգերորդ

*Ընտրությունը դժվար է անել, ընտրելով՝ չընտրել ինքդ
քեզ, իմացար, որ արդեն ընտրված չես՝ որոշիր նախապես
մերժվել... Լավ է դու այդ գահից հեռանաս, քան տեսնես՝ ոնց
են քեզ հեռացնում:*

Դառը դիմաձայքերը մթագնում էին կարդինալի պարզ
ու բարի դեմքը:

Տասնյակ ու հարյուր միլիոնավոր կաթոլիկներ ամբողջ մո-
լորակի վրա և կես միլիոնից մի փոքր ավելի հայ կաթոլիկ-
ներ... Ոչ, երևի նա պատրաստ չէր գլխապտույտ պայքարել
պապականության համար: Բսկ կարդինալները պատրաստ
չէին ընտրել ոչ իտալացու...

Մակայն աստիճանաբար նա հստակ հասկանում էր, որ
կաթոլիկություն ընդունելը բոլորովին չի նպաստում հայա-
պահպանությանը: Նրան քաջ հայտնի էր լեհահայ կաթոլիկ-
ների օրինակը, որոնք անհետացան լեհ եղբայրների մեջ: Նա
գիտեր նաև այն հայերի մասին, որոնք, Օսմանյան կայսրութ-
յանում ընտրելով կաթոլիկությունը, դեռ կոտորվում էին՝ որ-
պես Հիսուսի ազգ: Մյուսները յաթաղանի սարսափի տակ ըն-
դունեցին իսլամ՝ իրենց հոգիներում խորապես թաքցնելով ի-
րենց անունը, լեզուն և նույնիսկ իրենց տեսակի հիշատակը:
Բսկ ոմանք, ովքեր պահպանել են իրենց նախնիների հավա-
տը, ապրում էին Ռուսաստանում, որը պետություն էր կոչ-
վում, բայց նրանց եկեղեցիները կամ քանդվում են, կամ
զրկվում քահանաներից...

Իր մանկության ընկեր, համազյուղացի Ստեփան Երոյանը
զոհվեց, չքացավ Ստալինյան ճամբարներում:

Նրան շոտ էին բերել ալաստանցի հինգ տղաների հետ՝
հայկական վարժարանում սովորելու Գրիգորի գալուց երկու
տարի անց: Ստեփանը բոլորից ընդունակ էր, գիտեր 7-8 լե-

զու, ձեռնադրվելուց հետո գնաց Ալաստան՝ իր հայրենիքում
ծառայելու: Որպես ավագ՝ հայր Ֆրանչեսկոն նրա հետ պա-
րապում էր կրոնի և իրավունքի պատմություն, իսկ Ստեփա-
նը, լինելով քահանա, ով սովորել էր նույն ձեմարանում, բա-
րեխղճորեն գրի էր առնում հայր Ֆրանչեսկոյի բոլոր հրա-
հանգները:

Բայց բուշնիկները, ի պատասխան շոտի պապի առաջ-
խաղացումներին, որն առաջինը ճանաչեց Ռուսաստանը որ-
պես խորհրդային երկիր, սկսեցին ոչնչացնել կաթոլիկներին,
իսկ Վրաստանում առաջին հերթին (ինչը սպասելի էր)՝ հայ
կաթոլիկներին: Գյուղերում շատերը վախից իրենց ազգա-
նունները փոխում էին վրացականի: Ավելին, իշխանություն-
ներն ամեն ինչ արեցին, որպեսզի խրախուսեն թե՛ ազգանուն-
ները փոխադրելին, թե՛ դրան նպաստողներին:

Ինչ օգուտ բերեցին կարմիր բուշնիկները իրենց հա-
մակրոններին: Բսկ հայերի՛ն: Իր ընտանիքը չի կարող գալ շո-
տում՝ անգամ տեսակցելու: Նա նույնիսկ չհասցրեց տեսնել
մորն իր վերջին ճանապարհորդությունից առաջ: Ով գնում է
ու չի վերադառնում, համարվում է դավաճան: Մնացողներին
էլ կամաց-կամաց ոչնչացնում են: Եվ միայն քսան տարի ա-
ռաջ և նույնիսկ տասը տարի առաջ քանի գնդակահարված ու
ծեծված, ովքեր կորցրին իրենց մարդկային տեսքը, զոհվեցին
ու կորան այս սարսափելի երկրում:

Ով գիտի, թե ինչ կկրկնվի այն սարսափելի անցյալից:
Ամեն ինչ Աստծու ձեռքերում է: Բայց ռուսներին չի կարելի
մերժել մի բանում. նրանք միշտ հիանալի զգում են, թե ով է ի-
րենց ատում, գուցե այն պատճառով, որ գիտեն՝ ինչու: Կար-
դինալ Սիրին էլ չի ուզում նրանց մասին նույնիսկ լսել, ամ-
բողջ Արևելյան Եվրոպան ջախջախվել ու տրորվել է նրանց
տակ... Եվ նա էլ է ատում ռուսներին: Հարգելի կարդինալնե-
րին շոտ թույլ չտվեցին գալ, նույնիսկ քվեարկելու:

Իսկ Սուրբ Էջմիածնի դեմ պայքարելը պե՞տք է: Էջմիածինն էլ ռուսների առաջ կռացել է, գերության մեջ է, նրանց էլ չի կարելի նախանձել, որովհետև Էջմիածինը մեկ ժողովրդի եկեղեցի է, իսկ Ռուսաստանում բոլոր հայերին աթեիստ են դարձրել... Որքան էլ Գրիգոր Աղաջանյանը ջանում էր համոզել խաբված հայերին՝ հայրենադարձության պատրվակի տակ չհեռանալ և ընկնել այդ դժոխքը, այնուամենայնիվ, 100-150 հազար հոգի գնաց: Ու շատ շուտով փոշմանեցին: Նրանց մեծ մասը երագում էր դուրս պրծնել...

Շատերն ընկան *Էնկավեղեի*-ի ճիրանները, իսկ հետո՝ ուղիղ *Գուլագ, Սիրիի արտրավայր*: Տեղի հայերն այնքան էին վախենում խորհրդային կարգերից, որ նույնիսկ մոռացան, թե ինչ հավատ ունեին: Եթե որևէ մեկը պահպանել էր հավատը Էջմիածնի նկատմամբ, նա էր, ով կոչվում են սփյուռքահայ սփոված աշխարհով մեկ: Այնտեղից Էջմիածինը, Արարատի տեսարանով հանդերձ, թվում էր նրանց միակ սրբավայրը: Թեպետ կարդինալ Աղաջանյանը ամեն ինչ արեց Սփյուռքը Էջմիածնի ազդեցությունից պաշտպանելու համար, որովհետև, ըստ շատերի, ինքն էլ բոլշևիկների դաժան ճնշման տակ էր: Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետը վաղուց էր հաստատվել Լիբանանում, «և ինչո՞ւ պետք է Մեծի Տանն Կիլիկիո Պատրիարքը ենթարկվի Խորհրդային Էջմիածնին», – հարցադրում էին հոգևոր հայրերը:

Գրիգոր Աղաջանյանը հերթական անգամ թիկունքից զգաց կարմիրների շունչը: Հետո՝ 1921 թվականին, նրանք արդեն տարածել էին իրենց մահաբեր արյունոտ թևերը բոլոր նրանց վրա, ովքեր հայտնվեցին իրենց տարածքում: Եվ իրենց երկար ձեռքերը հասնում էին նրանց, ովքեր պարզապես վտանգավոր էին թվում կամ պետք էր վրեժ լուծվեր նրանցից: Մի թե կոմունիստները թույլ կտան երկու հայի իշխել աշխարհի ճնշող մեծամասնություն կազմող կրոնի վրա: Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսն արդեն շրջել էր իր հո-

տի տարածքները 40 երկրում, դրան գումարած Հոմի պապի հարյուր միլիոնավոր կաթոլիկները...

Իհարկե, կարդինալը հասկանում էր, որ ոչ միայն կոմունիստներն են իրեն համարում անհաճապատասխան թեկնածուն: Առաջին հերթին հենց իրենք՝ իտալացիները, այսօր ոմանք նրա մոտից արդեն անցել են Ռոնկալլիի կողմը: Եվ որոշումը հասունացավ քանի որ ինքը՝ կարդինալ Աղաջանյանը, պապ չի դառնալու, ուրեմն արժե աջակցել Ռոնկալլին: Ծերուկ Ռոնկալլին դիվանագիտորեն էր գործում և հավատարիմ էր ավանդույթին: Մնացածից երևի Ռոնկալլին: Հատկապես որ, տարիքից ելնելով, նրան կարելի է «անցումային» պապ համարել: Բացի այդ, Աղաջանյանը բավականին դրական էր վերաբերվում Ռոնկալլի որոշ տեսակետներին կաթոլիկական ինքնագիտակցության մի շարք արմատացած դոգմաների վերաբերյալ, որոնք նա նույնիսկ չէր էլ մտածում թաքցնել պապ ընտրվելուց շատ առաջ:

Անջելո Ռոնկալլին չէր թաքցնում իր քննադատական վերաբերմունքն այն պնդումների հանդեպ, թե քրիստոնյաներից միայն մեկը ավանդույթները (այս դեպքում՝ կաթոլիկական) ներառում է ճշմարտության լիության մեջ, մինչդեռ մնացած բոլորը ոչ այլ ինչ են, քան «հերետիկոսություն» (Վենետիկի պատրիարքի քաղաքական դավանանքի մասին շատ բան կարելի է եզրակացնել հետևյալ օրինակից: Երբ նրան այցելել է ֆրանսիացի կարդինալ Ֆելտենը, հանդիպմանը փողային նվագախումբը նվագել է Մարսելեզը՝ Ֆրանսիական հեղափոխության և Ֆրանսիական Հանրապետության օրհներգը):

Կոնկլավի ժամանակ Ռոնկալլիի գլխավոր հակառակորդը կարդինալ Յուջին Տիսերանն էր: Տիսերանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աշխատել է Գլխավոր շտաբում, այնուհետև Ֆրանսիայի պաշտպանության նախարարությունում և մասնակցել Արևելյան լեզեռնի կազմավորմանը՝ աշխարհասփյուռ հայ կամավորների կող-

մից: Ի միջի այլոց, այդ լեզունի մասին բնեռային տարբեր կարծիքներ կան, այն ծառայում էր վերմախտին, սակայն կարծելով, թե Գերմանիան կազատի հայերին Ստալին-Բերիայի ճանկերից: Հայերը բոլորին հավատում են... Սրբորեն հավատում էին...

Աղաջանյանը Տիսերանին հարգում էր գիտնականի հանրագիտարանային գիտելիքների համար, երկար տարիներ եղել էր Արևելյան եկեղեցիների միաբանության քարտուղարը, որը ղեկավարում էր նաև Հայ կաթողիկե պատրիարքարանը, իսկ ինքը՝ Տիսերանը, ամբողջ ուժով փորձում էր Աղաջանյանին բերել դեպի պապական աթոռ:

Կարդինալի դեմքը պայծառացավ, նրա ուսերից, կարծես, մի ծանր բեռ ընկավ: Ուրբուն աստիճաններով նա վճռական իջավ իր սենյակ: Նա դեռ չգիտեր, որ նոր պապը իրեն կնշանակի կուրիայի ամենակարևոր պաշտոնում՝ հավատի համար Սուրբ միաբանության կարդինալ-պրեֆեկտ: Ինչպես նաև Արևելյան եկեղեցիների հարցերով կոնգրեգացիայի խորհրդական և Հռոմեական կաթոլիկ եկեղեցու արևելյան կանոնական իրավունքի կողմնակցի հանձնաժողովի անդամ:

Ժողովուրդների ավետարանական միաբանության ղեկավարի պաշտոնը համարվում է բարձրագույններից մեկը Հռոմեական կուրիայում, քանի որ միսիոներական տարածքներում պրեֆեկտին պատվիրակվել են մի շարք լիազորություններ, որոնք աշխարհի մնացած թեմերում բացառապես Պապի իրավասությունն է: Եվ 10-12 տարի այս բացառիկ միաբանության պրեֆեկտը, որը պատասխանատու էր կաթոլիկ հավատքի տարածման համար բոլոր երկրներում և մայրցամաքներում, հռոմեացի կարդինալ Գրիգոր Աղաջանյանն էր:

Գլուխ տասնվեցերորդ

Ի՛նչ հաճախ է պատահում՝ քայլում ես դաշտով մեկ ու ծաղիկներ հավաքում, սովելուկ կամ էլ շուշան, և ծաղկեփունջն աճում է, տեղ չի անում ափերում, և հանկարծ դու տեսնում ես այն հրաշքը, որ փնտրել ես ողջ գարուն քո հարազատ սարերում...

Կռանում ես՝ հսկա սունկ դանդաղ կտրում արմատից...

1958 թվականի կոնկլավի նախօրեին Կամերլենգո կարդինալ Ալոիզի Մազելլային կարդինալ Չելսո Կոնստանտինիի կողմից ուղարկված նամակը, որում նա խորհուրդ է տալիս Կարդինալների կոլեգիային, որ հայ կարդինալ Գրիգոր-Պետրոս XV Աղաջանյանը պետք է ընտրվի որպես Պիոս XII-ի իրավահաջորդ. «Սուրբ Հռոմեական եկեղեցու Կամերլենգո, Sede vacante (թափուր գահի) ամենահարգված և մեծարգո կարդինալ Ալոիզի Մասելլային:

Քանի որ առողջական լուրջ խնդիրների պատճառով չեմ կարող մասնակցել Կարդինալների ամենապատիվ նիշերի ընդհանուր ժողովներին, իմ պարտքն էմ համարում խոնարհաբար, բայց անկեղծորեն ասել իմ մտքերը ապագա Ինքնիշխան Հայրապետի ընտրության վերաբերյալ:

Որպես հովվապետ իր ամենահանդիսավոր գործերից մեկը՝ Պիոս XII-ը, միջազգային բնույթ է տվել Սբ. Կարդինալների կոլեգիային: Ներկայումս Սբ. Կոլլեգիան, որը կոչված է ընտրել Պիոս XII-ի իրավահաջորդը, բաղկացած է 55 կարդինալից՝ 37 օտարերկրացիներից և 18 իտալացիներից: Հետևանքը, բնականաբար, գերագույն գահին ընտրելն է ոչ իտալացի կարդինալի: (Փակագծերում նշում եմ, որ արտերկրում արդեն շատ եմ լսել մեղադրանքներ «de l'italianisation de l'Eglise» («եկեղեցու իտալականացման մեջ»):

Եվս մեկ շատ կարևոր փաստ: Եկեղեցին ըստ էության է միսիոներական, բայց գրեթե 2000 տարի անց նա հավաքել է ընդամենը մոտ կես միլիարդ կաթոլիկների: Արժանապատիվ ընկեր կարդինալները կաթոլիկ եկեղեցում կազմում են փոքրամասնություն: Երբ հինգ երեխա է ծնվում, նրանցից չորսը ծնվում են կաթոլիկ եկեղեցուց դուրս:

Կարծում եմ, որ վերը նշվածներից բոլորը կարող են մատնանշել մեր ժամանակի հրատապ կարիքները բավարարող թեկնածուի, այն է՝ կարդինալ Պետրոս XV Աղաջանյանը: Իր ձևավորման մեջ նա իսկական հոռմեացի է, անկասկած, ոչ պակաս հոռմեացի, քան Սուրբ կոլեգիայի ցանկացած այլ անդամ: Նա հիանալի միսիոներ է, այնպիսի տեսական և գործնական պատրաստվածությամբ, ինչպիսին հազիվ թե կարելի է գտնել որևէ այլ կարդինալի մոտ: Նա պոլիգլոտ է, քաղաքավարի, բոլորի կողմից սիրված և հարգված, գտնվում է էներգետիկ տարիքում: Ավելին, այն ներկայացնում է Լատինական եկեղեցու և Արևելյան եկեղեցու միասնության սուրբ կապերը:

Չպետք է մոռանալ, որ սա նախախնամական փաստ է, որի մասին մեծահոգաբար հոգացել է Պիոս XII-ը: Ուստի, վերջում, ահա իմ ձայնը. Գերագույն Հայրապետի ընտրության համար առաջարկում եմ կարդինալ Պետրոս XV Աղաջանյանին՝ Չերդ Սրբությունների «salvo meliori consilio» (առանց լավագույն որոշումը վիճարկելու):

Կարդինալ Չելսո Կոնստանտինի Հոմ, 12 հոկտեմբերի 1958 թ.

Ի դեպ, Կոնկլավին որպես պապաբիլ մասնակցել է նաև հասցեատերերը՝ Ալոիզո Մազելյան:

Հաջորդ առավոտյան կարդինալ Աղաջանյանը հերթական քվեարկությունից առաջ ակնարկեց, որ ինքը պատրաստ է քվեարկել Ռոնկալլիի օգտին: Ֆրանսիացիները հազիվ նկատելի գլխի շարժումով հասկացրին, որ դա ողջամիտ և ժամա-

նակին որոշում կլինի: Բայց այդ օրը աշտարակի վրայի ծուխը կրկին սևացավ, ըստ երևույթին, ոչ բոլորն էին այդքան բարեհաճ արձագանքել պապական գահի նկատմամբ Աղաջանյանի սառչելուն:

4-րդ քվեաթերթիկ

Ռոնկալլի 20

Օտտավիանի 15

Ռուֆինի 5

Աղաջանյան 6

Մազելյա 2

Եվ եթե Ռոնկալլին Աղաջանյանին ասում էր՝ «Դու ինձ պապ սարքեցիր» կամ մի անգամ ասել է հայկական միջավայրում. «Գիտե՞ք ես և ձեր կարդինալը հոկտեմբերի ընտրությունների ժամանակ գրեթե հավասար էինք, մեր անունները հաջորդում էին մեկը մյուսի հետևից, մեկը՝ վերև, մյուսը՝ ներքև՝ եռացող ջրի մեջ զցված սխեռի նման», ապա, իհարկե, նա նկատի ուներ առաջին քվեաթերթիկները: Ի դեպ, իր ընտրվելուց անմիջապես հետո Ջուզեպպե Ռոնկալլին Աղաջանյանին դարձրեց «Կարմիր Պապ», այսպես է կոչվում «De propaganda fide» միաբանության պրեֆեկտը, որը Հռոմեական կուրիայի ամենաազդեցիկ դիսկաստերիաններից մեկն է, որը պատասխանատու է Եկեղեցու միսիոներական գործունեության համար:

Ռոնկալլին՝ ինքը, քվեարկել է Ռուֆինիի օգտին առաջին երկու նստաշրջաններում (ենթադրվում է, որ ամեն ինչ խիստ գաղտնի է, իսկ քվեաթերթիկները հետո այրվում են, բայց իրականում հայտնի է դառնում նույնիսկ, թե ով ում օգտին է քվեարկել): Բայց երբ տեսավ, որ գործն իր կողմն է շրջվում, քվեարկեց Վալերիի օգտին (միակ ձայնը, որ ստացել էր), այսինքն՝ իր ձայնը մի կողմ գցեց: Վերջին երկու քվեաթերթիկում նա նույնպես առանց շանսի քվեարկեց Բոլոնիայի առաջադեմ եպիսկոպոս Լերկարոյի օգտին:

Գլուխ տասնյոթերորդ

Կարիճի պես խայթելով նոր գոհեր է նա փնտրում: Չար աչքերը մեզ վրա. կյանք տալ կամ արյուն թափել լոկ իրենք են որոշում...

Փաստորեն, թե՛ ճակատագրի թելադրանքով, թե՛ ինտուիտիվ, Գրեգուար Պիեռը զգում էր, որ իրեն վիճակված չէ Հռոմի պապ դառնալ: Եվ նա կարծում էր, որ եթե ձայն տա Ռոնկալիին՝ դրանով իսկ կաջակցի նրան: Իրականում ոչ ոք չէր ննջում՝ ոչ մատուռում, ոչ էլ նրա պատերից հեռու:

Նախօրեին հռոմեական մի հանդարտ փողոցում, որտեղ իտալական SIFAR հետախուզական ծառայության բաժանմունքներից մեկի գողտրիկ հին շենքն էր, գրասենյակներից մեկում աշխուժություն էր նկատվում: Սեղանի մոտ նստած էր մի համեստ հեռագրավար (այդ հեռագրավարը կոչումով հավասար էր Արևելյան Եվրոպայի երկրներից մեկում գտնվող Իտալիայի ռազմական կցորդին): Իսկ նրա ենթակա հետախույզը՝ կապիտանը, դեսպանատան մուտքի մոտ աշխատում էր որպես հասարակ դոնապան: Ահա թե ինչպես է աշխատել իտալական հետախուզությունը: Նրա աշխատակիցները չէին պահանջում բարձր պաշտոններ՝ ծածկված դիվանագիտական անձեռնմխելիությամբ: Նրանք աշխատում էին որպես հասարակ գործավարներ, դուրս էին հակահետախուզության վերահսկողությունից և բարեհաջող լուծում էին իրենց առջև դրված խնդիրները:

Այս կազմակերպությունը կոչվում էր SIFAR և արդեն այն ժամանակ ուներ 150.000 դոպե պատգամավորների, սենատորների, արհմիությունների ակտիվիստների, կուսակցական առաջնորդների և բոլոր խավերի պաշտոնյաների վերաբերյալ: Մոտ 4500 հոգևորականներ և եպիսկոպոսական

տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ են եղել «գործով հարուցվածների» մեջ:

Տեղեկատվություն հավաքողները համն առել էին, հավաքագրված տեղեկատվության բնույթը գնալով ավելի ընդարձակ էր դառնում, պետական անվտանգության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող փաստերին ավելանում էր ինտիմ բնույթի տեղեկատվություն: Հավանական է բոլոր հատուկ ծառայությունները այդպիսի գայթակղիչ մանրամասնություններից չեն հրաժարվում: Կենտրոնական հետախուզական վարչության հատուկ պատվերներից, որոնց համար գնվել էին թանկարժեք սարքավորումներ, իրականացրել էր SIFAR-ը, եղել է Հանրապետության նախագահի և Հռոմի պապի անձնական խոսակցությունները լսելու և ձայնագրելու տեխնիկայի տեղադրումը:

Եվ այս գրասենյակում այդ օրերից մեկում զանգահարեց հեռախոսը: Հարցրին պարոն Ջուզեպպե Տրավինին:

– Բարև Ձեզ, Դուք կարող եք գալ «Santa Վիտորիո» սրճարան, ես սպասում եմ, աջից երրորդ սեղան:

Cafe Vittorio-ում գաղտնալսող սարք նրանք չեն ունեցել: Տրավինին կապվեց հարևան բաժանմունքի հետ և այնտեղից մի քանի րոպե հետո հայտնեցին, որ սրճարանում կան ռուսական «жучок»-ներ, բայց «*մերոնք ինտենսիվորեն վերահսկում են բոլոր մտնող և ելնող մարդկանց*»: Կես ժամ անց շքեղ լիմուզինը իտալական հակահետախուզության վարչություններից մեկի պետին, որը համագործակցում էր արևելյան եվրոպացիների հետ, տեղափոխեց սրճարան՝ զարդարված ինչպես արևելյան պալատ:

Երրորդ սեղանի մոտ նստած էր մի սևահեր տղամարդ, որն իր վառ կերպարանքով հիշեցնում էր իտալացու, բայց նրա հայացքի ու տխուր աչքերից, խոսելու ձևից Ջուզեպպեն անմիջապես հասկացավ, որ նա ռուս է, ավելի ճիշտ՝ հայ: Եվ նույնիսկ հիշեց, որ դեմքը ծանոթ է՝ Ռուսաստանից եկած բո-

լոր պարունների վիզաներն իրենց բաժանմունքի միջոցով էին անցնում:

—Մենք ինչ-որ չափով անհանգստացած ենք, որ դուք այդ-քան ժամանակ Պապ եք ընտրում: Մենք դա անում ենք արագ նշանակում են և վերջ, գահն այդքան ժամանակ չի կարելի անտեր թողել, — կատակեց նա:

Տրավինին ժպտաց: Ռուսները շատ են վախենում իրենց գահի համար, ուստի, հնարավորության դեպքում, ցանկացած ընտրություն փոխարինում են նշանակումով: Բայց կարծես Մանուելյանց ներկայացած տղամարդն անհանգստացած էր այլ բանի համար: Թերևս նույն բանի, որն անհանգստացնում էր հարգարժան կաթոլիկ Տրավինին: Այնուամենայնիվ, դեռ ոչ ոք չէր պապ իտալացուց լավը չի հորինել:

—Բայց դուք գիտե՞ք այդ հայ կարդինալ Գրիգոր Աղաջանյանին, նա երկրորդ օրն է ամենաշատ ձայներն է հավաքում: Ծնվել է ԽՍՀՄ-ում, հոտը դեռ հիշում է նրան... Թիֆլիսում կամ ոչ հեռու մի տեղ ապրում են նրա եղբայրը, քույրը, մայրը... նա մեր մարդն է, — ծիծաղեց Մանուելյանցը՝ ամենին էլ չամաչելով, որ պապի ընտրության գաղտնիքը իրականում յոթ կողպեքի տակ էր:

—Մենք անչափ ուրախ ենք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նստում է մեզ մոտ, Էջմիածնում, գիտեք, նա ունի անչափ մեծ հեղինակություն ամբողջ աշխարհում, և հիմա ես շատ գոհ կլինեմ, եթե մեր մարդն ունենանք և Վատիկանում, —կենտուրախ ժպտալով ավելացրեց ռուսահայը:

Տրավինին երբեք իր խելամտությամբ առանձնապես աչքի չէր ընկնում, բայց այս անգամ արագ հասկացավ և կողմնորոշվեց: Նա ռուս բոլշևիկներին տանել չէր կարողանում, իսկ կոմունիստներին, որոնք բազմացել էին պատերազմից հետո ոչ միայն Իտալիայում, այլև Ֆրանսիայում և ամենուր (այդ վարակը հասավ նույնիսկ Ամերիկա), նա բացարձակապես չէր տանում: Էլ ո՞նց կլինեք, հաղթել են պատերազմում: Ա-

ռանց դաշնակիցների նրանք երկար չէին գոյատևի, կեսը ճամբարներում էին, ով որտեղ, երկիրն անձայրածիր է, մյուս կեսը կովել է, իմ հարգելի գործընկերը չգիտի՝ այս մասին:

Իսկ հիմա այս կոմունիստները խորհրդարանն են ուզում զավթել, իսկական ժանտախտ է: Եվ ինչպե՞ս են մարդիկ հետևում նրանց, — մտածեց Տրավինին և անմիջապես հոգոց հանեց, հիշեց, որ ինքն էլ է այդքան տարի հավատացել դուշեին, վերջում պարզվեց, որ նա պարզապես կարճահասակ մարդ է...

—Պարոն Տրավինի, — մտքերից դուրս բերեց նրան Մանուելյանցը, — ես միայն մի քանի մտավախություն ունեմ, հանկարծ ընտրություններից հետո մեզ համար ստիճակաբարձություններ չհայտնվեն:

—Մի անհանգստացեք, պարոն Մանուելյանց, մենք մեր վստահելիներին չենք հանձնում, — վերամբարձ արտասանեց Տրավինին, և որոշ ժամանակ անց միայն «Կրասնայա Մոսկվա» օդեկոլոնի թեթև բույրն էր հիշեցնում ամենուր և լկտի գրուցակցին:

Խորհրդային հատուկ ծառայողի «Ֆիատն» անձայն դուրս եկավ ուղեգծի վրա:

Ոչ, չի կարելի թույլ տալ այնտեղ հայ լինի, ոչ մի դեպքում: Նամանավանդ, ամերիկացիները հենց Աղաջանյանին էին ցանկանում տեսնել որպես Հոմախի պապ: Իրենց կարծիքով Արևելքն ու Արևմուտքը կապող անհերքելի բարձր կրթված անձնավորություն էր և ամենակարևորը՝ մոլի հակակոմունիստ: Մանուելյանցը շատ բան թաքցրեց Տրավինիից, օրինակ, ինչպես է նա մի քանի անգամ փորձել կարդինալին համոզել համագործակցել իր կազմակերպության հետ՝ համարելով, որ հայը պետք է հասկանա հային:

—Պինդ ընկույզ դուրս եկավ, — բողոքեց նա շատ ավելի ուշ ընկերներին, որոնք եկել էին Հոմա՝ զբոսնելու և այցելեցին նրան:

Մանուելյանցը օգնեց իր մտերիմ ընկերներին թույլտվություն ստանալ՝ այցելելու Սուրբ Ղազարոսի կղզին: Այցը կղզի, իհարկե, ներառված չէր խմբի պաշտոնական երթուղու մեջ, բայց նույնիսկ խմբի ղեկավարը՝ «Վոլգա» ավտոմոբիլային գործարանի ինչ-որ աշխատակից, անգամ Հայ եկեղեցու հարցերով խորհրդի նախագահին բավականին կտրուկ ու վերջնականորեն հրաժարվեց թույլտվություն տալ: Երեկոյան ընկերներն անցկացրին ոչ պաշտոնական միջավայրում՝ Հոռմի ռեստորաններից մեկում: Ի թիվս այլ հարցերի, լինելով հայ, նրանք քննարկեցին նաև կարդինալ Աղաջանյանի արտասովոր անհատականությունը: Արդեն ծանր հիվանդ լինելով, վաղուց լքելով Վատիկանի իր բոլոր բարձր պաշտոնները՝ կարդինալը բնակվում էր հայրենի հայկական վարժարանի Լևոնյանի շենքում:

«Ռեզիդենտը» պատմեց, որ մի քանի անգամ հանդիպել է կարդինալի հետ, փորձել նրան օգտագործել իր ծառայության շահերից ելնելով, սակայն ապարդյուն:

—Պիևդ ընկույզ դուրս եկավ...

Նա վստահ էր, որ Աղաջանյանի խոսքերը՝ «Աշխարհում հարյուր միլիոնավոր կաթոլիկներ կան, և միայն մի քանի հարյուր հազար հայ կաթոլիկներ, ես չեմ կարող ինձ թույլ տալ Հոռմի պապ լինել», — անկեղծ էին, թեև զարմանալի:

Առավոտյան կարդինալ Աղաջանյանը հաջորդ քվեարկությունից առաջ ակնարկեց, որ ինքը պատրաստ է քվեարկել Ռոնկալիի օգտին:

Գլուխ տասնութերորդ

Փառք Տիրոջն ու Մարիամին, պապը Հռոմում ընտրվեց, հրճվում է քաղաքը՝ Հոռմի նոր պապ ընտրվեց:

Սովորական աշխարհիկ կրքեր էին մոլեգնում Կոնկլավում... Չափավորները քվեարկեցին Աղաջանյանի օգտին, պահպանողականները մնացին Ռուֆինիի կողմը: Արդեն 3-րդ քվեարկությունից պարզ դարձավ, որ նրանցից ոչ ոք չի հավաքելու ձայների երկու երրորդը: Այնուհետև պահպանողականներն անցան Օտտավիանիի կողմը, իսկ չափավորները՝ Ռոնկալիին, ֆրանսիացիների 5 վստահելի ձայնով (առանց ֆրանսիացիների նա մինչև վերջ հավակնորդ չէր լինի): Ամեն ինչ որոշվեց 5-րդ քվեարկությամբ:

5-րդ (եզրափակիչ)

Ռոնկալի 38

Օտտավիանի 9

Ռուֆինի 1

Աղաջանյան 1

Մազելլա 1

Եվ թեթև սպիտակ ծուխը տարածվեց աշտարակի գլխի վրա: Ամբոխը ցնցվեց, բղավոցներ հնչեցին, որոնք սպառնում էին ցնծության վերածվել, բայց սպիտակ ծուխը հանկարծ անհետացավ, և նրա տեղում նորից սկսեց հոսել սևը: Շփոթված մարդիկ տեղ-տեղ սկսեցին հեկեկալ: Անհայտությունը, անորոշությունն ու երկար սպասելու օրերն արդեն նյարդացրել էին ամբոխին:

Բոլորը, որոնք տեսան սպիտակ ծուխը, որը փոխարինվեց սևով, վստահ էին, որ պապին ընտրել էին, բայց մտա-

փոխվեցին: «Ի՞նչ պատահեց: Ինչո՞ւ մտափոխվեցին: Ի՞նչ տե-
ղի ունեցավ այստեղ: Եվ ինչո՞ւ ենք հավաքվել այստեղ, եթե
մեզ հետ կատակում են»:

Սակայն ոչ ոք չէր էլ պատրաստվում ցրվել: Վերջապես,
մի որոշ ժամանակ հետո, որը թվաց հավերժություն, աշտա-
րակի վերևում հայտնվեց սպիտակ ծուխ: Հրապարակը թեթ-
ևացած շունչ քաշեց:

– Պապն ընտրվա՛ծ է, – մարդիկ սկսեցին գրկել և համբու-
րել միմյանց, թեև ամբոխի մեջ դեռ ոչ ոք չգիտեր նրա անունը,
բայց Սուրբ Պետրոսի հրապարակում շարունակվում էին
ցնծությունն ու բացականշությունները. «Պապն ընտրվե՛ց»:

Վերջապես հայտնվեց կամերլենգոն, նա առաջ գնաց դե-
պի պատշգամբ՝ արտասանելու հնագույն բանաձևը, որը
տասնյակ դարեր շարունակ ազդարարում է նոր պապի մա-
սին. «*Nuntio vobis Gaudium Magnum. Հաբեմուս Պապամ (Ձեզ
մեծ ուրախություն են հայտնում: Մենք Պապ ունենք): Դա
կարդինալ Անջելո Ռոնկալլին է, և նա ցանկանում է անվանել
իրեն Իռաննես XXIII»:*

Ասում են, Ռոնկալլին երկար ժամանակ անուն է ընտրել
իր համար: Բայց բուպեներն անցնում էին ու թվում էր հավեր-
ժություն, երբ նա դուրս եկավ ժողովրդի առաջ: Պարզվեց, որ
ուշացմանը նպաստել է առնվազն մեկ գործնական պատճառ.
Նախապես պատրաստված էին տարբեր չափերի սպիտակ
զգեստեր, բայց միևնույն է, բավականին գեր պապի համար
պատրաստվածը Ռոնկալլիի համար շատ փոքր դուրս եկավ:
Պապական դերձակ սինյոր Գամմարելլին տեղում, հենց կար-
միր «լացի սենյակում» հապճեպ անում էր անհնարինը՝ նո-
րընտիր թանձրամարմին մարդու համար հարմար հագուստ
էր պատրաստում:

Իսկ Ռոնկալլին արդեն անհամբեր հարցնում էր. «Ինչո՞ւ
ենք մենք սպասում:

*Մարդիկ սպասում են: Աշխարհը սպասում է», – կրկնում
էր նա ներկաներին: «Andiamo! Գնացի՛նք: Ես ընտրվա՛ծ եմ:
Ես հիմա Պա՛պ եմ: Ես Իռաննես XXIII–ն եմ»:* Կարդինալնե-
րից ոչ մեկը դեռ չի վարանել պատասխանել անվանման հար-
ցով, ինչը նշանակում է, որ բոլորը շուտվանից պատրաստ-
վում էին դրան: Հետո երկար ժամանակ կատակով ինքն
անվանում էր՝ «Սկսնակ պապ»:

Հռոմեացիները, որոնք իրենց պապերին անգիր գիտեին
անուններով և թվով, բուռն կերպով տարակուսում էին, թե ին-
չու է այդ անունը ընտրել իր համար: Իռաննես XXIII... Բայց
չէ՞ որ նա հակապապ է եղել: Ինչո՞ւ ընտրեց հենց Իռաննես
13–րդին: Հակապապի անձնավորությունն այնքան զգվելի էր,
որ նրանից հետո՝ գրեթե 550 տարի, ոչ մի պապ չի վերցրել
Իռաննես անունը (մինչ այդ ամենահայտնի հռոմեական պոն-
տիֆիկոսների շրջանում):

Որոշ ժամանակ անց Ռոնկալլին բացատրեց, որ անունը
Իռաննես XXIII նա ընտրել էր, որպեսզի ցույց տար, որ Բալ-
թասար Կոստան՝ Իռաննես 23–րդ պապը, օրինական Պապ
չէր... Երբեմն նա բացատրում էր, որ այս անունն իր համար
թանկ է. այդպես էր նրա հոր անունը: Եվ ընդհանրապես, ա-
վելի վաղ պապերը սիրում էին Իռաննես անունը, սակայն
նախքան հակապապը:

Կենտրոնական պատշգամբից նոր պապը միայն մի քա-
նի երկար սպասված խոսք ասաց, բայց բավականին վստահ և
ուժեղ: Դրանից հետո հրապարակում և աշխարհում հնչեց
նրա առաջին օրհնությունը՝ «*Urbi et Orbi*»՝ «*Քաղաքին և աշ-
խարհին*»:

Անջելո Ռոնկալլիի ընտրությունը թերթերն այսպես են
մեկնաբանել. «*Կարդինալների ընտրությունը ընկավ մի շատ
ծեղ մարդու վրա, ով հեռու էր կուրիայի ներքում քաղաքական
պայքարից և Պիոս XII–ի ժամանակ գտնվում էր ծայրամա-
սում: Կարդինալները, ըստ երևույթին, հնարավոր չէին հա-*

մարում արագորեն արմատական փոփոխություններ իրականացնել եկեղեցու քաղաքականության մեջ, և, հետևաբար, նրանց ընտրությունը ընկավ Ռոնկալլիի վրա: Վերջինիս տարիքը և անցյալը հիմք են տվել դիտելու նրան որպես անցումային շրջանի Պապ, որը կարող է հալոցք առաջացնել միևնույն ժամանակ գերծ մնալով մեր դարաշրջանի կաթոլիկության առաջ քաշած մեծ խնդիրներից»:

Անմիջապես նկատենք, որ թե՛ կարդինալները, թե՛ թերթերը, որոնցում կան բոլոր շերտերի վերլուծաբաններ, նոր Պապի վերաբերյալ իրենց կանխատեսումներում փոքր-ինչ սխալվեցին, ուստի պարզվեց, որ Ռոնկալլին իրենց իմացածի լրիվ հակառակն էր: Իրաննես XXIII-ի կուրսի հակառակորդները նրան անվանում էին «կարմիր Պապ», կողմնակիցները «աշխարհի Պապ»: Բազմաթիվ հիշողությունների համաձայն Պապ Ռոնկալլին ուշադիր, նուրբ, բարեսիրտ, զրուցելու համար շատ հաճելի մարդ էր, հումորի զգացումով: Նրա մակա-նունը «բարի պապ» էր:

Գյուղական հասարակ դպրոցն ավարտելուց հետո պապա Պապը գիտեր ուսման ողջ բեռը, երբ գյուղացի երիտասարդը ստիպված էր մեծ նյութական դժվարություններ ապրել, և, ըստ էության, նրա համար բաց էր միայն մեկ ճանապարհ՝ եկեղեցականը: Ստանալով կրթաթոշակ նա կարողացավ մեկնել Հռոմ՝ շարունակելու իր հոգևոր կրթությունը: Եվ հատկապես կարևորն այն էր, որ Ռոնկալլին գերծ մնաց ֆաշիզմի հետ համագործակցությունից, կուրիայի դաշնակալին ոգուց:

Ռոնկալլին, իհարկե, աննկարագրելի էր. «Չավակներ ջան», - դիմում էր նա իր ունկնդիրներին: Այսպիսով, «կարճաժամկետ պապը» շատ խոր հետք թողեց եկեղեցու պատմության մեջ, հնաժամ քահանան բացեց ճանապարհը agiornamento-ի համար. Ամենակարևորն այն էր, որ նա ճիշտ մարդկանց

ընտրեց իր հետ աշխատելու համար, ըստ երևույթին, լավ էր ճանաչում Հռոմի կադրերին:

Երբ Հռոմի պապ Giovanni XXIII-ին հարցրել են, թե քանի մարդ է աշխատում Վատիկանում, նա պատասխանել է՝ մոտ կեսը: Եթե նրան հարցնեին, թե ինչպես են աշխատում, պատասխանն ավելի վատ կլիներ: Իսկ նա անմիջապես գործի անցավ:

Առաջին բանը, որ արեց նոր պապը, մի ծրագիր էր, որը բոլորի համար կատարյալ անակնկալ էր: Գուցե դա է պատճառը, որ պապին հաջողվեց հարցը հասցնել խորհրդի գումարման, որ մինչև վերջին պահը կուրիայի կարդինալներից ոչ մեկը նրան լուրջ չընդունեց: Բոլորի համար նա էքսցենտրիկ ծերունի էր, մի տեսակ գյուղական պաղրե, որը չէր սիրում աղմուկն ու շքեղությունը:

Ընդհանրապես, Ջովաննի պապը, եթե առաջ ընկնենք, շատ նոր բաներ մտցրեց: Նա վերացրեց ավանդական ծնկաչոքը և «ձկնորսի մատանին» համբուրելը, հրամայվել է Վատիկանի պաշտոնական «Osservatore Romano» բառապաշարից հեռացնել զարդարուն արտահայտությունները, ինչպիսիք են «խորապես հարգված շուրթերը» և «ամենապատվելի քայլերը»: Դրա փոխարեն նա առաջարկեց պարզապես գրել. «Պապն ասաց», «Պապն արեց», «Պապը գնաց»: Պապության մեջ ընտրվելուց հետո Ռոնկալլին հանձնարարել է Ավագ ուրբաթ աղոթքի տեքստից հանել «*perfidios iudeos*» (դավաճան հրեաները) հիշատակումը, որը վիրավորում է հուդայականության հետևորդներին: Անգնահատելի առաջխաղացում:

Հարկ է հենց հիմա հիշել, որ Իրաննես Պողոսը (Վոյտիլա) ավելի հեղափոխական էր և ավելի հեռուն գնաց: Նա ոչնչացրեց գահը, թագադրումը, հանդիսավոր «մենք»-ը, «հովվապետական» բառը, պապականության ողջ միապետական ոճը: Վոյտիլան սեղմեց Հռոմի կոմունիստ քաղաքապետի ձեռքը և խոստացավ համագործակցել նրա հետ: Իսկ Հռոմի պապ

Ռոնկալլին գրեթե առաջինը շրջեց Վատիկանում առանց շքախմբի, մտավ արհեստանոցներ բաժակ վերցրեց արհեստավորների հետ: Երբ նրան ասում էին, որ իր վատառողջությամբ չարժե այդքան հեշտությամբ շրջել քաղաքում, նա պատասխանում էր. «Այնքան շատ մարդիկ մահանում են փողոցներում. Ոչ մի վատ բան չի լինի, եթե պապն էլ մահանա փողոցում»: Հատկապես բոլորի համար ապշեցուցիչ էր, որ, ի տարբերություն իր նախորդների, Իոաննես XXIII-ը իր բազմաթիվ հարազատներից ոչ մեկին չի հարստացրել: Ըստ երևույթին, նրանց հավատքը խանգարում է թաթախվել կոռուպցիայի մեջ: Բայց այդքան կարդինալ և պապ որտեղից ճարել...

Նա ստիպված էր ընդունել կարևոր մարդկանց: Բայց իր համար այս ցավալի արարողության մեջ նա երբեմն ցուցաբերում էր ինքնաբուխություն և հումոր: Ժակլին Քենեդիի այցից առաջ պապին զգուշացրել էին, որ պետք է նրան անվանել «Միսիս Քենեդի» կամ «Մադամ»: Կես օր նա այս խոսքերը մրմնջում էր ինքն իրեն, որպեսզի չմոռանա, բայց երբ տեսավ, ուրախ բացականչեց ժակլի ն:

Երևի հաճույք էր ստանում երեխայի պես հիմարացնել շրջապատին, իր շուրջը գտնվողներին և ինքն էլ զվարճանալու պահեր էր գտնում: Ի վերջո, նա շատ կարևոր գործ արեց: Տիեզերական ժողով: Այո, այո... 1959թ. հունվարի 25-ին Կոնսիստորիայում իր ելույթում Giovanni-Իոաննես XXIII-ը հայտարարեց իր ծրագիրը և ընդհանուր զարմանք առաջացրեց. 1) Հռոմի թեմի սինոդի գումարում, 2) Տիեզերական ժողովի անցկացում, 3) եկեղեցական իրավունքի բարեփոխում: Տիեզերական ժողովի հայտարարությունը սենսացիայի պես հնչեց:

«Agiornamento» նշանակում էր նորացման, արդիակալանացման միջոցով եկեղեցու միացումը ժամանակակից աշխարհին: Ժողովում քննարկվել են պապական ծրագրի երկու կարևորագույն կետերը՝ եկեղեցական կյանքի վերականգնումը,

մը, որը Հռոմի պապ Իոաննես XXIII-ն անվանել է «aggiornamento» և միավորվել մյուսների հետ: Նույնիսկ Պիոս IX-ը, ով քաջատեղյակ էր Տիեզերական ժողովի գումարման իրավիճակին, ասում էր. «Յուրաքանչյուր ժողով բաղկացած է երեք շրջանից. առաջինը, երբ սատանան փորձում է խառնել և շփոթել խաղաթղթերը, երկրորդը, երբ մարդ ավելի է ուժեղացնում շփոթությունը, և երրորդը, երբ սուրբ հոգին պարզություն է հաղորդում ամեն ինչին»:

Ճիշտ է, Վատիկանի դիրքորոշումը հիմնարար ժխտում է անասոված կոմունիզմի գաղափարախոսությունը, պահպանվել է և Իոաննես XXIII-ի հովվապետության օրոք: Միսիոներական հանձնաժողովը, որը ղեկավարում էր Հայ կաթողիկե եկեղեցու նախկին պատրիարք, կարդինալ Գրիգոր Պետրոս Աղաջանյանը, ներկայացրեց յոթ կարճ նախագիծ միսիոներական աշխատանքի նորացման և կատարելագործման վերաբերյալ: Չորս մոդերատորներից մեկին՝ կարդինալ Աղաջանյանին, վստահվել էր նաև նիստերի ղեկավարումը: Մոդերատորները կոչված են ղեկավարելու և կազմակերպելու քննարկումը, նրանք ուսումնասիրում են համագումարի կողմից արված առաջարկները և որոշում են դրանց փոխանցման հնարավորությունը համապատասխան հանձնաժողովներին:

Այսպիսով, մոդերատորների ինստիտուտի դերը չափազանց մեծ է, և, ըստ երևույթին, այն ստեղծվել է, որպեսզի եկեղեցու բարձրագույն ղեկավարությունը հնարավորություն ունենա ակտիվորեն ազդելու հանդիպումների ընթացքի վրա: «Le Figaro» թերթը, մոդերատորներին անվանելով «խթանիչներ», նրանց առաջադրանքները սահմանում է այսպես. «Այն բանի հետ մեկտեղ, որ մոդերատորները կոչված են ազդելու խորհրդի տեմպերի վրա, պետք է հաշվի առնել նաև հետևյալ, թերևս ամենազրիսավոր խնդիրը, քանի որ քսաներորդ դարի

վերջում բնական գիտությունների առաջընթացի հետ կապված մի փոքր այլ բնույթի հարցեր ի հայտ եկան»:

Խառնվեցին մեկ ընդհանուր կույտի մեջ Աստուծուն ու կայսրինը: Կաթոլիկ եկեղեցին այժմ պետք է պատասխան տար նոր հարցերի, որոնք հուզում էին հազարավոր հավատացյալների: Ինչպե՞ս վերաբերվել գենետիկական ինժեներիային և, մասնավորապես, կլոնավորմանը: Արդյո՞ք էֆթանազիան թույլատրելի է: Ինչո՞ւ չի կարելի ընտանիքի պլանավորման համար օգտագործել ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցները, այլ միայն բիոտիթմի մեթոդը: Ի՞նչն է համարվում մարմնի մահ և արդյո՞ք բարոյական է մեռած մարդկանց օրգանների փոխպատվաստումը կենդանի մարդկանց:

Իհարկե, այս բոլոր հարցերին տրվել են պատասխաններ, և բոլորը բացասական են եղել: Բայց թվում է՝ այս պատասխանները շատ կաթոլիկներին համար ընդունելի չեն, քանի որ մարդկությունն արդեն տարբեր է հիսուն տարի առաջվանից: Ավելացնեմ, այն ժամանակ 3-րդ համաշխարհային պատերազմը անհնարին էր թվում:

Պապը Խորհրդի անունը պաշտոնապես հաստատեց II Վատիկանական, բացման ամսաթիվը 1962 թվականի հոկտեմբերն էր, և անհամբերությամբ շտապեց՝ փորձելով արագացնել Խորհրդի նախապատրաստումը: Դրա պատճառներից մեկն, անկասկած, այն էր, որ նույնիսկ այն ժամանակ նա արդեն ծանր հիվանդ էր և գիտեր իր քաղցկեղի մասին: Հիվանդությունն արագորեն զարգանում էր, նա ժողովի հանդիպումներին ուշադիր հետևում էր հեռուստատեսությամբ:

Դեկտեմբերի 4-ին նա հանկարծ մի մեծ ելույթ ունեցավ, որտեղ դրական գնահատեց խորհրդի նիստերի ընթացքը դրանով իսկ ոգևորելով առաջադեմներին: Մինևույն ժամանակ, կարդինալ դարձրեց Միլանի արքեպիսկոպոս Մոնտինին, որը նախորդ պապության տարիներին երբեք կարմիր գլխարկ չի ստացել: Եվ Ռոնկալլին այնքան գնահատեց նոր

կարդինալի արժանիքները, որ նրա մեջ տեսավ արժանի ժառանգորդ և իրավահաջորդ: Մինևույն ժամանակ, Իռաննես XXIII-ը նախազգուշացրեց կարդինալ Մոնտինինին, որ վերկանգնի քննարկումներից և պահպանի իր անաչառությունը ի շահ եկեղեցու միասնության:

Գլուխ տասնիններորդ

*Հավա՛տ, հավա՛տ, քա՛նի բանակ ու կոհիվներ ես ստեղծել:
Դավանանքի մի գրկից մյուսի խորթ գիրկն են ընկել՝ բախտը
փորձում են փոխել... Փրկություն են խոստանում: Խոստանում
են ու խաբում, էլ ինչ՞ զոհեր են ուզում այս անծայրածիր
զոհարանում...*

Իհարկե, կարդինալի ճանապարհը լցված է ամենօրյա աշխատանքով՝ ի փառս կաթոլիկ հավատի: Ի փառս Հռոմի և Հայ կաթողիկե Եկեղեցու: Իսկ Աղաջանյանի գործողությունների ծավալը, անթաքույց, մեծ է: Կաթոլիկ հավատ քարոզելով՝ նա շրջել է բոլոր երկրներով և մայրցամաքներով, հիմնել նոր ծխեր և ապաստարաններ, կառուցել եկեղեցիներ և աջակցել ազգային հրատարակչական գործին՝ չնոռանալով աշխարհով մեկ սփռված իր հայրենակիցներին: Աղաջանյանի շնորհիվ՝ Լեոնյան ճեմարանը դարձավ աշխարհասփյուռ հայերի սովորելու և հանդիպելու վայր:

Բեյրութում, որն այն ժամանակ համարվում էր «Հայոց Սփյուռքի մայրաքաղաքը», պատրիարք Իգնատիոս Պատանյանը Աղաջանյանի մահվանից մի քանի տարի անց (նրա ութսունամյակին) այցելեց հայ որբերի դպրոցը և աշակերտներին հիշեցրեց նախկին պատրիարքի փառավոր գործերը, այս հիմնած դպրոց-մանկատունը, որը կրում է նրա անունը: Տարբեր տարիքի մոտ 90 աշակերտ՝ ծնողազուրկ երեխաներ այստեղ նախնական կրթություն են ստացել մայրենի լեզվով, դպրոցում գործել է երաժշտական խմբակ, երգչախումբ, արհեստագործական խմբակներ, ստեղծվել է հոգաբարձուների խորհուրդ, որը խստորեն վերահսկում է դպրոցի գործունեությունը: 1940 թվականին Գրիգոր Աղաջանյանը Այնճաբում բացել է դպրոց, որտեղ սկսեց սովորել մոտ հարյուր աշակերտ:

Այսօր էլ աշխարհի չորս կողմերում ապրող կարդինալ Աղաջանյանի ուսանողներն ու աշակերտները, եպիսկոպոս կամ քահանա, իրենց ուսուցչի պատգամներն են կատարում: Նրա հայրենի շրջանները կարողացավ այցելել միայն «Բագմավեպի»-ի գլխավոր խմբագիր, Մխիթարյան հայր, ծնունդով Ալաստան գյուղից՝ Եղիա Փեչիկյանը: Ջավախք մեկնելու հարցում նրան օժանդակել է Վազգեն վեհափառը: Տիարակությունը մինչ օրս կրում են իրենց մեջ և պարծանքով ամեն անգամ փաստում, որ իրենք աշակերտել են երջանկահիշատակ, լուսահոգի կարդինալ Աղաջանյանին:

Շատ զարգացած երկրների կառավարությունների հետ մեկտեղ՝ փորձելով աֆրիկյան մայրցամաքի քաղցր հանդարտեցնել, Վատիկանը պարբերաբար իր անմիջական կապերը հաստատեց աֆրիկյան նոր երկրների կառավարությունների հետ, որտեղ Վատիկանը ուղարկեց իր էմիսարներին՝ միաժամանակ ներկայացնելով և իր հավատը: Այդ նպատակով 1961 թվականի վերջում կարդինալներ Տիսերանը և Աղաջանյանը մեկնեցին Աֆրիկա: Այդ ժամանակ Աղաջանյանը դարձել էր «Հավատքի միաբանության» պրեֆեկտը, որը Կուրիայի ամենակարևոր պաշտոններից մեկն էր:

Վատիկանը մի շարք փորձառու գործիչների ուղարկեց աֆրիկյան երկրներ մշտական աշխատանքի, առաջին հերթին քարոզչական գործունեություն կազմակերպելու համար, ինչին այսօր էլ մեծ նշանակություն է տալիս: Պիոս XII-ը նաև հատուկ նվիրել է Վատիկանին նոր շրջագայական «Ավետարանի հոչակագիրը» Ասիայում և Աֆրիկայում կաթոլիկ եկեղեցուն «բնիկացնելու» անհրաժեշտության մասին, այսինքն տեղական ծագում ունեցող հոգևորականների կադրեր ստեղծելու մասին: Նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է բժշկական միսիոներների քոլեջ՝ Նայրոբիում:

Երկու տարի անց 1939 թվականին, հայ կաթոլիկների պատրիարքը Բեյրութում կառուցեց 1915 թվականի զոհերի

հուշարձանը: Հուշարձանի բացման և օրհնության ժամանակ Աղաջանյանը հանդես եկավ հուզիչ խոսքով.

–Այս օրելիսկ–սյունը խորհրդանշում է մեր ազգը, մեր հայոց աշխարհը, նույնիսկ մեր փշոտ վիշտը մեզ համար վարդ է դառնում, հայրենիքի կարոտը մաշում է մեր սրտերը...

–Օ, հա՛յ ժողովուրդ, դիմում եմ ձեզ, հատկապես երիտասարդներին, դուք ազգի ժպիտն ու հույսն եք: Ջորացրե՛ք ձեր հոգիները, մեր պատվիրանները՝ հավատարիմ մնաք ազգին ծառայելու ձեր գաղափարներին, դրա համար մենք մեծ գոհողություններ արեցինք՝ սփռված աշխարհով մեկ, երկրից երկիր: Հյուրասեր երկրում մնալով հավատարիմ և երախտապարտ՝ եղեք օրինակելի ձեր աշխատանքում, մնացե՛ք այս միասնության մեջ փոխադարձ սիրով և բարձր կրեք քրիստոնեական հավատի և իսկական հայրենասիրության դրոշը (տարբերություն կա՝ Առաքելական եկեղեցու կոչերից):

«Մրբութիւնն ու գիտութիւնը, ահա ճշմարիտ եկեղեցականի մը կարեւորագոյն երկսայրի զէնքը», – հետագայում սիրել է հաճախ կրկնել Լևոնյան վարժարանի սաների համար կարդինալ Աղաջանյանը:

Որպես Վատիկանի քաղաքականության եկումենիկ ուղղությունների մի մաս՝ Աղաջանյանը նպաստել է 1967 թվականին Պողոս VI-ի հանդիպմանը Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի և և Սբ. Էջմիածնի կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ: Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ սա դարաշրջանային, մինչ այդ անհնարին հանդիպում էր: Վազգեն Ա-ն՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոս, առաջինն է ստացել է այս հրավերը, և հայոց կաթողիկոսին ուղեկցել են Հայ եկեղեցու գրեթե բոլոր բարձրաստիճան վարդապետները, նման բան նախկինում չի եղել: Մեր ժողովրդի համար ամենադժվար տարիներին հայ կաթողիկոսները դի-

մել են Վատիկանին, Հռոմի պապին, բայց դարպասներից այն կողմ ոչ մեկին չեն թողել:

Այս այցին նպաստեց Էկումենիկ շարժումը (եկեղեցիների մերձեցման հոչակումը), ուստի Պապն ու Հայոց Կաթողիկոսն առաջին անգամ հանդիպեցին Վատիկանի ժողովում և առաջին անգամ՝ այդ եկեղեցիների երկար պատմության մեջ: Եվ նրանք հոչակեցին քրիստոնեական հավատքի միասնությունը *խաղաղության* համար պայքարում:

Հայկական գլխավոր և ամենազգայուն հարցի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Նա առանձնահատուկ վրդովմունք հայտնեց, երբ թուրքերը ցինիկաբար գնահատեցին Հայոց ցեղասպանությունը՝ որպես օրինական պատասխան քայլ հայ հայդուկների գործողությունների դեմ: Աղաջանյանը մեծ աշխատանք է կատարել Հայ կաթողիկե, առաքելական և ավետարանական եկեղեցիների միջկրոնական միաձայնության գործում: Այդ իսկ պատճառով կարդինալն իր կյանքի վերջին տարիներին կազմակերպեց Ամենայն հայոց կաթողիկոսի Վազգեն Առաջինի պատմական հանդիպումը Հռոմի պապի հետ: Նա առիթը բաց չթողեց իր ներդրումն ունենալ հայ հոգևոր մշակույթի ասպարեզում՝ հրավիրել անվիճելի համաշխարհային մշակութային ժառանգություն, պահպանել, հանրահռչակել ու բացահայտել նրա հոգևոր կապը այլ մշակույթների հետ: Հնարավորինս ֆինանսավորել է Վիեննայի և Վենետիկի Մխիթարյաններին՝ հայ քաղաքակրթության նշանավոր կենտրոնին, որը դարձել է իսկական գիտակրթական կենտրոն, որտեղ պահպանվել են համաշխարհային մշակույթի բացառիկ նմուշներ, կատարվել են դասական թարգմանություններ՝ հրատարակվել է 36 լեզուներով, արտագրվել են հազվագյուտ գրքեր:

Եվրոպական բեմերում «Սպարտակ» բալետի հաղթական ելույթների ժամանակ մեծ կոմպոզիտորը վերջինիս

խնդրանքով հանդիպել է մի ազդեցիկ կարդինալի հետ: Արամ Բյլիչն անթաքույց հիացմունքով մեկնաբանեց այս հանդիպումը. «Ես աթեիստ եմ, բայց այն մարդկանց զավակն եմ, ով առաջինն է պաշտոնապես ընդունել քրիստոնեությունը, և, հետևաբար, չէի կարող չհանդիպել իմ հայտնի հայրենակից հոգևորականի հետ: Այս ջերմ ընդունելության ժամանակ, հիշում է նա, – մեծ տպավորություն թողեցին եկեղեցու բարձրաստիճան սպասավորի դասական երաժշտության, այդ թվում հայ և ռուս կոմպոզիտորների գիտելիքները: Նա գովեստի խոսքեր հայտնեց իմ բալետի մասին՝ նկատի ունենալով Մպարտակի մոնումենտալ կերպարը՝ *«ազատության համար պայքարող մեծ ապստամբը»* կապելով նրան ազատության երազանքով ապրող մեր ժողովրդի անցյալի ու ապագայի հետ, նրա հոգևոր, տարածքային անկախությամբ: Իր գովասանքի մեջ նա ինձ անվանեց նախազգայնական, քանի որ երաժշտության մեջ ես արտահայտել եմ *«հայ ազգային-ազատագրական ապրումները փոխաբերական իմաստով վառ ու եվրոպական»*:

Մյուս կողմից, Ադաջանյանը ակտիվ մասնակից էր և հավասարապես դաշնակցական առաջնորդների հետ՝ նույն Առաքելական եկեղեցու պառակտման օգտին շարժման կուլիսային առաջնորդը: Մեծի Տանն Կիլիկիո ապստամբության պատմությունը դեռ վերք է մնում Սբ. Էջմիածնի համար: Անթիլիասը գրավեց հայկական սփյուռքի համար կարևորագույն թեմերը՝ իբր կոմունիստական իշխանությունների արտակարգ խնամակալությունից ազատվելուց: Ավելին, բոլոր բերված փաստարկներն անբասիր էին հայերի համար և կոմունիզմի դեմ:

Իր առաքելությունը յուրովի ընկալելով՝ Ադաջանյանը կարծում էր՝ քանի որ հայրենիքում և նրանից դուրս ապրող մեր ժողովրդի հատվածները աշխարհագրական և աշխարհաքաղաքական տարբեր միջավայրերում են, Սփյուռքը

պետք է ունենա իր կաթողիկոսը, իսկ Էջմիածինը՝ իր: Ելնելով ազգային-քաղաքական ռեալ դիրքերից, այս մարտավարական քայլը որպես պատրվակ օգտագործելով՝ շատերը շտապեցին անարդարացիորեն մեղադրել նրան Անթիլիասի և Էջմիածնի միջև պառակտումը խրախուսելու մեջ, հայրենիքի և դրսում ապրողների միջև: Սա, բնականաբար, չէր համապատասխանում Ադաջանյանի ծրագրերին ու ջանքերին: Նրա եպիսկոպոսական կարգախոսն էր *«Iustitia et Pax»* («Արդարություն և խաղաղություն»):

Վատիկանի որոշմամբ՝ Ադաջանյանի գլխավորած հեղինակավոր պատվիրակությունը մեկնել էր Վիետնամ: Դրա նպատակն էր գտնել հնարավոր ելքեր՝ վերջ դնելու ամերիկա-վիետնամական երկարատև արյունալի պատերազմին: Կեղծելով այցի իրական խաղաղապահ նպատակը՝ լրատվական գործակալությունները լայնորեն լուրեր տարածեցին, այդ թվում՝ Խորհրդային Միությունում և, իհարկե, Հայաստանում, որ կարդինալը ժամանել է ազրեատրի դեմ անկախության համար կռիվող երկիր նվաճողներին խրախուսելու համար: Առաքելության նպատակի մասին բացահայտ ապատեղեկատվությունն այս անգամ կիրառվել է նաև Ադաջանյանի դեմ: Հատկապես հետաքրքիր է կարդալ նրա հովվական ուղերձները: Մասնավորապես, ԱՄՆ հետախուզական ծառայությունները հայտարարեցին, թե ինչ «ոչ դիվանագիտական» լեզվով է կարդինալ Ադաջանյանը շփվել ֆաշիզմի պարտության գործում մեծ ներդրում ունեցած իրենց երկրի բարձրաստիճան զինվորականների հետ՝ չխնայելով նաև «սիրալից» խոսքերը. ուղղված իրենց երկրին:

«Եկեղեցի և Հայրենիք» (1946), *«Հայ եկեղեցու հայրերը Սբ. Պետրոսի առաջնության մասին»* (1949), *«Հայ Կաթողիկե եկեղեցի»* (1950), *«Արևելյան եկեղեցու հայրերը Մուրբ հաղորդության մասին»* (1951), *«Հայ Եկեղեցու հայրերը Աստվածածնի մասին»* (1954): Եվ դժվար է ձեռքբազատվել այն մտքից, որ

սուրբ կոչումների տառի մասին գիտելիքներով չծանրաբեռնված հասարակ մարդու համար այս խոսքերը քիչ են տարբերվում առաքելական կամ նույն ուղղափառ հավատքի եկեղեցում հնչած քարոզներից: Իսկապես, քրիստոնեական հավատը մարդասիրական է և համամարդկային... Այլ հարց է, թե որքանով է այն ի կատար ածվում:

Փնտրելով այս ուղերձները (որոնք Ռուսաստանի հայ կաթոլիկ համայնքի նախկին հովիվը սիրով ինձ համար ուղարկեց Վաստիկանից) և կարդինալ Աղաջանյանի մասին որևէ գրականություն, երկար փնտրտուքներից հետո Երևանի գրադարաններում հայտնաբերեցի ընդամենը երկու գրքույկ՝ «Շնորհազարդ վարդապետ» Բեյրութի Աղաջանյան մանկատան-դպրոցի և 1951թ «Բառ հերքող» նույն Դերենիկ արքեպիսկոպոսի (այն, որ հետևում էր Աղաջանյանին և մերկացնում նրան իր գրքույկում), ի դեպ, *վեցերորդ* հրատարակությունը: Հետաքրքիր էր կարդալ, թե ինչ է գրում կարդինալն իր ուղերձներում, և նրա աշխարհայացքի որ կարևոր կողմերն են հերքվում (պետք է խոստովանել, միանգամայն տեղին և սրամիտ):

Կարդինալը մեղադրվում է Հռոմեական եկեղեցուն կաթոլիկ անվանելու մեջ, նա ճիշտ չէ. կաթոլիկ նշանակում է տիեզերական, և անսահման տարածության այս յուրացումը սարսափելի է հատկապես ոչ կաթոլիկների և Դերենիկ արքեպիսկոպոսի համար: «Իմ եղբայր ծիրանի գլխարկով», – անընդհատ բացականչում է Դերենիկը իր բացահայտումներում՝ ըստ երևույթին խիստ դժգոհ լինելով, որ Առաքելական եկեղեցու կողմից մեծ հարգանք վայելող Մխիթարյան հայրերը չափազանց առատաձեռն են եղել ծիրանագույն կարդինալի գլխարկի նման նվեր շնորհելով:

Դերենիկը հաստատապես և անվերապահորեն համոզված էր հայ կաթողիկե պատրիարքի գահի անօրինակաւության մեջ, որի առաջնորդն այն ժամանակ Գրիգոր Պետ-

րոսն էր: Բայց պարզվում է, որ «միավորում» ասելով հռոմեացի կուրատորը հասկացել է բոլոր առաքելական հավատացյալների՝ ըստ երևույթին քահանաների հետ միասին ընդունելությունը հռոմեական եկեղեցու գրկում: Եվ Մխիթար Մեծաստացու օրինակը ցույց տվեց, որ սա կարող է օգուտ բերել հայությանը:

Դե, բավական ակտիվ, հարձակողական դավանափոխություն, այնքան բնորոշ կաթոլիկ եկեղեցուն, որը փորձում էր իր դոգմաները քարոզել նույնիսկ այն առաքելական հայրենակիցների շրջանում, ովքեր ընդունել էին քրիստոնեության լույսը Հռոմից առաջ: Թվում էր, թե հայերը կաթոլիկ դառնալով ինքնաբերաբար կդառնան «բարձր մշակույթով» արևմտյան քաղաքակրթության մաս՝ ընկնելով նրա խնամակալության և պաշտպանության տակ: Բայց այս բոլոր երաշխիքները, ինչպես միշտ, կեղծ էին, թեև դրանք նպաստեցին «ֆրանկների» մեկուսացմանն իրենց առաքելական բարեկամներից: Եվ որոշ դեպքերում (ինչպես լեհ հայերի դեպքում), դրանք հանգեցրին ազգի ամբողջական կազմալուծմանը:

Մտովի որոնելով ունիատների հավատքի հետ «մերձեցման» հնարավոր ուղիները, ի վերջո, չգտնելով ավելի լավ բան, քան ունիատների վերադարձը Մայր հավատքի ծոցը, որը ես համարում եմ Մուրբ էջմիածինն է, սա երկուստեք «ցանկալի» «մերձեցում» է, գուցե պետք է հետաձգվի մինչև ավելի լավ ժամանակներ:

Ախալցխայում գտա մի կնոջ, որը խնամում էր Աղաջանյանի մոր՝ Իսկուհի Յանջյանի գերեզմանը: Մոխրեբից էր մորաքույր Լուսիկը: Նա հարցրեց՝ այցելել է՞մ այն տունը, որտեղ ծնվել է Աղաջանյանը:

– Վրացիները չթողեցին, որ այդ տան պատից ցուցանակ կախեն, սուխլիսցիները իրենց մոտ են կախել: Իսկ քիչ հեռու կողքի փողոցում, շրջկումի տեղում, առաջ եկեղեցի կար, հայր Եփրեմ Մեթյանն էր կառուցել: Եկեղեցին շատ գեղեցիկ էր: Այս

եկեղեցում դպրոց կար, շատ երեխաներով, այնտեղ սովորեց նաև Իսկուհու որդին: Եվ բոլոր նրանք, ովքեր եկեղեցին քանդեցին դեռ պատերազմից առաջ, բոլորը ժամանակից շուտ մահացան, այն էլ ողբերգական մահով, խալխը գիտի, – ցածր ձայնով ու վիրավորված ասում է Լուսիկ մորաքույրը:

Մոխրերում 10 օր առաջ օծվեց կաթոլիկ եկեղեցին, և աստվածասեր կինը երկու եկեղեցում էլ ազնվորեն և հավատարմորեն ծառայում է (գարմանալի բան):

– Աստված բոլորիս համար նույնն է, – քարացած աթոռին ասում է Լուսիկ մորաքույրը, – դուստրը մազերն էր կարճացնում:

Իսկ դուստրը նրան բավականին նորաձև սանրվածք արեց: Ամուսնուն 1949 թվականին առանց պատճառի քշել են Սիբիր, և թեև Լուսիկը մոտ 90 տարեկան է, երկար տարիներ խնամում է Աղաջանյանի մոր՝ Իսկուհու գերեզմանը: Լուսիկ մորաքույրն անընդհատ նշումներ է անում, վերաշարադրում, շատ է սիրում մեջբերել 1902 թվականին լույս տեսած «Բնաշխարհիկ» բառարանը: Շապիկի մասին ասում է՝ Անին է նկարված, այնքան գեղեցիկ է...

– Հիմնական խալխը հեռացավ, – արդարացնում է նա բնակչության քչությունը եկեղեցում, – ես կաթոլիկ եմ, կաթոլիկ եկեղեցու բանալին ունեմ, այնտեղ հանդիպում եմք, գնում եմ, մաքրում, մոմեր եմ գնում, վառում, աղոթում: Հետո գնում եմ Լուսավորիչ, Էջմիածնի եկեղեցի է, երկու եկեղեցիներն էլ գնում եմ, – պարզասրտորեն բացատրում է կինը, – ես սիրում եմ իմ Աստծուն. չէ՞ որ նա միակն է: Իսկ վերջում լրիվ շշմեցրեց.

– Վրաց կաթոլիկ եկեղեցի էլ եմ գնում, մոմ վառում:

Այստեղ շատերն անցնում են հետևյալ փուլերը՝ հայ-կաթոլիկ, վրաց-կաթոլիկ, վրաց-ուղղափառ...

– Աղաջանյանի մասին կարելի է շատ երկար խոսել ու թվարկել իր գործերը, – բարեգութ արտահայտությամբ շարունակում է Լուսիկ մորաքույրը:

Բայց թերևս դժվար է թվարկել բոլոր նրա գործերը, եթե որոշակիորեն հայտնի է, որ ԽՍՀՄ իշխանության ձեռքում գտնվող այն Հայաստանի համար նա ոչինչ չի արել և նույնիսկ հետևողականորեն իրավունք է պաշտպանել այն ամենին խանգարելու, ինչը մեծ մասամբ առաքելական համոզմունքով հայերը անհրաժեշտ են համարել երկրի՝ իրենց հայրենիքի հետագա բարգավաճման համար: Չնայած այն բանին, որ ուրիշ հայություն էլ կա աշխարհում...

Հայտնի է Ալբերտ Թեմիրյանի գաղտնի նամակը Վազգեն Առաջինին, որտեղ ասվում է, որ Հայ եկեղեցու պառակտմանն ուղղված բոլոր գործողությունների հետևում կանգնած է Հայ կաթողիկե պատրիարք, կարդինալ Աղաջանյանը: Մակայն վերջինս հրապարակայնորեն է պաշտպանել Անթիլիաս-Էջմիածնի միջև պառակտումը: Իսկ Կիլիկիո Տան առաջնորդի ընտրությանը ներկա էր Աղաջանյանի անձնական ներկայացուցիչը: Հայ կաթողիկե պատրիարքը գտնում էր, որ Մփյուռքը պետք է ունենա իր կաթողիկոսը, իսկ Էջմիածինը, գտնվելով բոլշևիկների ազդեցության և ճնշման տակ, պետք է բավարարվի խորհրդային հոտով:

Մուրբ Աթոռում Մեծ Բրիտանիայի դեսպանը գրել է, որ Աղաջանյանը *«կարծում է, որ ամենալավ բանը, որ կարող են անել արևմտյան տերությունները, կառչած մնալն է, պատերազմից խուսափելը, և որքան ուժեղ են նրանք զինված ու միավորված, այնքան քիչ է վտանգը, որ Ռուսաստանը կհամարձակվի պատերազմել: Իսկ Ռուսաստանի ներքում պետք է ակնկալել տրանսֆորմացիաներ, որոնք, նրա կարծիքով, վաղ թե ուշ կլինեն»*: Միևնույն ժամանակ, խորհրդային իշխանության անհաշտ հակառակորդ Աղաջանյանը 1959 թվականին Ավստրալիա կատարած այցի ժամանակ կոչ արեց «հերո-

սական քրիստոնեական» պայքար մղել կոմունիզմի դեմ: Ի՞նչ կարելի է ավելացնել: Նա կռահեց ԽՍՀՄ փլուզումը, բայց այսօր գործնականում ռազմական գործողություններ են կատարվում, Արևմուտքը համախմբված է, բայց արդյունքը խղճուկ է...

«Այս Պիոս XII սիրելի կարդինալը բացահայտորեն ընդդիմանում է հայրենադարձությանը և Թուրքիայի կողմից գրավված հայկական վիլայեթները ՀԽՍՀ-ին վերամիավորելու մեծ և մարդասիրական գործին: Հոգեպես քայքայել ու ազգովին անձնավորել թափառաշրջիկ հայերին, որոնք այդքան տենչում են՝ վերադառնալ սիրելի հայրենիք, որն իր դռները լայն բացեց արյունակցական ու մշակութային եղբայրների առաջ, այսպիսին է Աղաջանյանի մարտավարությունը»...

Իրավիճակը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պահանջել է հանրապետության բնակեցումը: Եվ միանգամայն իրագործելի էր թվում արևմտահայ հողերի միացումը: Արարատի այս կողմում ապրող հայությունը կանգնած էր իր դարավոր երազանքի իրականացման շեմին: Եվ հանկարծ հռոմեական կարդինալը դեմ է հայրենադարձությանը: Բհարկե, այն հայերի համար, որոնք համարյա առանց բացառության ինչպես եկան, այնպես էլ հեռացան, նա ճիշտ էր: Հայրենադարձների առնամանում չի եղել՝ շնորհիվ ստալինյան վարչակարգի, որն իրենց հայրենիք Հայաստան եկածների հսկայական թվով քշեց հեռավոր Սիբիր:

Բայց եթե այսօր հետաքրքրվենք Բաքվից և Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների ճակատագրով, ովքեր շտապեցին փրկվել Հայաստանում, կարո՞ղ ենք վստահորեն պնդել, որ նրանք միաձուլվել են իրենց հայրենակիցների մեջ:

Հայ առաքելական եկեղեցու հոգևորականները շատ կոշտ էին հակադրվում կաթոլիկ հայրենակիցներին, հատկապես նրանց հովիվ-առաջնորդին: Սրբազան Դերենիկը գրել է.

«Հինգ տարի առաջ Աղաջանյանը գնաց Աֆրիկա և իրեն հոչակեց Հայոց պատրիարք: Ես հետևել եմ նրան ու հողվածներ գրել արտասահմանյան մամուլում, որպեսզի չեզոքացնեմ նրան»: Զբաղմունք էր, թե՞ իդեա ֆիքս:

Իսկ կաթոլիկական մամուլում նրա մասին գրեցին. *«Մի Դերենիկ կար, իբր քահանա, բայց մատնիչ: Ուստի նա, տապանաբարերի հետազոտողի անվան տակ, հետևում էր Աղաջանյանին, ուր որ նա ճանապարհորդում էր իր հավատքի գործերով: Պորտուգալիայում լույս է տեսել մի գիրք, որտեղ հեղինակը, առանց հակահետախուզության անուններ տալու, պատմում է, թե ինչպես 60-ականների սկզբին հեռացվեց Գրիգորի Աղաջանյանին հալածող մի հայ Գրիգորյան եպիսկոպոս»:*

Աղաջանյանը յուրովի էր հասկանում իր ազգային առաքելությունը:

Բայց կան ոչ միայն հավերժական ճշմարտություններ, այլև հավերժական սխալներ:

Իր արմատներից ու հողից զրկված՝ նա երբեք չկարողացավ դառնալ ո՛չ առաջնորդ, ո՛չ փրկիչ: Այս ամենով հանդերձ, հայությունը, անկախ իր դավանանքային պատկանելությունից, ճանաչում է կարդինալ Գրիգոր Աղաջանյանի գործչի նշանակությունը ազգային պատմության մեջ:

Կարդինալ Աղաջանյանը քաջ գիտակցում էր ռադիոյի կարևորությունը:

Եկեղեցու ավետարանչական առաքելության ծառայության մեջ հաղորդակցման միջոցները, ըստ Պիոս XII պապի, *«հեռարձակում են ամբողջ կաթոլիկ աշխարհին»:* Որպես Հավատքի տարածման միաբանության (այժմ՝ Ազգերի ավետարանական միաբանության) ղեկավար՝ նախաձեռնել է Վատիկանի ռադիոյի հայկական բաժնի հիմնադրումը:

Հայկական խմբագրությունը գործել է երկար տասնամյակներ, և Աղաջանյանը մինչև կյանքի վերջին օրն աջակցել է

այս բաժնին: Պատմում են, որ երբ 1971 թվականին կարդինալ Աղաջանյանի հայրենի Վրաստանից մի խումբ հայ ուխտավորներ ժամանել են Հոմ, նրա հետ հանդիպման ժամանակ ուխտավորներից մեկը քնքշանքով պատմել է, որ Վրաստանում բազմաթիվ հավատացյալներ ծնկի են իջնում պատարագը հայկական ծեսով Վատիկանից լսելու ժամանակ: Հետաքրքիր է, որ միաժամանակ այդ տարիներին հայկական ռադիոյի կատակների գազաթնակետ է եղել: Բայց դա ուղղակի պատահականություն է:

Բացի Վատիկանի ռադիոյից, հայերի համար լինելով Պապական առանձնահատուկ պատվիրակ՝ Աղաջանյանը կարողացավ այն ժամանակվա դաշնային կանցլեր Կոնրադ Ադենաուերի հավանությամբ, ընդհանուր առմամբ 13,5 միլիոն DM հատկացնել Մանիլայում եկեղեցու «Radio Veritas» կայան հիմնելու համար: Վատիկանի պատասխանն ակնթարթային է, նա լավ գիտի իր գործը: Մանիլայում «Radio Veritas» հիմնելու որոշումը անուղղակի պատասխան էր կոմունիզմի սպառնալիքին, որն այնուհետև տարածվեց տարածաշրջանում (ասիական երկրներում, ինչպիսիք են Չինաստանը, Հյուսիսային Կորեան, Բիրման և Հյուսիսային Վիետնամը):

Լիբանանում Աղաջանյանի պատրիարքության սկիզբը համընկավ Թուրքիայի կողմից համեղ տարածքների հերթական զավթման ողբերգական էջի հետ: Օգտվելով (ինչպես միշտ) նախապատերազմական մթնոլորտից՝ Թուրքիան հավակնում էր 40 տոկոս թուրքերով բնակեցված սահմանային Ալեքսանդրետա սանջակին: Մեծ Բրիտանիան, ինչպես ընդունված էր անգլո-թուրքական հարաբերությունների ողջ պատմության ընթացքում, պաշտպանում էր թուրքական հավակնությունները Ազգերի լիգայում, ֆրանսիական կառավարությունը, ինչը նա պատահական չէր, զիջումների գնաց, և նույն Ազգերի լիգայի որոշմամբ՝ Ալեքսանդրետա սանջակը

հանձնվեց ֆրանկո-թուրքական համատեղ վերահսկողությանը, ձևավորվեց «Հաթայի անկախ պետություն»՝ պաշտոնապես Միրիայի ինքնիշխանության ներքո, և Ֆրանսիայի հետ այս պայմանագրով Ալեքսանդրետայի սիրիական սանջակը մտավ Թուրքիայի կազմի մեջ:

Ամենից շատ սա ծանր հարված էր Միրիայի հայ սփյուռքին և հանգեցրեց հայ բնակչության զանգվածային արտագաղթի՝ ավելի քան 35000 մարդու: Մեծի Տանն Կիլիկիո արքեպիսկոպոս Խաղ Աջափախյանը դիմել է պատկան մարմիններին և ապահովել այնտեղ բնակվող գրեթե 30.000 հայերի վերաբնակեցումը Միրիա և Լիբանան լինելով վերջիններից մեկը, որը լքել է սանջակի տարածքը: Հայերը ստիպված եղան լքել իրենց տեղերը պատմական բնակչության հաստատվել նոր տարածքներում: Դրա կազմակերպմանը նպաստել է նաև Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարքը, որ գահ էր բարձրացել երկու տարի առաջ:

Արդյունքում այս տարածքում գտնվող հայաբնակ գյուղերից մեկը, որն անվանվում է օրհնված Քեսաբ հող, հրաշքով վերագրավվել է, թեև մնացել է Հաթայա-Իսկանդերունի հետ միասին Թուրքիայի և Միրիայի միջև, մինչ օրս վեճի առարկա է և այժմ գտնվում է Թուրքիայի հետ Միրիայի սահմանին, 200-300 մետր հեռավորության վրա (ինչպիսի՝ հավերժական ճակատագիր հարևանի հետ): Վերջին իրադարձություններն էլ ավելի ողբերգական են: Միրիահայերը, չնայած այն հանգամանքին, որ հայերը պետություն ունեն, նրանք գնալու տեղ չունեն: Թվում է, թե սիրիահայերը չեն ցանկանում մնալ աղքատ, ներքին և արտաքին կոռիպներով քայքայված Հայաստանում, բայց ամենայն հավանականությամբ, եթե իսլամիստները հաղթեն, ապա 60.000 սիրիահայեր ստիպված կլինեն լքել իրենց դարավոր ապաստարանները անվտանգություն փնտրելու համար:

Գլուխ քսաներորդ

Չար այքն է հետևում է ամեն քայլին, ամեն շնչին, ով դուրները չի գալիս, բանտ է նետվում ու լալիս: Շուրջըլորը նահատակ, գրպարտությունը՝ փեշակ... Շուրջդ սուտ և հերյուրանք, ողջ երկիրը մի Գուլագ...

Մեր վաղեմի ընկեր, գնդապետ Տրավինիի «երկարակեցությունը» պատահական չէր: Երկարատև էր և նրա ղեկավարի պաշտոնակատարությունը CIFAR-ի ղեկավարի դերում՝ հաջողակ ծառայող, գեներալ Դե Լորենցոն: Ինչը մեծապես ապահովվել է անհիմն, բայց հմտորեն բեմադրված և սնուցված գաղտնի ծառայության միջոցով Բուսալիայի նախագահի ղեկավարին իբր գոյություն ունեցող սպանելու դավադրության մասին լուրերի միջոցով:

Նախագահին մոտալուտ «մարդասպանից» «պաշտպանելու» համար աստղաբաշխական գումարներ են պահանջվել, տրամադրվել և ծախսվել, ռազմական հետախուզությունը ավելի քան «գերազանցել» է իրենց իրական պարտականությունները: Պետության անվտանգությանը միայն հսկելու փոխարեն իրականում ստեղծվեց իրենց սեփական գաղտնի քաղաքական ոստիկանությունը:

Նույնիսկ եպիսկոպոսները, առաջնորդներն ու քահանաները, պատգամավորները, սենատորները, արդյունաբերողները և արվեստագետները լրտեսվեցին, և նրանց անձնական կյանքը բիզնեսի, արտաամուսնական կապերի, անօրինական երեխաների և սեռական սովորությունների մասին տեղեկություններով դարձավ ավելի մեծ հսկողության առարկա: Այս աշխատանքի սկզբունքը հստակ ձևակերպված է՝ «Ռմանալ ամեն ինչ բոլորի մասին»...

Սահմանվել էր կապ համարել բոլոր հարաբերությունները՝ թե՛ անձնական, թե՛ ընկերական, թե՛ վերը նշված ո-

լորտներում գործունեությունից բխող, այսինքն՝ քաղաքական, տնտեսական, մտավոր շրջանակների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ազգային շահերի համար կասկածելի կամ վտանգավոր անձանց հետ: Սակայն Ադաջանյանի դեպքում...

Ինչ նշանակություն ունի, որ 1968 թվականին զինվորականների և հատուկ ծառայությունների գործողություններն ուսումնասիրող հանձնաժողովը եզրակացրել է, որ «*մի շարք դեպքերում տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է վնաս պատճառելու նպատակով. կոնկրետ անձ և ծառայելով որպես ահաբեկման միջոց*»: Բայց ինչպես ասում են՝ գնացքն արդեն գնացել է...

Ռազմական հետախուզության գաղտնի փաստաթղթերում օրեցօր ուռչում էր «*Gregoire Piero Agagianiam*» թղթապանակը: Իսկ Ադաջանյանի մոր մահվանից որոշ ժամանակ անց որոշեցին բացել նոր թղթապանակ, «*Էլիզաբեթ Ադախանյան*»: Լիզան քույրը, շուտվանից փորձել է գնալ եղբոր մոտ: Մրա համար այնքան խոչընդոտներ կային իր իսկ հայրենիքում՝ Վրացական ԽՍՀ Ախալցխայում, որ իտալական կողմը պարզապես վստահ էր, որ թղթապանակը կարող է դատարկ մնալ: Լիզան Եղիսաբեթ Ադաջանյանը (Պապիկովա՝ ամուսնու ազգանունով), երեխա չունեց: Երկրորդ եղբայրը՝ Պետրոսը, նույնպես երեխա չունեց: Մոր և ամուսնու մահվանից հետո Լիզա-Եղիսաբեթը տանը մենակ էր մնում և ավելի ու ավելի հաճախ էր աղոթում անկյունում՝ գաղտագողի նայելով եղբոր դիմանկարին: Մի թե՛ այդքան մեծ տղամարդը չէր կարող օգնել նրան՝ գնալու հեռավոր Բուսալիա, Հոմ: Վերջապես, նա չի կարողանա՝ ա տեսնել նրան... Այն տարիներին դա գրեթե անհնար էր հասարակ կնոջ համար, հատկապես, Վրացական ԽՍՀ-ի հայկական փոքրիկ քաղաքից:

Միգուցե դրա համար էլ նրան օգնում էր բարեկամուհին՝ մի գրագետ կին, տեղի ԶԱԳՍ-ի աշխատող Գոհար Ադաջանյանը՝ փաստաթղթեր էր կազմում՝ փորձելով խուսափել

հրապարակայնությունից: Բայց արտերկիր մեկնելու նման դեպքում հրապարակայնությունն պետք էլ չէ, դրա մասին ում պետք է, առաջինը կիմանա: Լիզային անմիջապես սկսեցին խոչընդոտել, մշակել իշխանությունների հետ համագործակցելու համար: Նրան համոզում էին, ինչ-որ բան ակնարկում: Թե ինչ էին ուզում, Լիզան վախենում էր պատմել նույնիսկ իր բարեկամուհի Գոհարին, իսկ ավելի ուշ՝ ն հարազատ եղբորը: Հնարավոր է, որ վախեցած կինը գերեզման է տարել այս գաղտնիքը:

Վաթսունականների սկզբին Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Անաստաս Միկոյանը կարճատև պաշտոնական այցով մեկնել էր Բուալիա: Այնտեղ նա բանակցել է թեթև արդյունաբերության համար իտալական սարքավորումների խորհրդային առևտրային գնումների շուրջ: Միաժամանակ ծրագիրը ներառում էր շատ կարևոր հանդիպում Հոռմի պապի հետ: Միկոյանը խորթ չէր եկեղեցու եղբայրներին, քանի որ նա ինքն էլ ուսումը սկսել է Թիֆլիսի հոգևոր ճեմարանում, այնուհետ ընդունվել Էջմիածնի հոգևոր ճեմարան: Ճիշտ է, այս ճեմարաններից, չգիտես ինչու, քահանաների փոխարեն հաճախ հեղափոխականներ էին դուրս գալիս:

Ավարտելով բոլոր գործերը՝ նա գնաց Վատիկան՝ հարգանքի տուրք մատուցելու Հոռմի պապին: Թեև ով գիտի, գուցե պապի հետ ազգային նշանակության տնտեսական գործեր էլ է ունեցել: Ի վերջո, աշխարհում հոչակված էին խաղաղ գոյակցության սկզբունքները, և եկեղեցիների համակեցությունը նույնպես պետք էր կազմակերպվեր պետական մակարդակով: Հոռմի Պապն արդեն հայտարարել էր իր Խաղաղության կոնգրեսները, որոնք կոչվում են Նոր խորհուրդ, ուստի Վատիկանը հայտարարել է խաղաղության և խաղաղ գոյակցության նոր ստրատեգիայի մասին: Հոռմի պապն ու Միկոյանը հանդիպել են, բայց հանդիպմանը մասնակցել է Վատիկա-

նի ամենակարևոր անձը Հոռմի պապից հետո՝ կարդինալ Ադաջանյանը, ով այդ ժամանակ դարձավ Հավատքի քարոզչության միաբանության պրեֆեկտ:

Կարդինալ Գրեգուար Պիեռը՝ կաթոլիկ հագուստով, կարդինալի կերպարանքով, կամացուկ զրուցում էր Միկոյանի հետ, որը, իհարկե, չէր էլ կոսիում, որ դիմացինը իր հայրենակիցն է: Ի դեպ, Անաստաս Իվանովիչը նույնպես ծնվել է 1895 թվականին՝ կարդինալ Ադաջանյանից ընդամենը մեկ ամիս ուշ: Հայ տղաների ճակատագրերը սկզբում նման էին, աղքատ մարդիկ հաճախ էին իրենց երեխաներին ուղարկում եկեղեցի ծառայելու:

Եվ ոչ միայն հայերն էին փորձում իրենց երեխաներին քահանայի ապագա դասավորել: Տարեց Քեթևանը՝ Ստալինի մայրը, որդուն ուղղափառ ճեմարան է տարել, երբ նա 8 տարեկան էր, մի կերպ կերակրելու համար, և մի օր խեղճ կինը ասել է. «Ավելի լավ կլիներ, եթե նա քահանա դառնար»: Բայց ուղիները բոլորի համար տարբեր եղան: Անաստասը 9 տարեկանում ուղարկվել է Թիֆլիսի ճեմարան: Նրա հայրը՝ Իվան-Հովհաննես Միկոյանը, գյուղի անգրագետ աստղագործը, եպիսկոպոսին խնդրեց, որ տղան ընդունվի Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր ակադեմիա, որտեղ Միկոյանը գաղտնի կերպով սկսեց մարքսիստական գաղափարախոսություն ուսումնասիրել...

Հանկարծ կարդինալ Գրեգուար Պիեռը ժպտալով դիմեց խորհրդային առաջնորդին՝ խնդրանքով.

–Պարո՛ն նախարար, Ախալցխայում, որտեղի ծնունդ եմ, ապրում է քույրս՝ Լիզան: Ես խնդրում եմ Ձեզ՝ աջակցել և օգնել նրան գալու ինձ մոտ, այնքան երկար ժամանակ չենք տեսել իրար: Ի դեպ, քառասուն տարին մի դար է մարդու կյանքում, դժվար չէր մոռանալ իրար...

Կարելի է միայն պատկերացնել Միկոյանի զարմանքը լսելով պապական պատգամավորից նման խնդրանք, այն էլ

հայերեն: Նրանք ջերմորեն հրաժեշտ տվեցին իրար՝ երկու հայ, երկուսն էլ հրաշքով փրկված անխուսափելի մահվանից. Չէ՞ որ Միկոյանը կովել է, մեկ անգամ չէ, որ վիրավորվել, ապրել ու գործել է Ստալինի օրոք՝ հրաշքով ողջ մնալով, իսկ ինքը՝ Աղաջանյանը, նույնպես չի մոռացել, թե ինչ հանգամանքներում է այն հեռավոր քսանմեկերորդ տարում մեկնել Հոռմ, որը փրկեց նրան:

կան պատերազմ, 1828–1829): Ախալցխայի կաթողիկե եկեղեցիները
մինչև 1917 թվականը Սր. Իոաննես Մկրտիչ, Սուրբ Խաչ եկեղեցի,
Սուրբ Աստվածածնի Վերափոխում և Սուրբ Խաչ եկեղեցի:

Աղրիանապոլսի խաղաղության պայմանագիր Թուրքիայի և
Ռուսաստանի միջև, 2 սեպտեմբերի 1829 թ.

Աղրիանապոլսի հաշտության պայմանագրով ավարտվեց ռուս-
թուրքական 1828–1829 թվականների պատերազմը:

*«Աստծո ողորմությամբ մենք Նիկոլայ Առաջին, ողջ Ռուսաս-
տանի, Մոսկվայի, Կիևի կայսր... Հայոց, Չերկասի և լեռնային իշ-
խանների Իրերիայի, Կարտալիների, Վրացական, Կարաբղիական հո-
ղերի և շրջանների ինքնիշխանն ու ինքնիշխանը և այլ ժառանգա-
կան ինքնիշխան և տիրակալ. Նորվեգիայի ժառանգորդ, Շվեդից—
Հոլլանդիայի դուքս և այլն: Եվ այլն, և այլն...»*

*... Սրանով հայտարարում ենք նրանց, ով պետք է իմանա այդ
մասին, որ Վրաստան, Բմերթթիա, Մինգրելիա, Գուրիա և շատ
շրջաններ անդրկովկասյան վաղուց հավերժորեն կցվել են Ռուսա-
կան կայսրությանը: Այս իշխանությունը տրվել է նաև Պարսկաս-
տանի հետ Թուրքմանչայում 1828 թվականի փետրվարի 10-ին Էրի-
վանի և Նախիջևանի խանությունների կնքած պայմանագրին»:*

Բարձր Հայք 7-րդ դարի հայ աշխարհագրագետ. Անանիա Շի-
րակացին այսպես է նկարագրում գավառը. «Բարձր Հայքը կազմված
է 9 շրջաններից 1. Դարանագին, 2. Առյուծ, 3. Մենձուր, 4. Եկեզեաց,
5. Մանանագի, 6. Դերջան, 7. Սպեր, 8. Շատգունք, 9. Կարին: Այս Հա-
յաստանը, իր անվան համաձայն, իսկապես բարձր է բոլոր հողերից,
քանի որ նրանից չորս կողմից գետեր են հոսում: *Ունի 3 սար, շատ
որս ու թռչուններ՝ հարմար (աննդի համար), տաք ջրեր, աղի հան-
քեր, ամեն ինչում առատություն, Թեոդոսիոպոլիս քաղաքը: (Շա-
տերն այնտեղ ներառում են Տրասպիզոնը):*

Տիխոն Բելավին (Բելլավսկի) Պատրիարք Տիխոն (աշխարհում
Վասիլի Իվանովիչ Բելավին) ծնվել է 1865 թվականի հունվարի 19-
ին Պսկովի նահանգի Տորոպեց քաղաքում, քահանայի ընտանիքում:
Տորոպեցկի հոգևոր դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Պսկո-
վի, իսկ այն ավարտելուց հետո՝ Սանկտ Պետերբուրգի աստվածա-
բանական ակադեմիան, որն ավարտել է 1888 թվականին:

Ուսանողները նրան անվանեցին «պատրիարք» նրա բնավո-
րության լրջության և ծանրության համար: Իր անձնական քարոզ-
չությամբ և քրիստոնեական ճշմարտության հաստատակամ խոս-
տովանությամբ, Եկեղեցու թշնամիների դեմ իր անխոնջ պայքարով
Տիխոն պատրիարքը առաջացրեց ատելություն նոր իշխանության
ներկայացուցիչների մոտ, որոնք անընդհատ հալածում էին իրեն:
Վեհափառի կյանքը միշտ վտանգի տակ է եղել. երեք անգամ մահա-
վորձ է եղել, բայց նա անվախ ճանապարհորդել է Մոսկվայի և նրա
սահմաններից դուրս գտնվող տարբեր եկեղեցիներում պատարագ
մատուցելու: Նահատակության շարունակական սխրանք էր Նորին
Սրբության Տիխոնի ողջ պատրիարքությունը: Երբ իշխանություննե-
րը նրան առաջարկեցին մշտական բնակության մեկնել արտասահ-
ման, պատրիարք Տիխոնն ասաց. «Ես ոչ մի տեղ չեմ գտալու, ես ամ-
բողջ ժողովրդի հետ միասին տանջվելու եմ այստեղ և իմ պարտքը
կատարելու եմ մինչև Աստծո սահմանած սահմանին»: Այն բոլոր
տարիներին նա իրականում ապրել է բանտում:

Բոնանճումներ. Լվովի հայ կաթողիկե արքեպիսկոպոսության
հսկայական եկեղեցական ունեցվածքը, ներառյալ եկեղեցական շեն-
քերը Լվով, Իվանո-Ֆրանկիվսկ, Տիամենիցա, Լիսեց, Կուտի և այլ
քաղաքներում, պետականացվեցին: Միևնույն ժամանակ էթնիկ հայ
բնակչության մեծ մասը տեղահանվել է Լեհաստան: Լվովի հայ կա-

թողիկե արքեպիսկոպոստության լուծարումն իրականացվել է Լվովի ԼԿԳԲ-ի աշխատակիցների կողմից՝ Ուկրաինայի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն.Ս.Խրուշչովի անձնական իմացությամբ: Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի վերածննդի ժամանակ 2000 թվականի հունվարին, Լվովի հայկական տաճարը վերադարձվեց Հայ Առաքելական եկեղեցուն:

ՍԼՈՆ, ՍՏՈՆ. Մոլովկիում հատուկ նշանակության ճամբար, Մոլովեցկի հատուկ նշանակության բանտ: 58, 58-10-րդ հողված քարոզչություն, որը պարունակում է կոչեր՝ տապալելու, խարխիլելու կամ թուլացնելու խորհրդային իշխանությունը կամ անհատական հակահեղափոխական հանցագործություններ կատարելու... ենթադրում է ազատագրելու...

«Գրոն» թուրքալեզու հայ-ֆրանկներն են, որոնք ապրում են Բավրայում, Խուլգումոյում, Կարտիկամիում, Տուրցկում և Ախալքալաքի շրջանում:

Գեներալ Ջովաննի Դե Լորենցոն CIFAR-ի ղեկավար է նշանակվել 1955 թվականին: Միննոյն ժամանակ, ամերիկյան ԿՀՎ-ի և Իտալիայի միջև կնքված պայմանագիրը պաշտոնականացվել է: Իտալիայի դեմոկրատական մամուլում գրվել է, որ դե Լորենցոն, ով նախկինում ռազմական հակահետախուզության ղեկավարն էր, որը գործեր էր կազմել Իտալիայի բոլոր առաջատար քաղաքական գործիչների մասին: 1964-ին Իտալիայում նախապատրաստվող ռեակցիոն դավադրության կազմակերպիչները որպես օժիտ իր հետ բերեցին այս դոսյեների պատճենները: Դրանք պահվում էին Չվեյցարական բանկերից մեկում և ակտիվորեն օգտագործվում նեոֆաշիստների կողմից որպես շանտաժի գործիք կառավարական

Գեորգիեվսկում 1783 թվականի պայմանագրի համաձայն՝ Քարթլին և Կախեթին, այսինքն՝ Արևելյան Վրաստանը, պահպանեցին ներքին ինքնավարությունը և ճանաչեցին Ռուսաստանի հովանավորությունը, պարտավորվեցին ծառայել իրենց գորքերով Ռուսաստանին՝ հետևելով նրա արտաքին քաղաքականությանը: Ռուսաստանն իր հերթին պարտավորվել է պաշտպանել Իրակլի II-ի ունեցվածքի ամբողջականությունը և նույնիսկ աջակցել նրա տիրապետության տակ գտնվող վրացական այլ հողերի, մասնավորապես՝ օսմանցիների կողմից գրավվածների վերադարձին: Միննոյն ժամանակ, Իրակլի II-ը համոզվեց, որ վրացական վերնախավը (ազն-

վականներ, հոգևորականներ, վաճառականներ) տրակտատի պայմաններով իրավահավասարեցվեն ռուսներին:

Դոյեն (ֆր. doyen – վարպետ, ավագ)՝ դիվանագիտական կորպուսի ղեկավար: Շատ կաթոլիկ երկրներում դիվանագիտական կորպուսի դոյենը առաքելական նվիրակն է:

Եկեղեցական ունեցվածքի բռնագրավում բոլշևիկների գործողությունները 1922 թվականին եկեղեցական արժեքավոր իրերը բռնագրավելու համար՝ Վոլգայի մարզում և այլ շրջաններում զանգվածային սովի դեմ պայքարելու պատրվակով: Պետության օգտին արշավի շրջանակներում առգրավվել են թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից իրեր, որոնք եղել են բոլոր դավանանքների եկեղեցիներում: Բռնագրավման են ենթարկվել նաև բացառապես պատարագային նպատակներով նախատեսված իրերը (սրբազան անոթները), արշավն ուղեկցվել է հոգևորականության դեմ բռնաճնշումներով: Իրականում բռնագրավված միջոցները նախատեսված չէր փոխանցել սովամահ մարդկանց և տեսնես ուր է փոխանցվել:

Զմառ, Ջունի Բեյրութից ոչ հեռու, 18-րդ դարից **Զմառում** գործում է աստվածաբանական ճեմարան, որը պատրաստում է հայ ծիսակարգի կաթոլիկ քահանաներ, հավաքած է հարուստ գրադարան: Գործում է նաև հայ կաթոլիկ միանձնուհիների կանանց միաբանություն:

Էրզրում (Կարին). հին անունները՝ Կարին, Կարանո, Կալիկալա, Թեոդոսիոպոլիս, Արձն-Ռում, Արգեն) Բարձր Հայքի (Մեծ Հայք) մայրաքաղաքը: Քաղաքը ողջ արևելքում հայտնի է եղել վաղ միջնադարից որպես Հայաստանի գորգագործության կենտրոն: Նրանում արտադրված գորգերի փառքն այնքան մեծ էր, որ արաբ-պարսկական «կալի» բառը գորգ, առաջացել է քաղաքի արաբական անունից: Հենց այս արշավի ընթացքում Էրզրումն այցելեց Ա. Ս. Պուշկինը, («Ճամփորդություն Արզրում»-ում): Շրջանում կար չորս հարյուր հայկական եկեղեցի և ավելի քան հիսուն վանք:

*Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար
Բնակիչները հայ, մոտ քսան հազար,
Իրանք սնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի՛ աշեցեք:*

Գուսան Ջիվանի

Թուրքմանչայի պայմանագիր Պայմանագիրը ստորագրվել է 1828 թվականի փետրվարի 22-ին Թուրքմանչայ գյուղում և հաստատել Ռուսաստանի տարածքային ձեռքբերումները 1813 թվականի Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Թուրքմենչայի հաշտությամբ Ռուսաստան մեկնեցին նաև Էրիվանի և Նախիջևանի խանությունները, մինչդեռ պարսկական կառավարությունը պարտավորվեց չմիջամտել հայերի Ռուսաստանում վերաբնակեցմանը: Խաղաղության պայմանագրին զուգահեռ կնքվել է առևտրային պայմանագիր, ըստ որի ռուս վաճառականներն իրավունք են ստացել ազատ առևտուր իրականացնել ամբողջ Իրանում: Հաստատվեց Կասպից ծովում նավատորմը պահելու Ռուսաստանի բացառիկ իրավունքը: Պայմանագիրը խաթարեց Մեծ Բրիտանիայի դիրքերը Պարսկաստանում: Պայմանագիրը հատկապես կարևոր էր հայ ժողովրդի ճակատագրի համար, որի մի մասը ստորագրման արդյունքում տեղափոխվեց Անդրկովկաս:

Համաձայնագրի պայմանների մշակմանը մասնակցել է ռուս գրող և դիվանագետ Ալեքսանդր Գրիբոեդովը:

Լազարև Լ.Բ. 1827 թվականին գեներալ Բ.Ֆ. Պասկևիչի մոտ նշանակվել է հատուկ հանձնարարություններով պաշտոնատար անձ: Լազարևն իր տրամադրության տակ ուներ մի քանի սպաներ, պաշտոնյաներ և կազակների մի փոքր ջոկատ: Միևնույն ժամանակ, Լազարևը ստիպված էր շատ շտապել: Նա քաջ գիտակցում էր, որ թեև պայմանագրով մեկ տարի էր տրվում վերաբնակեցման համար, բայց հենց որ ռուսական զորքերը լքեին իրենց գրաված պարսկական հողերը, ամեն ինչ շատ ավելի կբարդանա: Երեքուկես ամսում ավելի քան ութ հազար ընտանիք (մոտ քառասուն հազար մարդ) անցավ Արաքսից այս կողմ:

Ծիրանի գլխարկը. Կարդինալի կոչում ստանալուց մեկ տարի անց Աղաջանյանը ստացավ «Տասներորդ ծիրանի գլխարկի» կոչումը, այսինքն՝ սև գլխարկի փոխարեն իրավունք ստացավ կրելու ծիրանագույն գլխարկ: Այս կոչումը նրան տվել են Մխիթարյանները, որոնց մեծ հարգանքը վայելում էր (նրան թաղել են 250 մխիթարյանցիների ուղեկցությամբ): **Մանուշակագույն կրողներ** կարմիր, կարդինալի գլխարկ, Հռոմեական կաթոլիկ եկեղեցու կարդինալների զգեստների հիմնական խորհրդանիշներից մեկը: Սկզբում միայն գլխարկն էր խորհրդանշում մարդուն կարդինալի կոչում նշանակե-

լը, սակայն հետագայում կարդինալների բոլոր զգեստները դարձան կարմիր, և կարդինալները սկսեցին կոչվել մանուշակակիրներ: «Կարդինալի գլխարկ տալ» կամ «կարդինալի գլխարկ ստանալ» ասացվածքները նշանակում էին կարդինալի արժանապատվության բարձրացում:

Կամերլենգո (Camerlengo lat. camerarius) առաքելական պալատի կառավարիչ, ունենալով կարդինալի պարտադիր կոչում, տնօրինում է Սուրբ Աթոռի ունեցվածքն ու եկամուտները: Պապի մահից հետո նա դառնում է կարդինալների քոլեջի ժամանակավոր ղեկավար, հավաքում է կոնկլավ և ղեկավարում գործերը մինչև նոր Պապի ընտրությունը:

Կոնկորդատ ամենից հաճախ այսպես է կոչվում Հռոմի պապի և պետության ղեկավարի միջև կնքված համաձայնագիրը վերջինիս տարածքում կրոնական կյանքի պայմանները որոշելու վերաբերյալ:

Կարմիր բրիգադները ստեղծվել են 1970 թվականի օգոստոսին և հիմնվել են Չեխոսլովակիայի պետական անվտանգության մարմինների (չեխ. Státní bezpečnost) և Պաղեստինի ազատագրման կազմակերպության աջակցության վրա: Նրանք իրենց նպատակ են դրել զինված պայքարի արդյունքում հեղափոխական պետության ստեղծումը և Բուլախայի անջատումը արևմտյան պետությունների դաշինքից՝ փրկագնի դիմաց առևանգելով հայտնի քաղաքական գործիչների, ինչը խմբավորման ֆինանսավորման հիմնական աղբյուրն էր: Ստեղծումից հետո առաջին տասը տարում Կարմիր բրիգադները կատարել են 14000 բռնություն: «Մորոյի գործը» բառացիորեն ցնցեց Բուլախան: Հայտնի քաղաքական գործիչը, որը օրը ցերեկով ահաբեկիչների կողմից գերի էր ընկել, երբ նա գնում էր դեպի խորհրդարան, 55 օր գտնվել է առևանգողների զաղտնի զնդանում, այնուհետև անխնա գնդակահարվել է:

Կովկասյան բյուրոն Կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշմամբ 1921 թվին Լեոնային Ղարաբաղն ընդգրկվել է նորաստեղծ Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Հետաքրքիր է, որ 1926 թվականի քարտեզի վրա «Խորհրդային մեծ հանրազիտարանում» ԼՂԲՄ-ը մեկ տեղում սահմանակից է Հայաստանին. Հետագայում, տարածաշրջանի մի շարք տարածքային վերափոխումների միջոցով, Ղարաբաղը միտումնավոր անջատվեց Հայաստանի Հանրապետությունից: 1930թ.-ից համապատասխանաբար ճշգրտվել են քարտեզները, որոնց վրա

Լաչինի միջանցքը սկսեց նշանակվել որպես Ադրբեջանի տարածք, իսկ ԼՂԻՄ-ը՝ առանձնացված Հայաստանից:

Հայ կաթոլիկներ Ցավոք, այսօր անտեսվում կամ գրեթե չեն հիշատակվում տարբեր դավանանքների այս համայնքի գործունեությունը, որն ունի բավականին մեծ ներուժ: Այդպիսի անտարբերությունը ակամա մեկուսացնում է նրանց ընդհանուր գործերից վերածելով փակ, եսակենտրոն հայ կրոնական համայնքի, որն, իհարկե, իրեն սպառելով, ընդհանրապես կղաղարի գոյություն ունենալ: Կաթոլիկ հայերի առջև կանգնած է ազգային ինքնությունը պահպանելու խնդիրը: Այս խնդիրը հնարավորինս լուծում են Մխիթարյան միաբանությունը, որոնք փորձում են պահպանել տարբեր երկրներում նրա ենթակայության տակ գտնվող դպրոցների ու գիմնազիաների անմահ գործունեությունը:

Այժմ հայ կաթոլիկ համայնքն ունի հետևյալ տեսքը. **Արևելյան Եվրոպայի թեմը** գրադեցնում է բավականին մեծ աշխարհագրական տարածք՝ ներառյալ Հայաստանի, Վրաստանի և հետխորհրդային երկրների բոլոր հայ կաթոլիկները: Առաջնորդի նստավայրը Գյումրիում է: Հայաստանում կաթոլիկների թիվը 180 հազար է, հիմնականում նրանք բնակվում են հանրապետության հյուսիսային շրջաններում, մասնավորապես՝ Ծիրակի, Տաշիրի և Լոռու մարզերում, մասամբ՝ Երևան, Գյումրի և Արթիկ քաղաքներում:

Վրաստանի Սամցխե-Ջավախքի շրջանի հայաբնակ գյուղերում՝ Նինոծմինդա, Ախալքալաք, Ախալցխա, ապրում է շուրջ 50 հազար կաթոլիկ հայ: Ջավախքի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատճառով թե՛ տարածաշրջանի ողջ հայության, թե՛ կաթոլիկների շրջանում արտագաղթի տոկոսը բարձր է:

Բաթումիում և Փոթիում նաև ապրում են կաթոլիկ հայեր, նրանք այնքան էլ շատ չեն, և չունեն կազմակերպված համայնք: Թբիլիսիում և Վրաստանի տարբեր շրջաններում ձևավորված երբեմնի ավանդական հայ կաթոլիկ համայնքներն այլևս գոյություն չունեն: Սա կաթոլիկ հայերին օտարելու վրացական իշխանությունների հետևողական քաղաքականության արդյունքն է:

Մոսկվայի հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչները Հայաստանից և Վրաստանից գաղթած և Ռուսաստանի տարբեր քաղաքներից մայրաքաղաք տեղափոխված կաթոլիկ հայեր են: Նրանք էլ են փորձում իրենց եկեղեցու շուրջը ինքնակազմակերպվել: Հայ կաթո-

լիկների փոքր խմբերը ապրում են Կրասնոդարի երկրամասում, Պսկովում, Ռոստովում, Աբխազիայում, Մոչխում, Ադլերում և այլ քաղաքներում, սակայն եկեղեցական ծեսեր չեն անցկացնում:

Լատինական Ամերիկայի առաքելական եպիսկոպոսություն

20 տարվա պատմություն ունեցող այս թեմը հիմնադրվել է 1989 թվականին Իռանեն Պողոս II պապի կողմից: Կենտրոնը գտնվում է Սան Պաուլոյում: Բացառությամբ Արգենտինայի, որն ունի առանձին եպիսկոպոսության կարգավիճակ, այս թեմում ընդգրկված են կաթոլիկ հայեր Լատինական Ամերիկայի բոլոր երկրներից, այդ թվում՝ Մեքսիկայից, որոնց ընդհանուր թիվը կազմում է 12000 մարդ: Հայ կաթոլիկների ամենակազմակերպված համայնքներն են Ուրուգվայում (Մոնտեվիդեո) և Բրազիլիայում (Սան Պաուլո):

Այստեղ հիմնված են մշակութային-թատերական, երիտասարդական և մարզական խմբակներ, երգչախմբեր: Համայնքային կյանքից մեկուսացված կաթոլիկ հայերի փոքր խմբերը ցրված են Հարավային Ամերիկայով մեկ (մասնավորապես՝ Վենեսուելայում, Պարագվայում, Մեքսիկայում), և նրանց մոտավոր թիվը դժվար է որոշել:

Լատինական Ամերիկայի Հայ Կաթողիկե թեմը

Հայ Կաթողիկե թեմը գտնվում է Բուենոս Այրեսում: Սա Սուրբ Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսությունն է, որը հիմնադրվել է 1989թ: Վատիկանի տվյալներով Արգենտինայում 16 000 կաթոլիկ հայ կա: Համայնքն ունի դպրոց՝ Մխիթարյան գիմնազիան, որն այս երկրում կեսդարյա պատմություն ունի: Թեմի ջանքերով լույս է տեսնում «Վարդանանք» հանրապետական տեղեկագիրքը, որն անդրադառնում է հայ կաթողիկե համայնքի մշակութային կյանքին և խնդիրներին: Գործում են նաև արվեստի, պարարվեստի ուսուցման շրջանակներ, ստեղծագործական միավորումներ: Անկախ նրանից, թե վերոհիշյալ գործոնները որքանով են նպաստում համայնքի պահպանմանը, այնուամենայնիվ, միանգամայն իրատեսական է թվում, որ Արգենտինայի հայ կաթոլիկ համայնքն ունի բոլոր նախադրյալները՝ ձուլվելու կաթոլիկ արգենտինացիների հետ:

Իրաքի փոքրաթիվ կաթոլիկ համայնքը

ձևավորվել է 17-րդ և 18-րդ դարերում: Արաբալեզու իրաքահայ կաթոլիկ համայնքի կենտրոնը միշտ հիմնականում գտնվել է Բաղդադում, որտեղ գործում է համայնքին պատկանող եկեղեցի: Այստեղ առաջադրանքներ

րը փոքր-ինչ տարբեր են, դա պայմանավորված է իրաքյան պատերազմով: Մինչ պատերազմը հայ կաթոլիկների թիվն անցնում էր երկու հազարից: Պատերազմի տարիներին Բաղդադի Հայ Կաթողիկե եկեղեցին իրաքահայերի համար (անկախ կրոնական պատկանելությունից) հավաքատեղի է ծառայել:

Մի քանի կաթոլիկ հայերի սպանությունը պատճառ դարձավ, որ մոտ հարյուր արաբախոս կաթոլիկ հայեր գաղթեն Սիրիա և Լիբանան: Հայկական աշխարհը, և ոչ միայն, ուշադիր հետևում էին Սիրիայում տեղի ունեցող իրադարձություններին, որտեղ ընդդիմությունը հալածում էր քրիստոնյաներին: Իսկ լրատվամիջոցներում տեղեկություններ եղան, որ Թուրքիան քրիստոնյայի գլխի համար սիրյացի գրոհայիններին վճարում է 1000 դոլար, իսկ հայի համար – 5000: Գուցե դա ճիշտ չէ, բայց և հնարավոր է, կամ ճիշտ է, միայն թե թվերը կարող են տարբեր լինել:

Թուրքիա Ստամբուլի արքեպիսկոպոսություն

Երբ 1830 թվականին, ըստ սուլթան Մահմուդ II-ի հատուկ մանիֆեստի, Օսմանյան կայսրության տարածքում ապրող կաթոլիկ հայերը ճանաչվեցին որպես առանձին միլիթ (համայնք), իհարկե, հայերի միջև պառակտում մտցնելու համար, Կոստանդնուպոլսում ստեղծվեց թեմ, որը գործել է ավագ թեմի կարգավիճակով:

Ստամբուլում, որն այժմ հայ կաթոլիկների հոգևոր կենտրոնն է, կա 12 հայ կաթոլիկ եկեղեցի, մեկ եկեղեցի կա Մարդին քաղաքում, որտեղ այլևս հայ կաթոլիկներ չկան: Միսիթարյան միաբանության ենթակայությամբ գործում են նաև տարրական ուսումնական հաստատություններ, տղաների և աղջիկների համար նախատեսված գիմնազիաներ: Մակայն Անկարայի հայ կաթոլիկները ներգրավված չեն համայնքի կյանքում և նույնիսկ եկեղեցի գնալու հնարավորություն չունեն: (Արեստակես Միմավոյան, «Նորավանք» ԳԿՀ):

«**Հայաստանն առանց հայերի**» Ռուսական պաշտոնական մամուլը ոտնձգությունների և հալածանքի արշավ է սկսել հայերի և նրանց ազատագրական շարժման դեմ: Կովկասում դրանով հատկապես հայտնի է դարձել «Կավկաս» պաշտոնաթերթի խմբագիր Վ.Լ. Վելիչկոն: Նա աշխատել է արքայազն Ս. Գոլիցինի օրոք, որը 1896–1904 թվականներին եղել է Կովկասի ղեկավարը և հայտնի է իր ասացվածքով. «*Ես բանը կհասցնեմ նրան, որ Թիֆլիսի միակ հայը Թիֆլիսի թանգարանում լցունված հայի խրտվիլակն է լինելու*»:

«**Հայկական նստավայրը Բուզարում** (Ջմառ) քահանաների եղբայրությունն ունի մեծ գրադարան և աստվածաբանական ճեմարան, որը բացվել է 1771 թվականին: Բարձրագույն կրթություն կարելի է ստանալ Հոռումում՝ 1883 թվականին հիմնադրված Հայկական վարժարանում: Թուրքիայում հայ համայնքի կտրուկ նվազման պատճառով Հայ Կաթողիկե Սինոդը որոշել է պատրիարքարանը կրկին տեղափոխել Լիբանան (Բեյրութ), իսկ Կոստանդնուպոլսին (Ստամբուլ) տալ արքեպիսկոպոսության կարգավիճակ:

«**Հավատքի վարդապետության միաբանություն** Հռոմեական Կուրիայի ինը միաբանություններից ամենահինն ու գլխավորը (հայ կաթոլիկ գրականության մեջ կոչվում է «Արևելքի սուրբ միաբանություն»): Միաբանության խնդիրներն էին՝ միսիոներների պատրաստումը, միսիոներին հոգևոր գրականություն տրամադրելը և քրիստոնեական առաքելությունը քաղաքական նպատակներով օգտագործելու դեմ հակադրվելը: Հռոմեական Կուրիայի ինը ժողովներից մեկը զբաղվում է ավետարանչությամբ և միսիոներական աշխատանքով: Միաբանության ղեկավարը կարդինալ պրեֆեկտն է:

«**Հունական կաթոլիկ** եկեղեցի անվանումը ներմուծվել է կայսրուհի Մարիա Թերեզայի կողմից 1774 թվականին՝ այն տարբերելու Հռոմի կաթոլիկ և հայ կաթոլիկ եկեղեցուց:

«**Հավաքաբ.** Թիֆլիսի հնագույն թաղամասերից մեկը: Տարածքի ստույգ տարիքը հայտնի չէ, սակայն հիշատակումները տարածքի մասին թվագրվում են ավելի քան 300 տարի առաջ: Նախկինում այն եղել է հայ մտավորականության կենտրոնը Վրաստանի տարածքում:

Մեծավորն այստեղ ավագն է:

«**Մոնտինի Ջովանի**, Պողոս VI պապ, (1963–1978): Հռոմի Պապ Իոաննես 23-րդը (Ռոնկալլին) առանց նրա հետ խորհրդակցելու ոչ մի կարևոր որոշում չի կայացրել: Ջարմանալի չէ, որ Իոաննես XXIII-ի մահից հետո տեղի ունեցած կոնկլավը պատմության մեջ ամենակարճերից մեկն էր. արդեն երկրորդ օրը Մոնտինին ընտրվեց Պապ և վերցրեց Պողոս VI-ի անունը: Պողոս VI-ը ճանապարհորդեց աշխարհով, իրենից առաջ ոչ ոք այդքան չի շրջագայել: Հինգ մայրցամաքներ այցելեց նա՝ վաստակելով «Պապ ուխտավոր» մականունը: Այս ճամփորդություններից մեկի ժամանակ նա մահացավ:

Մոխրեր (Նառխրերի). Ախալցխայից 14 կմ հեռավորության վրա գտնվող ավելի քան 300 ընտանիք, համայն հայություն ունեցող գյուղ, որը հիմնադրվել է 1828-1829 թթ. Մոխրեբցիների նախնիները տեղափոխվել են Էրզրումի վիլայեթից (Արծաթի և Կամպիր գյուղերից, այդ գյուղերից հիմնադրվել է նաև Ջավախքի Ալաստան գյուղը, կանայք քարերով շքել են «նեերին», որ եկեղեցին չփակեն:

Միկոյան Անաստաս Միկոյանն իր քաղաքական կարիերան սկսել է Լենինի կենդանության օրոք և թոշակի անցել միայն Բրեժնևի օրոք: Գյուղական դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Թիֆլիսի ճեմարանը: 1914-ի վերջին Անաստաս Միկոյանը ընդգրկվում է Անդրանիկի հայ կամավորական ջոկատում, որից հետո մինչև 1915-ի գարուն կռվում է թուրքական ճակատում, սակայն մալաքիայի պատճառով թողնում է բանակը: 1916 թվականին ընդունվել է Էջմիածնի ճեմարան: Թիֆլիս վերադառնալուց հետո նա միացավ այնտեղի ՌՄԴԿ-ին... ղեկավար պաշտոններ զբաղեցրեց և ինչ-որ հրաշքով փրկվեց Ստալինի մնացած համախոհների ճակատագրից: Միկոյանն էր, ով այդ տարիներին ներմուծեց գովազդը: Նա հանրահայտ բանաստեղծներին հրավիրեց Մայակովսկու պես գրավիչ գովազդով հանդես գալու:

Խորեն Մուրադբեկյան Թիֆլիսսկի ծնվել է 1873 (Թիֆլիս). Սովորել է Ներսեսյան ճեմարանումում, ապա Շվեյցարիայում (որտեղ նրա դասընկերն էր Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը), հետո Ռուսաստանում և Գերմանիայում: Խրիմյան Խայրիկի օրոք երգեցողություն է դասավանդել Ներսիսյան դպրոցում: 1903 թվականին Խորեն վարդապետը դիմադրել է եկեղեցական ունեցվածքի բռնագրավման և ծխական դպրոցների փակման մասին Նիկոլայ II-ի հրամանագրին և արքայի վրա Օրյոլի գավառ, որտեղից վերադարձել է 1905 թվականին: Ցարական Ռուսաստանը տարօրինակ օրենքներ ուներ ի տարբերություն սովետական օրենքների. բանակ տանում էին 25 տարով, իսկ արքայում՝ 2-3:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զբաղվել է վիրավոր հայ զինվորներով և օգնել փախստականներին: 1932 թվականին Ազգային եկեղեցական խորհուրդը նրան ընտրում է Հայ եկեղեցու առաջնորդ: 1938 թվականի ապրիլի սկզբին ԳՊՀ հայ գործակալների կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսի սպանությունը անջնջելի բիծ է մեր պատմության վրա: Այդ ժամանակ էր, որ Անդր-

կովկասի ԳՊՀ փոխնախագահ Լավրենտի Բերիան Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Խանջյանին ուղղված նամակում առաջարկել է, ավելի ճիշտ, հրամայել է՝ իրենից կախված ամեն ինչ անել, որպեսզի «դաշնակցական» և «հակախորհրդային» Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը չընտրվի պատրիարքական գահին: 1937 թվականին հանրապետության բոլշևիկյան ղեկավարության կողմից պետական անվտանգության մարմինների առջև նպատակ էր դրվել Հայ առաքելական Եկեղեցու վերջնական ջաղջախումն ու լուծարումը: Գործողության իրականացումը վստահվել է ՆԳԺԿ գաղտնի քաղաքական վարչությանը: Եկեղեցին գլխատելու համար անհրաժեշտ էր սկսել համառ կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի լուծարումը:

Իսկ 1938 թվականի ապրիլին պատրիարք-կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը նահատակվում է: Պաշտոնական տվյալներով՝ նա մահացել է ապոպլեքսիկ հարվածից: Սակայն, ըստ պատրիարքի անձնական ծառայողի և կաթողիկոսի բուժող բժշկի վկայության, նրան խեղդամահ են արել:

Մուսուլինի երկար տարիներ Վատիկանը պայքարում էր իտալական պետության դեմ՝ ձգտելով վերականգնել Պապի աշխարհիկ իշխանության ինստիտուտը: Եվ այս բոլոր տարիներին Մուրբ Աթոռ բարձրացող յուրաքանչյուր հռոմեական քահանայապետ իրեն անվանում էր «*նեղացած մեկուսի և թշնամու ճամբարում գերի*»: Միայն 1929 թվականի փետրվարի 14-ին Վատիկանը կարողացավ հասնել անկախանալու ցանկալի նպատակին՝ Իտալիայի ֆաշիստական վարչակարգի հետ Լատերանյան համաձայնագրերի կնքման միջոցով, որոնք, որոշ հարցերի շուրջ փոփոխություններով, ուժի մեջ են նաև այսօր: Կազմավորվեց Վատիկան պետությունը, այն տեսքով, որով այն գոյություն ունի այսօր (նրա տարածքը 44 հեկտար է): Այսպիսով, «հռոմեական հարցը» փակվեց, և Մուսուլինին արժանացավ եկեղեցական բարձրագույն պարգևի՝ Քրիստոսի շքանշանի:

Մխիթարյան միաբանություն Մխիթարյան աբբայությունը հայ ոգու և մտքի պատմության ոսկե էջերից է: Հիմնադրել է 1712 թվականին Մխիթար Սեբաստացին: Նա նախատեսում էր Պապի գլխավորությամբ ստեղծել գրական և գիտական միաբանություն, որի անդամներն իրենց առջև նպատակ կդնեին բարձրացնել հայ ժողովրդի մշակութային մակարդակը և պահպանելին հայ գրչության հու-

շարժանները: Մխիթար Սեբաստացու աչքում Հռոմի հետ միությունը միայն նպատակին հասնելու միջոց էր, հոգու խորքում նա միշտ մնաց ազգային հայ եկեղեցու շատագուրը: 1717 թվականից նա հաստատվել է Վենետիկի մոտ գտնվող Սուրբ Ղազար կղզում՝ Սան Լազարո դելլի Արմենիում, որը Սեբաստացին ստացել է վենետիկյան տիրակալներից: Շքանշանի հիմնական գործունեությունը հայ ժողովրդի մշակութային զարգացումն է, հայագիտության զարգացումը, հին հայ գրչության լեզվի ու հուշարձանների պահպանումը, քարոզչությունը Մերձավոր Արևելքի երկրներում: Բացի այդ, նպաստել է նաև Մերձավոր Արևելքում Վատիկանի ազդեցությանը:

Ներսիսյան հոգևոր ակադեմիան Բացվել է 1824 թվականին Թիֆլիսում, Ներսես Ե Աշտարակեցու պատրիարք-կաթողիկոսի ջանքերով, քաղաքի առաջին հանրակրթական միջնակարգ դպրոցը: (գոյություն է ունեցել մինչև 1921 թվականը): Որոշ ժամանակ անց այն վերածվել է Ներսիսյան հոգևոր ճեմարանի: Հետաքրքիր է, որ Ներսեսյան ճեմարանը դարձավ հայ թատրոնի ծննդավայրը: Դպրոցի առաջին շրջանավարտներից էին Խաչատուր Աբովյանը և Ստեփանոս Նազարյանը, ստացել է դոկտորի կոչում Ֆիրդուսու «Շահնամե» պոեմի վերլուծության համար: Մուսկվայում հրատարակել է «Յուսիսայալ» ազդեցիկ ամսագիրը, քանի որ մեծ ազդեցություն ունեցավ հայ հասարակական մտքի զարգացման վրա: 1924 թվականին դպրոցը հանդիսավոր կերպով նշեց իր 100-ամյակը: Բայց այդ տարին վերջինն էր նրա համար: Ավելի քան 2 հազար մարդ դարձան նրա շրջանավարտները՝ հայ կրթական փայլուն համաստեղությունը:

Նվիրակ Սուրբ աթոռի դիվանագիտական ներկայացուցիչ: Նվիրակը երկակի դեր է կատարում: Նախ, նա կապ է ապահովում Հռոմի և Եկեղեցու միջև, պատրաստում է դոսյե եպիսկոպոսի պաշտոնի թեկնածուների վերաբերյալ: Եվ որպես Սուրբ Աթոռի դեսպանատուն, նվիրատությունը ապահովում է Վատիկանի դիվանագիտական հարաբերությունները քաղաքացիական իշխանությունների հետ:

Փարիզում դը Գոլը Հռոմի պապից պահանջեց պաշտոնանկ անել 33 ֆրանսիացի եպիսկոպոսների, որոնք հայտնի էին նացիստների հետ իրենց համագործակցությամբ: Հակամարտությունը կարգավորելու համար անհրաժեշտ էր նոր նվիրակ: Ռոնկալիի միջնորդությամբ

յունը հաջող էր, եպիսկոպոսներից շատերը կարողացան մնալ իրենց պաշտոններում:

Սուրբ Պետրոս տաճարի գլխավոր ճակատի պատշգամբը, այսպես կոչված, օրհնության Սյունասարահ (լոջիա): Այստեղից Հռոմի Պապը դիմում է հրապարակում լցված հավատացյալներին, «Urbi et Orbi» – «Քաղաքին և աշխարհին» օրհնությամբ, ստանդարտ արտահայտություն, որը նախկինում բացում էր հռոմեական հռչակագրերը: Այժմ տերմինը օգտագործվում է պապական փաստաթուղթ նշելու համար:

Պասկևիչ Իվան Ֆեդորովիչ, (1782 – 1856). Գեներալ-ֆելդմարշալ

Պասկևիչը մարտական պատրաստության դպրոց է անցել 1806–1812 թվականների ռուս-թուրքական պատերազմի տարիներին, եղել է հաջորդական գլխավոր հրամանատարների աղյուսանտ (Ի. Միխեյլսոն, Ա. Պրոգորովսկի, Ն. Կամենսկի, արժանացել է կոմսի կոչման «Էրիվանսկի» անունով: «Աղյուսանտ գեներալ Պասկևիչի Ասիայում հայտնի Էրիվան ամրոցի կարևոր նվաճման ժամանակ Սարդար-Աբադի գրավման ժամանակ ցուցաբերած գերագանց քաջության, հաստատակամության և հմտության համար», նա պարգևատրվել է Գեորգի 2-րդ աստիճանի շքանշանով:

Էրիվանի գրավումից հետո Պասկևիչը վերցրեց Թավրիզը և պատրաստ էր հարձակվել Պարսկաստանի մայրաքաղաքի վրա և Թեհրանը համաձայնեց հաշտության: 1828 թվականի փետրվարին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Ռուսաստանը ստացել է Էրիվանի և Նախիջևանի խանությունները և Կասպից ծովում ռազմական դրոշ պահելու իրավունք:

Կարսի հրամանատարին նա վերջնագիր ուղարկեց՝ «Անմեղին խնայիր, անկարգին մահ, մտածելու մեկ ժամ ժամանակ», և կայագորը վայր դրեց գեներալը: Այնուհետև խլվեցին Ախալքալաքի և Ախալցխայի ամրոցները (Ադրիանապոլսի խաղաղություն):

Պատերազմի ավարտից հետո Պասկևիչը շարունակում է Կովկասում նահանգապետի պարտականությունները կատարել:

Իր մահից առաջ 1856 թվականին, Պասկևիչը պետական անվավեր կապիտալի ֆոնդին կտակել է հսկայական գումար՝ 50 000 արծաթյա ռուբլի: Այս գումարով նա խնդրել է ամեն տարի աջակցել հաշմանդամ ստորին շարքերի 200 հոգու՝ նախկին զինվորներին:

Ջավախք. «Մա իմ դրկտորական ատենախոսության թեման է Տարածքը հին ժամանակներից եղել է պատմական Հայաստանի մաս: Եվ միայն շատ կարճ ժամանակով XI դար և XII դարի առաջին կես, այն մտավ վրացական թագավորության կազմի մեջ: Բայց հետո ոչ միայն Ջավախքը մտավ Վրաստանի կազմ, մտավ ամբողջ հյուսիսային և կենտրոնական Հայաստանը, քանի որ հայերն իրենք էին ձգտում լինել ուժեղ Վրաստանի մաս, իսկ Ջաքարյան տոհմի մեր գորավարները միացյալ գորքերի գլխավորությամբ կովեցին սելջուկների դեմ: Վրացական պատմագրությունը կարծում է, որ հայերը Ջավախքում հայտնվել են միայն 1830 թվականին Արևմտյան Հայաստանից վերաբնակեցվելուց հետո: Ջավախքի մարզը Արևելյան Հայաստանի մաս է կազմում, և ջավախահայության զգալի մասը արնելահայեր են, ովքեր խոսում են արնելահայերենի բարբառով: Այս հայերին նախկինում անվանում էին «երլի», թուրքերեն «տեղական»: Նրանցից շատերը, հայտնվելով Էրզրումի վիլայեթից վերաբնակիչների մեջ, աստիճանաբար որդեգրեցին արևմտահայերենը: Միայն այն գյուղերում, որտեղ տեղի հայերը կոմպակտ էին ապրում, կարողացան պահպանել իրենց բարբառը...»

Ռայա Օսմանյան կայսրությունում, ցածր սոցիալական կարգավիճակով հատուկ կալվածք, որը ենթակա է բարձր հարկման՝ ի տարբերություն ասկերիների (զինվորներ և կառավարիչներ) առավել հեղինակավոր սոցիալական խմբի: Տասնութերորդ դարից սկսած, ոչ մուսուլման հպատակները (քրիստոնյաներ և հրեաներ) ներառված էին ռայայի մեջ՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից:

Միևող (Մուրբ Միևող) Հին Ռուսաստանում, ուղղափառ եկեղեցին կառավարող բարձրագույն հաստատություն. ներկայումս՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքին կից խորհրդատվական մարմին:

SIFAR 1956-ից հետո կտրուկ ակտիվացել է աշխատանքը ներքին գործերի նախարարության գաղտնի ծառայությունների և կառույցների ձախ ընդդիմության հետ: Գաղտնի տներում տեղակայված հատուկ ստեղծված ստորաբաժանումները ուշադիր հետևում և փաստաթղթավորում էին կառավարության և պետության գաղտնի գործերը: 1963 թվականին Ամերիկայի ԿԶՎ գաղտնի փաստաթուղթը նշում էր, որ մի քանի հազար քաղաքական գործիչների վերաբերյալ

իտալական քաղաքական ոստիկանության կողմից հավաքված դույնները գտնվում էին մասնավոր անձանց ձեռքում: անհատներ և կարող են օգտագործվել շանտաժի համար: ԿԶՎ-ի առաջարկությամբ նշանակվելուց հետո, որպես SIFAR-ի ղեկավար, գնեբրալ Դե Լորենցոյին, հատուկ ծառայությունը ստացել է զգալի ֆինանսավորում, համալրվել ժամանակակից թանկարժեք հատուկ սարքավորումներով, SIFAR-ի կողմից իրականացված ԿԶՎ-ի հատուկ հանձնարարականներից էր նաև տեղադրումը Հանրապետության Նախագահի և Հոմի պապի անձնական խոսակցությունները լսելու և ձայնագրելու տեխնիկայի մասին:

Գնեբրալ Դե Լորենցոյի «երկարակեցությունը» CIFAR-ի ղեկավարի պաշտոնում մեծապես ապահովվել է անհիմն, բայց հմտորեն բեմադրված և սնուցված գաղտնի ծառայության լուրերով Իտալիայի նախագահի ղեկավարին սպանելու ենթադրյալ դավադրության մասին: Մինչև 1960 թվականը CIFAR-ն այլևս ուներ ոչ թե հազարավոր, այլ 150,000 դույն պատգամավորների, սենատորների, արհմիությունների ակտիվիստների, կուսակցական առաջնորդների և բոլոր շերտերի պաշտոնյաների վերաբերյալ: Մոտ 4500 հոգևորականներ և եպիսկոպոսական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ են եղել «գործով հարուցվածների» մեջ: Այս աշխատանքի սկզբունքը հստակ ձևակերպված էր «Իմանալ ամեն ինչ բոլորի մասին»: Գործի համար տեղեկատվության հավաքագրման կարգի պարզաբանման մեջ ասվել է, որ պետք է դիտարկել բոլոր հարաբերությունները՝ ինչպես անձնական, այնպես էլ ընկերական, և վերը նշված ոլորտներում գործունեությունից բխող, այսինքն՝ քաղաքական, տնտեսական, մտավոր շրջանակների ներկայացուցիչների հետ: , ինչպես նաև անհատների ազգային շահերի համար կասկածելի կամ վտանգավոր:

Վատիկանի ռադիո իտալական դատարանը վճռել է, որ ռադիոկայանի հզոր հաղորդիչների էլեկտրամագնիսական ճառագայթումը, որը գտնվում է Հոմի հյուսիսային արվարձաններում, Մանտա Մարիա դի պատկերասրահում, անուղղելի վնաս է հասցնում մոտակա տների բնակիչների առողջությանը և քաղցկեղի մակարդակը զգալիորեն ավելացել է: Այնուամենայնիվ, չնայած Վատիկանը կարողացավ դադարեցնել դատավարությունը՝ վկայակոչելով այն փաստը, որ հաղորդիչները գտնվում էին Վատիկանին պատկանող

հողատարածքում, որը ենթակա չէ իտալական դատարանի իրավասությանը, այնուամենայնիվ կարողինալը ռադիոյի համադրողը. դատապարտվել է 10 օր ազատազրկման, իսկ Վատիկանը՝ դրամական տուգանքի:

Վրացականացում քանի որ հայերի մեծամասնությունը մերժեց կրոնը փոխելու պահանջը, շեշտը տեղափոխվեց հայերի ազգությունը փոխելու վրա: Այս քաղաքականությունը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակներում: Արդյունքում տեղի ունեցավ տասնյակ հազարավոր հայ կաթոլիկների «վրացականացում», այսինքն՝ դու չես փոխում քո դավանանքը, պարզապես գրում ես «վրացի»: Հետո կամաց-կամաց դեպի ուղղափառ եկեղեցու ծոցը:

Բազմաթիվ գյուղեր (դրանց ողբալի ցանկը կարելի է գտնել Ա. Միմալորյանի և այլ հեղինակների մոտ) մինչև 20-րդ դարի սկիզբը հաշվառվել են որպես հայ կաթոլիկ, բայց այսօր ամբողջովին վրացական են դարձել և ընդունել ուղղափառ հավատքը: Իսկ ուշագրավն այն է, որ արմատների նկատմամբ վերաբերմունքը կտրուկ բացասական է, ինչն անուղղակիորեն ապացուցում է տիտղոսավոր ազգի ազգային քաղաքականության փաստացի վիճակը:

Վրաստանը վրացիների համար Բիձինա Իվանիշվիլին Կ. Գամսախուրդիայից շատ հեռու չգնաց. «Մյստեղ, օրինակ, այստեղ մենք հայեր ունենք, և ես զարմանում եմ՝ նրանք հայրենիք ունեն մոտակայքում, և նրանք ապրում են այստեղ, ձեզ համար, հավանաբար, նման հարց չկա, բայց ինձ համար դա պարզ չէ»: Բիձինա Իվանիշվիլու հարցազրույցը «The New Times»-ի գլխավոր խմբագիր Եվգենյա Ալբացին: Այսինքն, ասենք, բոլոր ռուսները պետք է դուրս գնան Ռուսաստան: Իսկ Մառնեուլում աղբբեջանցիներ են ապրում, ինչպե՞ս նրանց մասին կասի: Դժվար է դա բացատրել վրիպախոսությամբ: Հայերի նկատմամբ վերաբերմունքը ամուր նստած է և նույնիսկ դժվարանում են թաքցնել... Բիձինայի գյուղում առաջ բոլորը Իվանյան էին...

Հավատքի քարոզչության սուրբ **Միաբանություն** Արևելքում կաթոլիկությունը տարածելու նպատակով Հռոմի պապ Գրիգոր XV-ը 1622 թվականին հիմնադրել է «Հավատքի տարածման սուրբ միաբանություն»: Հետագայում «Հավատքի տարածման միաբանությունը» ենթարկվեց Հայրապետական քաղաքային համալսարանին, որը

նախատեսված էր ապագա միսիոներներ պատրաստելու համար (այժմ դա Ժողովուրդների ավետարանական միաբանությունն է):

Ուրումի հույներ ուրում «Հռոմեական կայսրության հպատակ»: Մրանք այն հույներն են, ովքեր ձուլվել են թուրքերի հետ, բայց ժամանակ չեն ունեցել (ավելի շուտ, չէին ուզում դա անել) իրենց հավատքն ամբողջությամբ փոխել մահմեդականի: Շատ թուրքեր էլ ընդունեցին քրիստոնեական դավանանքը և սկսեցին իրենց անվանել ուրումի հույներ: Նրանց մոտ են էթնիկ խմբերը՝ Ղրիմի թաթարները, Պոնտոսի հույները: Ժամանակակից ազգագրության մեջ ուրումներին (կամ հունաուրումներին կամ հունա-թաթարներին) սովորաբար անվանում են հույների թյուրքալեզու խմբեր: Ուրումներն ուղղափառություն են դավանում: Ծալկայում ուրումները ժամանակին էթնիկ մեծամասնություն էին կազմում: 1926 թվականին Թիֆլիսում և շրջակա տարածքներում բնակվող 24000 հույներից ավելի քան 20000-ը թուրքախոս էին:

Թուրքիայից վտարված մոտ 27000 հույներ թուրքերենը ճանաչում են որպես իրենց մայրենի լեզու:

Քեսաբ գտնվում է 200-300 մետր հեռավորության վրա Թուրքիայի հետ Միրիայի սահմանին՝ այստեղ գտնվող տասնմեկ հայկական գյուղերից մեկի անունն է: 2011 թվականի տվյալներով Քեսաբում (քաղաքում) բնակվում էր 2500-3000 հայ: Հեռավոր անցյալում այս տարածքը եղել է Կիլիկյան թագավորության կազմում, ուստի, չնայած պատմության դրամատիկ շրջադարձերին, հայերն այստեղ ապրում են սեփական հողի վրա: Հայ կաթողիկե եկեղեցին գործում է նաև Քեսաբում, որը առաքելական և ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչների կողմից ընկալվում է որպես բացարձակ բնական և հանգիստ: Քեսաբի բոլոր բնակիչների համար գլխավորն այն է, որ նրանք բոլորը հայ և քրիստոնյա են, հետևաբար բոլոր երեք դավանանքների ներկայացուցիչներն ապրում են բարիդրացիորեն և խաղաղ հանգստանում նույն գերեզմանատանը: Սա չես գտնի այլ հայկական համայնքներում: Ավաղ, սրա հետ մեկ անգամ չէ, որ բախվել ենք՝ հայկական տարբեր եկեղեցիների ծխականները հրաժարվում են միմյանց հետ շփվել: Ի դեպ, Քեսաբի Ավետարանական եկեղեցին ժամանակին բավականին մեծ հողատարածք է գնել, որի վրա ամբողջ է կանգնեցվել, որտեղ թուրքերի ներխուժման դեպքում

կարող է թաքնվել ողջ բնակչությունը՝ անկախ կրոնական պատկանելությունից:

Իսրայել Օրի Ծնվել է 1658 թվականին Հայաստանի Միսիան գյուղում: Հայոց իշխաններից մեկի՝ մելիքների որդին: Իր պատանեկության տարիներին նա եղել է մի պատվիրակության կազմում, որը փնտրել է եվրոպական տերությունների աջակցությունը հայերի իրանական և թուրքական լծի դեմ պայքարում, եղել է Կոստանդնուպոլիսում, Վենետիկում, Փարիզում, Վիեննայում: Հետագայում ծառայել է ֆրանսիական բանակում, կապի մեջ է մտել Ֆրանսիայի բարձր քաղաքական շրջանակների հետ, որի ընթացքում անընդհատ բարձրացրել է հայ ժողովրդին օտար լծից ազատագրելու հարցը, սակայն հանդիպել միայն սառը անտարբերության: Գերմանիայում և Ավստրիայում արդյունքի չհասնելով՝ 1701 թվականին Օրին մեկնեց Մոսկվա: Իսրայել Օրիի կերպարը բավականին առեղծվածային է, ինչպես և նրա անսպասելի մահը: Եվրոպյան, ինչպես միշտ, մի կողմ քաշվեց, իսկ Ռուսաստանը հոգում էր իր օգուտներն ու առավելությունները:

Պավել Ֆլորենսկի (Հայր Պավել Ֆլորենսկի), ականավոր մտածող, մշակութաբան, բնագետ: Հետաքննության նյութերից՝ Պավել Ալեքսանդրովիչ Ֆլորենսկի (1882–1937), ռուս ուղղափառ քահանա, հանրագիտարանագետ, փիլիսոփա, աստվածաբան, ֆիզիկոս, մաթեմատիկոս, ինժեներ, հայտնի Օլգա Սապարովայի որդի, դարաբաղի հայերի հնագույն ընտանիքից, ավարտել է գիմնազիան ք. Թիֆլիսում և Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Չերքակալվել է 1928թ. մայիսին, Լենինգրադի մարզի հատուկ եղայկի որոշմամբ դատապարտվել է մահապատժի: Գնդակահարվել է 1937 թվականի դեկտեմբերի 8-ին:

Նրա մահվան մասին տարբեր վարկածներ կան: Նրանցից մեկի համաձայն՝ նա իր խղճուկ չափաբաժինները տվել է ուրիշներին և մահացել սովամահ նահատակվելով: *«Չեր պապը Ֆլորենսկին Սոլովկիում ամենահարգված մարդն էր՝ հանճարեղ, անբողոք, համարձակ, փիլիսոփա, մաթեմատիկոսն աստվածաբան: Ֆլորենսկու մասին իմ տպավորությունը, և սա նրա հետ եղած բոլոր բանտարկյալների կարծիքն է, բարձր հոգևորություն է, մարդկանց նկատմամբ բարեհաճ վերաբերմունք, հոգու հարստություն: Այդ ամենը ազնվացնում է մարդուն»*: (Ա.Գ. Ֆավորսկի):

Ֆրանկներ Սկզբում «ֆրանկ» բառը հայերի մեջ կապվում էր հայկական Կիլիկիայի տարածքով անցած խաչակիրների հետ: Հետագայում «ֆրանկ» բառը կապվում է ֆրանսիսկների վանական կարգից կաթոլիկ միսիոներների հետ, ովքեր 16–19-րդ դարերում քարոզել են Կիլիկիայում: Հայերի մի մասին ընդունելուց հետո այս բառը սկսել է նշանակել կաթոլիկ հայեր: Գրագիտության բավականին ցածր մակարդակի պատճառով Ախալցխայի շրջանի կաթոլիկ հայերից շատերն ունեին թույլ ազգային ինքնագիտակցություն և իրենց կրոնական ինքնությունը համարում էին իրենց ինքնագիտակցության ամենաբարձր մակարդակը՝ իրենց անվանելով «ֆրանկներ»:

Խոսա Ֆրանկ նրանք ապրում են Ալաստանի և Վարևանի գյուղերում, Նինցմիդայի քաղաքապետարան:

Օգտագործված աղբյուրներ և գրականություն

Ակիմով Բ. Միսիթարի կամ հայկական Վենետիկի ճանապարհը, Գիտություն և կրոն. 2001. – N7. – S. 15–16.

Amirkhanyan A. T. Լազարևների տան գաղտնիքները. Մ. – Ս., 1992 թ.

Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979 թ.

Արոյան Ս., Համառոտ պատմություն Հայ Կաթոլիկե Եկեղեցու,

Սր. Առաքյալ Էնդրյու, Երկխոսություն հավատքի և անհավատության մասին. Մոսկվա: 2004 (2-րդ խմբ.): 2007 թ

Ա. Հարությունյան Հայերն առանց հայոց լեզվի և միայն ծնողական գծով, «ԱԶԳ» թերթ, N 218, 04–12–2004թ.

Ջումբեր Կոպալիանի, պատմական գիտությունների դոկտոր, Դմանիսիի մշակույթի տան տնօրեն. «Մաքարթվելիս հանրապետություն», 11–12 հունվարի, 2011թ

Արևելյան քրիստոնեական եկեղեցիներ. Եկեղեցական–պատմական ձեռնարկ / խմբ. P.N. Talking – Մանկտ Պետերբուրգ, 1999 թ.

Գրիգոր Աղաջանյան. Հովվի ձայնը. հովվական նամակներ. Վենետիկ, 1967 (հայերեն):

Գրիգուվկիչ I. R. Papacy. 20 րդ դար

Իյինսկի Մ. Վենետիկյան Հայաստան // Իզվեստիա. – 1987. – 24 դեկտեմբերի.

Քազեմ–Բեկ Ա. Սահմանումներ Քահանա. Սինոդ Վատիկանի Երկրորդ ժողովի մասին 1963 թ. թիվ 1.

Քազեմ–Բեկ Ա II Վատիկանի ժողով. ծրագրեր և արդյունքներ. Մ., 1968

Կաթոլիկ հանրագիտարան Հանրագիտարանը համակողմանիորեն նկարագրում է Կաթոլիկ եկեղեցին. պարունակում է նաև հոդվածներ համաշխարհային մշակույթի տարբեր ասպեկտների վերաբերյալ, որոնք կապված են Կաթոլիկ եկեղեցու հետ, և հոդվածներ այլ քրիստոնեական եկեղեցիների և ոչ քրիստոնեական կրոնների ու փիլիսոփայությունների վերաբերյալ: Հոդվածների

գրալի շերտը նվիրված է Ռուսաստանում Կաթոլիկ եկեղեցու պատմությանը

Կաթոլիկություն, խմբ. Լ.Ն. Վելիկովիչ Մ., 1999:

Կաթոլիկ Հանրագիտարան. Հատոր 1, Մոսկվա, Ֆրանցիսկյան հրատարակչություն, 2002

Կարապետյան Ս., «Ջավախք», գիրք 9, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2006 թ.

Աբրահամ Կրետացի, Պատմություն, հետազոտական բնագիր, ներածություն և ներածական մաս, ռուսերեն թարգմանություն՝ Ն.Կ. Խորխանյանի, Եր., 1973,

Լալայան Ե., Երկեր, հատոր I, Եր., 1983,

Տ. Լորմաժյան Ստամբուլի հայ համայնք. անցյալ, ներկա, խնդիրներ

Մաղաքիա Օրմանյան. Հայոց եկեղեցու պատմություն.

Մամուլիա Գ., Վրաստանի պետական քաղաքականության հայեցակարգը տեղահանված և Վրաստան հայրենադարձված մեսիտերի նկատմամբ. Հասարակական–քաղաքական ամսագիր. «Կենտրոնական Ասիա և Կովկաս», թիվ 1(2) 1999 թ.

Մեյխսեթ–Բեկ Լ.Ս., Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Երևան, հ.2. 1936, էջ 34. Մեջբերված. Կարապետյանի կողմից

Նաիրի Գրիգորյան. Եկեղեցուց ավելին / NG–Religions – 2000. N 2 (49) 26 հունվարի.

Neihardt A. A. Հին Հունաստան. – Մ.: Պրավդա, 1991:

Լիդիա Օրլովա Կաթոլիկությունը կովկասյան առօրյաում, 10–06–2010,

Պետրոսյան Ա. Ֆրանգի. պատմա–ազգագրական հետազոտություն, www.mashtots.ru

Պիոն Հակոբյան Խոհեմության հրավեր, Էջմիածին 1993 թ.

Ռիչեյն Ա.–Շ. du Plessis. Քաղաքական կտակարան. Պետական–կառավարման սկզբունքները. – Մ.: Լադոմիր, 2008:

Ռիչեյն. Հուշեր. Մ. ԱՄՏ, Լյուքս, մատենաշար «Պատմական գրադարան», 2008

Roberson R. Eastern Christian Churches. Սանկտ Պետերբուրգ, 1999 Միմպոզիում, 2006 թ

Մեթյան Ն. Կարդինալ Գրիգորի Պետր Աղաջանյան. Կյանքեցործ. Գրումկլա, 1967–68, էջ. 1–73 (հայերեն)

Օսիպովա I. «Թաքցրուինձրոխացերիմեջ. ԿաթոլիկեկեղեցուհալածանքըՆՍՀՄ-ում», Մ., 1996 Վ.

Օվյան Վ., Ա. Սիմավորյան Հայերի կրոնական և դավանանքային կողմնորոշումը Ռուսաստանի Դաշնությունում. Վ., Նորավանք ԳԿՀ 201

Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ Կաթողիկեկեղեցու պատմություն, Ջավախքահայության միջանկիսարգեր, Եր., 2009:

Սուրմանեկ Ծ. Վատիկանի Երկրորդ ժողովից հետո կաթոլիկության զարգացման ընդհանուր միտումները. Մ., 1987

Տոկարև Ս.Պ. Կրոնը աշխարհի ժողովուրդների պատմության մեջ. – Մ., 1990:

Ումբերտո Էկո Վարդի անունը Պեր. իտալերենից: Է. Կոստյուկովիչ. Սանկտ Պետերբուրգ: Միմպոզիում, 2007 թ

Ումբերտո Էկո, Կարդինալ Martini (ռուս.) Երկխոսություն հավատքի և անհավատության մասին», BBI, 2011, «Երկխոսություն» շարք:

Ումբերտո Էկո Կոզին նախօրեին (իտալերենից): Կոստյուկովիչ. SPb.: Կարողեք կարդալ.

http://www.erlib.com/%D0%A3%D0%BC%D0%B1%D0%B5%D1%80%D1%82%D0%BE_%D0%AD%D0%BA%D0%BE%D0%9E%D1%81%D1%82%D1%80%D0%BE%D0%B2_%D0%BD%D0%B0%D0%BA%D0%B0%D0%BD%D1%83%D0%BD%D0%B5/0/

Չարնայա Ջուլիա Նամակագրությունից. Պեկին–Տորոնտո. 09.09.2010թ

Շախնազարյան Ն., Կրասնոդարի երկրամասի հայերը, Տեղեկատվական մեթոդական նյութերի ժողովածու, Կրասնոդար, URRC, էջ. 36, 2008

Կարապետյան Ս., Ջավախք, Երևան, 2006, էջ 502

Ա.Սանոսյան, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918–ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992

Ս.Ս. **Չուռնաջյան:** Ջավախք : Ժամանակագրություն, Ակնարկներ Ախալքալաքի ամբողջական պատմության Խմբ. Հ. Մելքոնյան. – Երևան, 2002

Վ. Դարբինյան Նորշեն, Օղալթեփլա Երևան, 2003

Հռոմկլայ Պարբերաթերթ ԼԵԻՈՆԵԱՆ ժառանգ., Հոտմ 1967–1968

Հռոմկլայ Պարբերաթերթ ԼԵԻՈՆԵԱՆ ժառանգ., Հոտմ 1970

Andrew Greeley, The Making of the Popes, 1978, The Politics of Intrigue in the Vatican, Kansas City, 1979

Bruce Duncan Crusade Or Conspiracy: Catholics and the Anti-Communist Struggle in Australia. UNSW Press, 2001, 491 p

Վերջերս հայտնաբերվեց «**Փառահեղ Սուրբ Պատրիկի քաղաքը**» վավերագրական ֆիլմը: Վավերագրական ֆիլմ է նկարահանվել կարդինալ Պիետրո Աղապանյան Գրեգորիոյի (պապական լեզատա) այցի մասին, որը 1961 թ նոր լույս սփռեց Իռլանդիայի վրա: Երաժշտության, կինոյի կամ սպորտի աշխարհից հայտնիների և այլ հայտնի դեմքերի փոխարեն ամբոխի զարդարանքը մեծ թվով պապական և կաթոլիկ քահանաներ էին, որոնք կազմում էին պապական շքախումբ: «Այս տարվա ամենակարևոր իրադարձությունը պապական պատվիրակ, կարդինալ Պիետրո Աղաջանյան Գրեգորիոյի այցն էր Իռլանդիա: Սա երկար Սուրբ Պատրիկի տոնն էր, ամենաերկարը երբևէ տեսած այստեղ»: Ի տարբերություն ավելի ուշ ժամանակների, սրբերի տոնի շքերթներով և հրավառությամբ, այս ննակատարությունները տևեցին մի ամբողջ տարի:

Հղումներ

Կարդինալ Աղաջանյանի կայքը Cardinale Gregorio Pietro XV Agagianian Կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաճանեան (հիմնականում լուսանկարներ)

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02JanFDTR9m3v8gBUJobvV4jgEtiL5OqMLiVfK7m4i2XeLPTd2u99CfXjgEsvj11TSI&tid=102416041476631

Ա. Սմիրնովա Պիոս XII–րդ պապը և ֆաշիզմը (Պապի փաստաթղթերի և գործողությունների վերլուծություն Գերմանիայում Հիտլերի իշխանության տարիներին.

http://www.apologia.ru/Vatikan_i_fashizm/Smirnova-Papa_Pij_XII_

Արեստակես Սիմավորյան Ռուսաստանում Հայ Կաթողիկե noravank.am – 24/12/2010

<http://www.sclj.ru/news/detail.php?ID=2907>

http://religion.ng.ru/people/2010-10-06/6_catolicism.html

<http://www.hierarchy.religare.ru/h-uniat-armcatobr.html> Հայ Կաթողիկե եկեղեցու ծես

<http://www.hierarchy.religare.ru/h-aincvost-armobr.html> Հայ Առաքելական Եկեղեցու ծես

Պավել Ֆլորենսկի http://www.solovki.ca/gulag_solovki/florenski.php

http://www.solovki.ca/gulag_solovki

Ա. Հարությունյան, Հայերն առանց հայոց լեզվի և միայն ծնողական գծով, «ԱԶԳ» թերթ, N 218, 04-12-2004թ.

Ալեքսեյ Տոլպիգո Ինչպես են պատրաստվում Հռոմի պապերը. http://www.analitik.org.ua/author/42514458aab07/pagedoc3432_1/

Հայ կաթոլիկ եկեղեցին Ռուսաստանում <http://www.armeniancatholic.ru/en/index.html>

Ուղղափառ հանրագիտարան. Հոդված/Article «Հայկական ծես» <http://www.pravenc.ru/text/76130.html>

Մխիթար Մերաստացի (Մերաստիան) <http://kolibry.astroguru.com/01130606.htm>

S. Լորնապոլյան, Ստամբուլի հայ համայնք. Անցյալ, ներկա, խնդիրներ, <http://www.noravank.am>

Էդուարդ Աբրահամյան Վրաստանի քաղաքականության որոշ ասպեկտներ կաթոլիկների նկատմամբ

Հայ Կաթոլիկ Դատրիարքների Պատկերասրահ <http://www.armeniancatholic.ru/en/index.html>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
Առաջին ընթերցողի նախաբանը.....	6
Գլուխ առաջին	9
Գլուխ երկրորդ.....	14
Գլուխ երրորդ.....	22
Գլուխ չորրորդ	32
Գլուխ հինգերորդ	38
Գլուխ վեցերորդ.....	40
Գլուխ յոթերորդ	51
Գլուխ ութերորդ.....	53
Գլուխ իններորդ.....	58
Գլուխ տասներորդ.....	69
Գլուխ տասնմեկերորդ	72
Գլուխ տասներկուերորդ	82
Գլուխ տասներեքերորդ	85
Գլուխ տասնչորսերորդ.....	97
Գլուխ տասնհինգերորդ.....	104
Գլուխ տասնվեցերորդ	109
Գլուխ տասնյոթերորդ.....	112
Գլուխ տասնութերորդ	117
Գլուխ տասնիններորդ	126
Գլուխ քսաներորդ	140
Գլուխ քսանմեկերորդ	154
Գլուխ քսաներկուերորդ	164
ՀԱՎԵԼՎԱԾ	203
Օգտագործված աղբյուրներ և գրականություն	205
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ.....	208


 Գրականության հայկական կենտրոն
 Երևան, Կոմիտասի պող. 10
 Հեռ. 49 53 22 74
 Էլ. փոստ՝ info@armenianpress.am

ԳՈՀԱՐ ՌԵՏՈՒՆԻ

ՀՌՈՍԻ ՓՐԿՎԱԾԸ
ԿԱՐԴԻՆԱԼ
ԳՐԻԳՈՐ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հրատարակիչ-տնօրեն՝ Ռուզան Սահակյան
Թարգմանությունը՝ հեղինակային
Խմբագիր և սրբագրիչ՝ Անի Փաշայան
Ձևավորումը է էջադրումը՝ Գևորգ Շառոյանի

Ստորագրված է տպագրության՝ 26.11.2022:

Չափսը՝ 60 x 84 1/16:

Տպագրությունը՝ օֆսեթ: 14.75 տպ. մամուլ:

«Գևորգ- Հրայր» ՍՊԸ

ԼՈՍԱԿՆ

Հրատարակչություն

Երևան, Գր. Լուսավորչի 6

Հեռ.055-52-79-74

Էլ. Փոստ՝ Lusakn@rambler.ru

8(47.925

72-5

h2



Ձեզ ենք ներկայացնում բազմաթիվ ստեղծագործությունների, թարգմանությունների, արձակի և պոեզիայի ժողովածուների, պատմական էսսեների, այդ թվում՝ հայտնի հայրենակիցների կերպարները բացահայտող բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ Գոհար Ռշտունու հերթական գիրքը:

Գրված է ֆրանկների, Հայ առաքելական եկեղեցու մայր ճյուղից նրանց բաժանման պատմության մասին: Նա խոսում է, ազգությամբ ախալցխացի, հայ կաթոլիկների Պատրիարքի մասին, ով ընտրվում էր Հռոմի պապ, բայց ավա դ: Երկու երկրների հզոր հետախուզական ծառայությունները այլ կերպ էին դատում...

Գոհար Ռշտունու գիրքը գեղարվեստական է՝ հիմնված է ստույգ փաստագրական փաստերի ու նորերս պատահած իրադարձությունների վրա: Ընթերցողը ընկղմվում է դարի բազմաթիվ իրադարձությունների հորձանուտը և կարող է շատ ճանաչողական տեղեկություններ վերցնել այս գրքից:

ISBN 978-9939-899-61-9



9 789939 899619